

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >

1. ԽԱԶԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ Իրավական ուսայիզմի ձևավորումը և զարգացումը ԱՍԵ-ում	2
2. ՀԱՍՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ Կրթության իրավունքի միջազգային համընդհանուր կոնվենցիոն երաշխիքները	11
3. ԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ազգային անվտանգության խնդիրները արդի գլոբալացվող աշխարհում	20
4. ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ Օրենք-օրենսգիրը կողիզիոն փոխհարաբերության հիմնախնդիրը՝ ՀՀ իրավական համակարգում: Մեկնարանանան լուծումներ	24
5. ՆԵԼԼԻ ԱՌԱՋԵԼՅԱՆ Անձի արժանապատվության սահմանադրափական բովանդակությունը	31
6. ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի հասկացությունը և կառուցվածքը	37
7. ԱՆՆԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ Ապօրինությունը որպես առևտրային կաշառքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ	43
8. ՍԻՄՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ Նորույթը որպես գյուտի արտոնագրառունակության պայման	49
9. ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում	53
10. ՀՈՐԳԵՆ ԱՓՐԻԿՅԱՆ Организационно-правовая модель Конституционного Суда РА (Сравнительный анализ)	59
11. ՄԱՐԻԱՄ ԷՎՈՅԱՆ Анализ законодательного регулирования института приобретательной давности в ряде зарубежных стран	65
12. ԿԱРИՆԱ ՕԳԱՆԵՍՅԱՆ Систематичность как признак предпринимательской деятельности	75
13. LILIT YEREMYAN The influence of development and use of robotic technologies on regulations of international humanitarian law (In the light of protection of civilians)	82
14. ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Հակակոռուպացիոն ռազմավարության արդյունավետությունն ու անշրջելիությունը	88

ԽԱԶԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Երևան քաղաքի Ազագինյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասուրյան դատարանի աշխատակազմի ղեկավար Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ



ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՄՆ-ում

Իրավական ռեալիզմի (legal realism) հայեցակարգը արմատական վերափոխում մտցրեց ամերիկյան իրավունքի տեսության և պրակտիկայի մեջ:

Իրավաբանական ռեալիզմի հայեցակարգը ձևավորվել է ԱՄՆ-ում 20-րդ դարում՝ սոցիոլոգիական իրավագիտության ազդեցության ներքո: Ընդհանուր առմանք իրավաբանական ռեալիզմն իրենից ներկայացնում է իրավունքի ուսումնասիրության սոցիոլոգիական և հոգեբանական սկզբունքների վրա հիմնված հասուկ դոկտրին, որը հակադրվում է իրավաբանական պողիտիվիզմին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պողիտիվիզմի կողմնակիցները դատական գործընթացը դիտարկում են լոկ որպես կոնկրետ գործի հանգամանքները վերացական նորմերով որակելու տրամաբանական միջոցառում: Մինչդեռ ռեալիստները հիմնավորում են, որ դատական գործունեությունն ունի առավել բարդ բնույթ, քան ներկայացնում էն ձևական-դոգմատիկ իրավագիտության հետևորդները:

Ինչի՞ հանգեց ամերիկյան իրավագիտությունը 1920-ական թվականների վերջին, երբ ասպարեզ իջավ բավականին արմատական տրամադրված երիտասարդ գիտնականների մի ամբողջ աստղաբույլ, ովքեր պայմանականորեն միավորվում են իրավական ռեալիզմի շարժման մեջ (legal realism movement): Փոքենք ամփոփել այս բանավեճը և ձևակերպել այն հիմնական թեզիսները, որոնք առաջարկվել են իրավական ռեալիստների շարժման կայացման ժամանակ:

Առաջին՝ իրավունքի և իրավաստեղծման՝ որպես հասարակական կոնկրետ տնտեսական և էքիվական նպատակների ձեռքբերման միջոցի գործիքային, պրագմատիկ ըմբռնումը տարբեր շահերի և արժեքների հավասարակշռման միջոցով, ոչ թե որպես ինքնավար համակարգի, որը գոյություն ունի իր մեջ և իր համար:

Երկրորդ՝ պողիտիվ իրավունքի դիմամիկայի և հասարակական-սոցիալական, տնտեսական

կամ մշակութային համատեքստում փոփոխություններից նրա կախվածության գիտակցում:

Երրորդ՝ գոնե խնդրահարույց գոտիներում դատական իրավաստեղծման անխուսափելիության ճանաչումը և ղեկարատիվ տեսության՝ որպես երեսպաշտ ֆիկցիայի տապալումը:

Չորրորդ՝ ինչպես պողիտիվ իրավունքում, այնպես էլ օրենքի մեկնարաննան և նախադեպերի կիրառման դեպքում դատարանի կողմից որոշման կայացման ժամանակ քաղաքական-իրավական արժեքներից ու պատկերացումներից լիակատար տարանջատման անհնարինության մասին գաղափարը: Վեճերի լուծման ժամանակ սյարդ ֆորմալ տրամաբանության և դոկտրինաների ու հասկացությունների միջոցով ձևավորված իրավական արստրակուլ կոնցեպցիաների հետ մանկավորացիաների կիրառմանը դատական գործառույթի հանգման անհնարինությունը:

Հինգերորդ՝ stare decisis սկզբունքի օգտակարության ճանաչումը, բայց դատարանի կողմից նախադեպից նահանջելու իրավունքի բոլոր տալրային դատարանի մասին է, քան այն, որը նախադեպը ստեղծել է և երբ իրավունքի քաղաքականության պատկերացումները պահանջում են իրավունքի գարգացում:

Վեցերորդ՝ որոշակի անորոշ վերաբերմունք օրենքների մեկնարաննան հարցերի նկատմամբ, որը այնուամենայնիվ, ավելի ֆորմալ կիներ, քան Եվրոպայում ազատ իրավունքի շարժման կողմնակիցների մոտ:

Այս հիմնական գաղափարներն աստիճանաբար դարձել են ավելի ու ավելի տարածված, և նրանց հիման վրա 1920-ական թվականներին առաջացավ իրավական ռեալիզմի շարժումը, որի ներկայացուցիչները փորձում են ավելի ստույգ պարզել, թե իրավական իմաստը կամ է կատարվում դատարաններում, ինչպիսին են դատական իրավաստեղծման «հաղորդագիրկերը» և օրենքների մեկնարաննան մեթոդները:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Իրավական ռեալիզմի հայեցակարգը առավել լիարժեքորեն էր ներկայացված է Յելի և Կոլումբիայի համալսարաների իրավական դպրոցներում, պայթեցրեց ամերիկյան գիտական վերնախավը և շարունակեց խոռվել գիտնականների մտքերը 1920-ական թվականների վերջից մինչև 1940-ական թվականները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարժումը հեռացավ գիտական բեմահարքակից ճիշտ այնպես, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում մարեց «Հանուն ազատ իրավունք» շարժումը, բայց մինչ այսօր իրավական ռեալիզմի ժառանգությունը գիտական թեժ վեճերի առարկա է ամերիկյան գիտնականների շրջանում:

Իրավական ռեալիզմի շարժման ուշադրության կենտրոնում դատական իրավաստեղծման հարցերի ուսումնասիրությունն էր: Ուստի, մեր վերլուծության համար այդ ուսումնասիրությունը շափազանց հետաքրքիր է:

Նոր շարժման սկզբի համար հաճախ մեկնակետ են ընդունում Կոլումբիայի համալսարանի Իրավունքի դպրոցի դասախոս, Ամերիկայի իրավունքի դպրոցների ասոցիացիայի նախագահ Հերման Օլիֆանտի (Herman Oliphant) ելույթը այդ ասոցիացիայի տարեկան համազումարում 1927 թ.: Այդ ժամանակ Օլիֆանտը գիտնականներին կոչ արեց քանդել ֆորմալիզմի պատճեշները և սկսել իրավունքին նայել ռեալիստորեն, ուսումնասիրել ոչ թե դատական որոշումների տեքստերը, այլ այն, թե ինչպես և ինչո՞ւ են այդ որոշումներն ընդունվում, ամրողովին չիմնավել ֆորմալ տրամաբանության վրա իր ինորուկցիաներով, դեռուկցիաներով ու անալոգներով, այլ փորձել գտնել իրավունքի քաղաքականության փաստարկները, որոնք կանգնած են տրամաբանական այդ բոլոր մանիպուլացիաների հետևում: Բոլոր իմնական հոդվածներն ու գրքերը, որոնք հետազայում համախմբվեցին իրավական ռեալիզմի շարժում «բրենդի» տակ, լույս են տեսել 1927 թվականից հետո:

ԱՄՆ-ում իրավական ռեալիզմի շարժման հիմնական կազմակերպիչը երիտասարդ գիտնական Կարլ Լևելինն էր՝ ամերիկացի նշանավոր իրավագետը, ով պայմանագրային իրավունքի ոլորտում առաջատար մասնագետներից էր և ԱՄՆ-ի Սիատեսակ առևտրային օրենսգրքի (այսուհետ՝ ՍԱՕ) գլխավոր հեղինակներից մեկը: Շարժման երկրորդ, առավել արմատական տրամադրված առաջնորդը իրավաբան Ջերոմ Ֆրենկը էր, ով հետազայում դարձավ հայտնի դատավոր: Բացի նրանցից ու արդեն նշված Օլիֆանտից՝

շարժման զարգացման գործում նշանակալի դեր են խաղացել այնպիսի հայտնի գիտնականներ, դատավորներ ու իրավաբաններ, ինչպիսիք են Մաք Ռադինը (Radin), դատավոր Հատչեսոնը (Hutcheson)³, Ֆելիքս Կոնենը (Cohen), Ուլտսեր Ուիլեմ Քուկը (Cook), Հետել Ինտեման (Yntema), Լեն Գրինը (Green), Անդրեիլ Մուրը (Moore)⁶, Ֆրեդ Ռոդելը (Rodell)⁷, Թուրման Արմոլդը (Arnold)⁸ և մի խոսք այլ իրավագետներ, ովքեր այն ժամանակա ամերիկյան իրավական գիտության մեջ խկական ապատամբուրյուն բարձրացրին ֆորմալիզմի դեմ: Հրատարակվեցին տասնյակ հոդվածներ, լույս տեսան գրքեր, անցկացվեցին գիտաժողովներ՝ այն ամենը, ինչը ցանկացած երկրում զարգացած գիտական կյանքի նշանների հետ ասոցացվում է այնպիսի հասկացության հետ, ինչպիսին է «գիտական շարժումը», և ինչը, ցավոք, այնքան հեռու է մեր՝ հազիվ շնչող իրավական կյանքի իրողություններից:

Այդ գիտնականների հայացքները շատ բանով տարբերվում էին, ինչը թույլ չի տախս խոսել իրավական միասնական դպրոցի մասին: Բացի այդ՝ նրանց գիտական ջանքերի գործադրման ոլորտը առավելագույն բազմազան էր՝ դատական իրավաստեղծման տեսության բուն հարցերից մինչև պայմանագրային կամ կորպորատիվ իրավունքի կոնկրետ հարցերը: Բայց նրանց համար ընդհանուր հակաֆորմալիստական տրամադրությունը և մի շարք հիմնարար մոտեցումները թույլ են տալիս նրանց ակտիվ գործունեությունը որակելու որպես լիարժեք գիտական շարժում:

Իրավաբանական ռեալիզմի հիմնադիրներից է քաղաքացիական իրավունքի ամերիկյան մասնագետ Կարլ Լևելին (1893-1962), ում կարծիքով դատական որոշումների ձևական-տրամաբանական վերլուծությունն օգտակար է, սակայն դրանց օգտակարությունն էականորեն կաճի, եթե այդ որոշումները մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեն նաև պրազմատիկ և սոցիալ-հոգեբանական բովանդակության տեսանկյունից: Ունախաների կարծիքով, իրավական ակտերի ձևական-դրազմատիկ մեթոդները չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին, քանի որ գործող իրավունքն ստեղծվում է ոչ թե օրենսդրի կողմից վերացական նորմեր ընդունելու եղանակով, այլ դատական և վարչական մարմինների կողմից կոնկրետ վեճեր լուծելու ընթացքում: Կ. Լևելիի հայտնի արտահայտության համաձայն՝ իրավունքը այն է, ինչ դատավորները որոշում են վեճի վերաբերյալ: Ունախաներն իրավունք են դիտում այն, ինչ ստեղծվում է դատավորի կողմից կոնկրետ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործի քննության ընթացքում:

1920-ական թվականների վերջին Ռուսու Փառանդը, ով արդեն Հարվարդի Իրավունքի դպրոցի հեղինակավոր դեկանն էր, աստիճանաբար թողնում էր իր երիտասարդ տարինների ռեֆորմիստական պոռքկումների և մեխանիկական արդարադատության դեմ պայքարը: Ու չնայած նրա շատ զաղափարներ վերցրին ռեալիստները, բայց նա շղարձավ իրավական ռեալիզմի շարժման առաջնորդը: Ռեալիստները, ինչպիսիք են Լևելինը և Կուենը, ուղիղ հայտնում էին իրենց երախտագիտությունը իրավունքի ֆունկցիոնալ և գործիքային բնույթի բացահայտման և ԱՍՆ-ում Յերինզի «տնավորման» համար, բայց նաև հեռուն զնացին: Ինչպես երբեմն նշվում է գրականության մեջ, չնայած Փառանդը դե ֆակտո հանդիսանում է իրավական ռեալիզմի «հոգլոր հայրը», այդ ուղղության ներկայացուցիչներին ընդունում էր որպես «անառակ որդիներ»¹⁰: Զարմանալի չէ, որ առավել սուր բանավեճերից մեկը ռեալիստների մոտ բռնկեց ոչ թե ուղղակի ընդդիմախոսների, այլ ֆորմալիստների հետ: Վերջիններիս արդեն մի լավ «քափ» էր տվել քննադատների նախկին սերունդը՝ Հոլմսը, Փառանդը և Կարլոնը: Ինչպես միշտ է լինում, ամենադաժան մարտերը տեղի են ունենում մոտ ուղղությունների միջև, որոնք փորձում են պաշտպանել իրենց գրողի անկյունը՝ որպես միակ ճշմարիտը: Ուստի Փառանդի վարկածով՝ հենց «հակաֆորմալիզմի» ակադեմիական առումով ստուգված, չափավոր և «սանրված» տարբերակը դարձավ այս տեսությունը, որից բաժանումը կենսականորեն կարևոր դարձավ ռեալիստների հետազոտական ինքնուրույն ծրագրի ձևավորման համար:

Նախ և առաջ խոսքը Փառանդի և Լևելինի հայտնի բանավեճի մասին է: Այդ հայտնի «փոխադարձ հարվածների» պատմությունը հետևյալն է. 1930 թ. Լևելինը աղմկահարույց մի հոդված գրեց ռեալիստների շարժման մասին¹¹, որտեղ քննադատում էր ֆորմալիզմը պողիսիկ նորմերի նշանակությունը չափազանցնելու և դատական հայեցողության խնդիրները անտեսելու համար՝ փորձելով ձևակերպել նոր շարժման էությունը: Նոյն տարրում լույս տեսավ Լևելինի ընկերոջ՝ Զերոմ Ֆրենկի առավել ռադիկալ գիրքը, որտեղ վերջինս փորձեց ընդհանրապես հետո կոչել պողիսիկ նորմերի ցանկացած իմաստ և իրավունքի ողջ կյանքը հանգեցնել դատական ազատ հայեցողության իրացնանը¹²: 1931 թվականին Փառանդը ռեալիստների նոր առաջացող շարժմանը նվիրված իր հոդվածում փորձեց խելքի բերել «երիտասարդներին» և վերադարձնել առավել չափավոր տիրույթ՝ փորձելով

նրանց իրամցնել իր հետազոտական ծրագիրը: Նա ռեալիստներին մեղմորեն մեղադրեց որոշակի աստիճանի ռադիկալիզմի, ավելորդ նիկիլիզմի, դատավարության դեսկրիպտիվ վերլուծության դերի գերազնահատման ու իրավունքի արդյունավետ զարգացման նկատմամբ հետաքրքրության բացակայության մեջ՝ նրանց առաջարկելով առավել հավասարակշռված հետազոտական ծրագիր, որը պատշաճ դեր էր վերապահում իրավունքի քաղաքանության վերլուծությանը և առաջարկում նրա բարեփոխման ճանապարհները¹³: Լևելինն անմիջապես պատասխանեց հոդվածին, որում կտրուկ կերպով կասեցրեց Փառանդի փորձը՝ հանդես գալու որպես նոր շարժման «գորու» և նրա հետ բանավեճում վերջնականապես դե ֆակտո ձևավորեց այդ ուղղության կերպարը՝ այն վերջնականապես ազատագրելով Փառանդի «սոցիոլոգիական յուրիսպրուդնիցիայից»¹⁴: Նոյն հոդվածում Լևելինը կազմել էր այն գիտնականների ցանկը, որոնց գիտական աշխատությունները, նրա կարծիքով, թույլ էին տալիս նրանց դասել նոր շարժման շարքերը: Փառանդն այդ ցուցակում չկար:

Բացի Լևելինի հետ անձնական թյուրմբոնումից՝ 1930-1931 թվականներին Փառանդից ռեալիստների բաժանման պատճառ էր նաև այն, որ 1920-ական թվականների վերջին Փառանդը կողմնակից էր իրավունքի քաղաքականության ավելի մեծ շեշտադրմանը և իրավաստեղծման ժամանակ շահերի հավասարակշռմանը: Ընդսմին դատական իրավաստեղծման ազատությունը Փառանդի աշխատություններում որոշակի սահմաններում ընդունվում էր, բայց չէր առանձնացվում որպես նրա գիտական հետազոտությունների կենտրոնական թեմա: Այլ կերպ ասած, ինչպես ճշմարտացիորեն նշվում է գրականության մեջ, Փառանդն ավելի ու ավելի էր մերձենում Գերմանիայի իրավագիտության շահերի կողմնակիցների հետ (նախ և առաջ Հելկի հետ)¹⁵: Կայ ռեալիստները փորձեցին ներկայացնել ծրագիր, որտեղ իրավունքի քաղաքանության հարցերը մղված էին երկրորդ պլան, իսկ կենտրոնական թեմա էր դատավարության իրողությունների վերլուծությունը և դատական հայեցողության ազատության ֆենոմենը: Այլ կերպ ասած, ռեալիստները փորձեցին ամերիկյան իրավագետ հասարակության համար տալ այն համերգը, որը Գերմանիայում կատարում էր հանուն ազատ իրավունքի շարժման «նվազախումբը» և հատկապես նրա արևատական թվականում:

Ռեալիստները փորձում էին գործընկերների աշքերը բացել և ցույց տալ թե ինչ է իրավանում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կատարվում իրավունքի ոլորտում, և իրավունքը մաքրել կեղծավորությունից և երևորականությունից, ինչպես դեկարատիվ տեսության դեպքում էր: Իսկ Փառնողի գաղափարն ուղղված էր ոչ թե դեսկրիպտիվ, այլ նորմատիվային, քաղաքական-իրավական վերլուծության ոլորտին, իրավական օպտիմալ նորմերի ընտրության նկատմամբ գիտական մոտեցումների փնտրությն: Բացի այդ՝ Փառնողը չեր կարող ընդունել Լևելինի և հատկապես Ֆրենկի ծայրահեղ նիհիլիստական հայացքները պոզիտիվ իրավունքի դերի նկատմամբ: Ուստի, այն փաստը, որ Լևելինը Փառնողին շնանաշեց որպես նոր շարժման առաջնորդ, մեծ հաշվով միանգամայն բացատրելի էր:

Փորձենք հակիրճ ներկայացնել Լևելինի հիմնական գաղափարները.

1. 1930 թ. լույս տեսած իր ամենահայտնի գրերից մեկում Լևելինը հայտեց ողջ շարժման համար առանցքային դարձած այն թեզիսը, որ իրավունքն իրենից ներկայացնում է այն, թե դատավորներն ու պետական այլ պաշտոնյաների ինչպես են իրենց պահում վեճերի նկատմամբ¹⁶: Ըստ Էության՝ այդ դատավարական իրավահասկացության մեջ Լևելինը հետևում էր Գրեյի՝ իրավունքի ցանկացած աղբյուրի ոչ պարտադիր լինելու ու իրավունքի՝ որպես դատական որոշումների ընկալման մասին, նաև Հոլմսի կանխագուշակման տեսության գաղափարներին: Հոլմսի կանխագուշակման տեսությունից տարբերվում էր նրանով, որ ըստ Լևելինի՝ ոչ թե դատական որոշումների կանծագուշակումը, այլ հենց դատական որոշումներն են կազմում իրավունքի էությունը¹⁷: Բայց այս տարբերությունն անէական է: Լևելինի մոտեցման դեպքում սուրյեկտիվ իրավունքների մասին խոսակցություններն իրականում ընդամենը նշանակում են այդ իրավունքների ուսնահարման նկատմամբ դատարանների որոշակի վարքի կանխագուշակում¹⁸: Իհարկե, այստեղ գործ ունենք իրավունքի ռելուկցիոնիստական սահմանման հերթական փորձի հետ: Եթե վերլուծական իրավագիտությունը իրավունքը սահմանում էր որպես պոզիտիվ նորմերի ամբողջություն, ապա այնպիսի ռեալիստներ, ինչպիսիք են Լևելինը, իրավունքի՝ իրականում բարդագույն ու բազմատարր ֆենոմենը հանգեցրին դատավարական պլոցեսի:

2. Պարզեցման ձգտումն, անշուշտ, հասկանալի է և համապատասխանում է մարդկային բնույթին, բայց գիտության մեջ ամենազրվելի քայլը չէ: Իրավունքի նման սահմանման ողջ սահմանափակությունը, ըստ երևույթին, ակնհայտ դարձավ նաև հենց Լևելինի համար: Համենայն դեպք հետագա-

յում նա ընդունեց իրավունքի սեփական սահմանան անհաջող լինելը և 1951 թ. գրքի Վերահրատարակման ժամանակ պարզաբանեց, որ այն արտացոլում էր ճշմարտության մի մասը, քանի որ իրավունքի կարևորագույն խնդիրներից է վերահսկել և ուղղորդել պաշտոնյաների ու դատավորների աշխատանքը: Ուստի, նա ընդունեց, որ իրավունքի՝ որպես դատավորների ու պաշտոնյաների փաստացի վարքի սահմանումը այնքան էլ չի համատեղվում իրավունք՝ որպես սոցիալական իրողությունների վրա ազգեցության գործիքի հասկացության հետ¹⁹: Բայց այդ ճշգրտումն արվեց այն ժամանակ, եթե շարժումն արդեն մարել էր: Իսկ 1930-ական թվականներին շատ ռեալիստներ լրջորեն հավատացել էին իրավունքի նման ընթացակարգային հասկացությանը և դրանով խսկ իրենց ուսմունքը դարձրել բավականին խոցելի: Միևնույն ժամանակ իրավունքի վաստ տեսությունները շափականց կարենոր են այն չափով, որ չափով օգնում են ավելի լավ հասկանալու այս կամ այն ֆենոմենի բնույթը: Այդ շարժմանը բնորոշ իրավունքի՝ որպես վեճերի քննման իրողությունների սոցիոլոգիական հասկացության, ոչ թե նորմատիվ, որին դատարանները պետք է ենթարկվեն, խաղաց հենց նման դեր: Այս չափազանցության օգնությամբ ռեալիստները ուշադրություն հրավիրեցին նրան, թե դատարաններն իրականում ինչպես են քննում վեճերը, իսկ դատավարության «խորհրդի» բացումը ամերիկացիներին օգնեց հետագայում ձևավորելու իրավունքի առավել ռեալիստական ու բարդ ընկալումը:

3. Գրեյից հետո Լևելինը գրում էր, որ այս կամ այն ֆորմալ աղբյուրից բխող նորմերը իրականում բացարձակ պարտադիր չեն և դատարաններին չեն գրկում հայեցողության ազատությունից: Իրեն բնորոշ աֆորիզմների ոճով նա գրում էր, որ միայն պոզիտիվ նորմերը և որից ոչինչ չսովորած ուսանողը բացել է միայն կեղևը՝ առանց դիպչելու բովանդակությանը²⁰: Իրավաբանի խնդիրն է հասկանալ, թե որքան ռեալիստորեն են լուծվում վեճերը, քանի որ հենց այդ օրինաչափությունները և ոչ ամենենին պոզիտիվ նորմերն են իրավունքը: Դատավարության իրողությունների ուսումնասիրման ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել ոչ այնքան այն քանի վրա, թե դատավորներն ինչպես են պատճառաբանում իրենց որոշումները, այլ այն քանի վրա, թե այդ բառերն իրականում որքանով են համապատասխանում նրա հետ, թե իրականում ինչ են անում: Պողիսիի նորմերի դերն այն է, որ դրանք օգնում են ավելի ճշգրիտ կանխագուշակել, թե դատարանն ինչպես կլուծի վեճը, և ոչ թե այն, որ երաշխավորում են հենց այդ արդյունքը : Լևելինը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիրում էր, որ շատ իրավաբաններ սխալմամբ հավատում են պոզիտիվ նորմերի պարտադիր բնույթին և միմյանց մոլորեցնում են: Եթե իրականում պոզիտիվ նորմերը պատասխանեին բոլոր հարցերին, ապա վեճեր ընդհանրապես չեն լինի, քանի որ մինչև դատավարությունը կողմերը կարող են վստահ լինել, թե դատարանը որ դիրքորոշումը կպաշտպանի²²:

4. Բայց ինչո՞ւ իրավական նորմերը չեն կարող լինել իրավունք և դե ֆակտո պարտադիր չեն դատարանների համար: Պարզապես այդպիսին են կյանքի իրողությունները: Լևելինը գրում էր, որ գործնականում դատավորն ազատ է իրաժարվել նախադեպից կամ իր գործն առանձնացնելով նախադեպի ratio decedendi-ից այս կամ այն փաստացի մանրամասների տարբերության պատճառով, կամ ուղղակիորեն չեղյալ հայտարարելով այն նաև այլ հնարքների միջոցով: Ինչպես գրում էր Լևելինը, չկա այնպիսի նախադեպ, որը մեծ ցանկության դեպքում դատարանը չկարողանա անտեսել: Այն, ինչը դատավորներին հաճախ խանգարում է չեղյալ հայտարարել նախադեպերը, պարզապես դատական իշխանության հեղինակության նկատմամբ հավատը չկործանելու և իրավական համակարգը առանց անհրաժեշտության ապակայունացնելու ցանկություն է: Իսկ իրականում ակնհայտորեն հնացած ու անհաջող նախադեպից խոսափելու ցանկության դեպքում դատարաններն ունեն նման քայլն արդարացնելու օրինական գործիքների մի ամբողջ գիմանոց: Ուստի, նախադեպերը և stare decisis սկզբունքը բացարձակ չեն: Նախադեպերը կարող են օգնել կանխագուշակելու վեճերի արդյունքը հավանականության մեծ աստիճանով, բայց ոչ ամբողջովին կանխորոշել այն²³:

5. Լևելինի դիրքորոշման համաձայն օրենսդիր նորմերը նույնապես բացարձակ չեն: Օրենքների նորմերը վատ են մտածված, ունեն չափազանց ընդհանուր բնույթ և հաճախ չունեն միանշանակ իմաստ:

Սեկնարաննան տարբեր ձևերը հակասում են միմյանց և չունեն հստակ հիերարխիա, իսկ դա դատավորներին քողմում է իրավաստեղծման գգալի բաց տարածք²⁴: Օրենքների մեկնարաննան հարցերի մասին իր հայտնի դարձած հոդվածում Լևելինը կազմաքանդեց օրորորու այն պատկերացունք, որ մեկնարաննան մեթոդների ճիշտ կիրառման դեպքում օրենսդիր նորմերը տալիս են միանշանակ պատասխաններ: Այդ հետազոտության մեջ Լևելինը ցույց տվեց, որ մեկնարաննան բոլոր գոյություն ունեցող սկզբունքները (canons of interpretation) իրականում հակասում են միմյանց և չեն են-

թարկում հստակ աստիճանակարգի: Հետևաբար, մեկնարաննան տարբեր մեթոդների ու սկզբունքների կիրառմը կարող է օրենքի միևնույն նորմից դուրս բերել տարբեր իմաստներ: Գոյություն չունի մեկնարաննան միակ ճշմարիտ տարբերակ, և ամեն ինչ վերջին հաշվով, կախված է դատավորի հայեցողությունից, ով կարող է ընտրել մեկնարաննան այս կամ այն տարբերակը և ստանալ այս կամ այն արդյունքը: Այսպես, օրինակ, դատավորը կարող է կիրառել մեկնարաննան իին սկզբունքը, որի համաձայն նա պետք է օրենքի նորմին տա բառացի իմաստ, եթե դուս տեքստը անհսկանալի և ակնհայտ է: Բայց նա նաև իրավունք ունի կիրառելու ոչ պակաս իին «անհեթերության սկզբունքը», ըստ որի օրենքի նորմի բեկուզ միանգամայն ակնհայտ բառացի իմաստը չի կիրառվում, եթե հանգեցնում է հստակորեն անհեթեր կամ վնասարար արդյունքը²⁵: Կամ, օրինակ, օրենքների մեկնարաննան անգուստաքանական ավանդույթում գոյություն ունի նույն օրենքի միաննան տերմիններին միաննան իմաստ տալու սկզբունքը, ինչպես նաև իրավահայական սկզբունքը, որի համաձայն դատարանն իրավունք ունի նույն օրենքի միաննան տերմիններին տալ տարբեր իմաստ, եթե դա նրա ըմբռնումը դարձնում է ավելի համաձայնեցված: Մեկ այլ օրինակ՝ մեկնարաննան այն սկզբունքը, որը թույլ է տալիս հակառակ մոտեցումը, եթե ակնհայտ է, որ «մեկի արտահայտումը բացառում է մյուսը» (մեկնարաննում a contrario), հակասում է այն սկզբունքը, որը թույլ է տալիս հակառակ մոտեցումը, եթե ակնհայտ է, որ «մեկի արտահայտումը» միայն օրինակ է ներկայացնում: Մեկ որիշ օրինակ՝ արմատացած մի սկզբունքի համաձայն՝ որևէ ցանկ ավարտող հատակեցնող խոսքը վերաբերում է միայն ցանկի վերջին տարրին, իսկ մեկ այլ սկզբունքի համաձայն՝ կարող է վերաբերել ցանկի բոլոր բաղադրիչներին, եթե առողջ բանականությունը դա է պահանջում²⁶: Մանրամասն վերլուծելով օրենքների մեկնարաննան առկա դոկտրինան՝ Լևելինը տվեց իրավունքի որոշակիության գաղափարի համար ոչ միշտարիչ ախտորոշում: Նրա կարծիքով գլխավոր դեր է խաղում դատարանի սուբյեկտիվ հայեցողությունը. ով ընտրում է մեկնարաննան այս կամ այն սկզբունքը հասնելու համար իրավունքի բաղադրականության (օրինակ, արդարացի) տեսանկյունից առավել խելամիտ արդյունքի, հետո միայն ընտրում մեկնարաննան այլ ֆորմալ մեթոդը, որպեսզի տպափորություն ստեղծվի, որ ինքը մեկնարաննան այլ տարբերակ չի ունեցել: Դրանով իսկ ստեղծում են մեխանիկական իրավաստեղծման պատրանք՝ իրականում իրացնելով իրավաստեղծման լայն լիազորություններ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

6. Լևելինի կարծիքով արդյունքում դատավորի համար գոյություն չունի բացարձակ պարտադիր ոչ մի պողիտիվ իրավունք: Հաշվի առնելով այն, որ Լևելինը քննադատում էր նաև դոկտրինալ ֆորմալիզմը նոր իրողությունների հետ հաշուվել չցանկացող խիստ աքսիոնների տեսքով ինդրուսիվ ընդհանրացումների ներկայացման համար²⁹, նրա համար այլ ելք չի մնում, քան խոստովանել, որ իրավունքը կողմերի համար այն անհրաժեշտ որոշումն է, որը դատարանը կայացնում է, այլ ոչ թե այն, թե ինչով է նա այդ ժամանակ դեկավարվում: Նման մոտեցումն սկզբունքորեն տրամաբանական էր, եթե ելակետ ընդունենք այն պատկերացման այսպանումը, որ օրենքն իրենից պետք է ներկայացնի բարցարձակ պարտադիր պահանջներ: Քանի որ բացարձակ պարտադիր են միայն դատական որոշումները, որոնք տարածվում են բացառապես վեճերի կողմերի վրա, իսկ օրենքները, նախադեպերը և դոկտրինաները չեն թելադրում նորմեր բացարձակ ճշգրտությամբ, միանշանակությամբ ու անդրդեմությամբ և չեն կարող բացառել դատարանի կողմից ստեղծագործ մասնակցությունը, ապա եզրակացությունը, որին եկան Լևելինը և Գրեյը, ներկայանում է ոչ առանց իմաստի: Իրավունքի՝ որպես որոշումների կայացման, և ոչ թե բուն որոշումների հիմքի ընկալման պահպանումը հնարավոր է միայն իրավական նորմերի բացարձակ պարտադիրության չափանիշից հրաժարվելու և դեպի նրանց հարաբերական ուժի և պրեզումպտիվ պարտադիրության դոկտրինային անցնելու դեպքում: Բայց Լևելինը և շատ այլ ռեալիստներ պատրաստ չեն իրաժարվելու իրավունքի՝ որպես բացարձակ պարտադիրի հատկանիշից, ու այսուղից էլ նրանց այդքան ռադիկալ դատավարական իրավաընկալումը:

7. Միևնույն ժամանակ Լևելինը չէր հերքում այն, որ դատարանները երբեմն ընդունում են պողիտիվ նորմեր զուտ մեխանիկորեն: Նրա խնդիրն էր ցույց տալ, որ իրավունքի այդ տարրի իրական նշանակությունը դե ֆակտո ավելի քիչ է, քան նախկինում ընդունված էր համարել: Համապատասխանաբար, գիտնականները պետք է ուշադրություն դարձնեն այլ տարրի որը, պարզվում է, ավելի նշանակալի է: Ըստ Լևելինի՝ այդ տարրը դատարանների և այլ պաշտոնյաների, ինչպես նաև հասարակ քաղաքացիների իրական վարքն է³⁰: Ավելի վաղ գերիշխող բառերի շեշտադրման փոխարեն ուշադրությունը պետք է կենտրոնացնել իրական վարքի վրա³¹: Ուշադրության կենտրոնում կանգնում է առանցքային մի հարց՝ իրավունքը միջոցով միանշանակորեն վերագրվող արդյունքը հանգեցնի աղաղակող անարդարության³²: Լևելինը դատական հայեցողության ազատությունը համարում էր սահմանափակ, բայց կարծում էր, որ այդ սահմանափակության իրական աստիճանը պետք է որոշվի ենակիրկի հետազոտություններով:

8. Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հետազոտական այն աշխատանքի ծանրության կենտրոնը, որը Լևելինը փորձում էր իրացնել 1920-1940-ական թվականներին, լնկած էր դատավարության ոլորտում: Հարգանքի տուրք մատուցելով Փառնդին նրա «իրավունքը գրքերում» և «իրավունքը գործողության մեջ» բաժանման և լնդիանը իրավունքի նկատմամբ ֆունկցիոնալ մոտեցման մշակման գաղափարների համար՝ նա կարծում էր, որ Փառնդը դե ֆակտո անհրաժեշտից ավելի լրջորեն է լնկալում պողիտիվ նորմերը և չափազանց շատ է տարկել իրավունքի վերջնական նպատակների նկատմամբ սպեկուլյացիաներով: Լևելինի կարծիքով պողիտիվ իրավունքը, ինչպես մենք տեսել ենք, ինքն իրենով բացարձակ պարտադիր չէ, իսկ շահերի հավասարակշռման մասին Փառնդի դատողությունները չեն ուղեկցվում դրանց հավասարակշռման կոնկրետ մեխանիզմների ընտրությամբ³³: Ուստի, իրավունքի կենտրոնական հարցը այն է, թե ինչ և ինչպես են իրականում դատարաններին անում, որքան ուեալ է աշխատում դատական ապարատը:

9. Բայց Լևելինի կարծիքով վերը նշվածը ճանապարհ չի բացում դատական բոլոտվության համար: Հայեցողության ազատության որոշակի ասիդանը չի նշանակում, որ դատավորը դեսպոտ է, ով իրավասու է լուծել վեճերը իր քմահաճույքով: Առավել հաճախ դատավորը կընտրի միայն այն որոշումը, որը կարող է այս կամ այն չափով ամրապնդվել փորմալ փաստարկներով: Ֆորմալ փաստարկները (օրինակ, այս կամ այն նախադեպերին հղումները) կարող են ամրացնել տարրեր որոշումները: Որոշումների այդ տարրերակներով որոշակի չափով սահմանափակվում է դատարանի հայեցողությունը: Եթե բոլոր փորմալ փաստարկները մատնանշում են միևնույն արդյունքը, դատավորը ստիպված կլինի դեպքերի մեծամասնության դեպքում ընտրել հենց այդ տարրերակը: Դա կրկին չի նշանակում, որ նա իրավունք չունի այդ իրավիճակում գնալ իր ճանապարհով: Բայց դրա համար կպահանջվի, որ պողիտիվ իրավունքի միջոցով միանշանակորեն վերագրվող արդյունքը հանգեցնի աղաղակող անարդարության³⁴: Լևելինը դատական հայեցողության ազատությունը համարում էր սահմանափակ, բայց կարծում էր, որ այդ սահմանափակության իրական աստիճանը պետք է որոշվի ենակիրկի հետազոտություններով:

10. Չնայած Լևելինի կարծիքով իրավական լիակատար որոշակիության հնարավորության նկատմամբ հավատը հավատ է պատրանքի հանդեպ, ասվածը չի նշանակում, որ Լևելինը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պղղիտիվ նորմերն ու դրանց հետևելը կարևոր չէր համարում: Հակառակը, նա չէր կիսում այնպիսի ռեալիստների ծայրահեղական հայացքները, ինչպիսն էր վաղ շրջանի Ֆրենկը. նրանք ծաղրում էին իրավունքի որոշակիության նկատմամբ ձգումը և իրավունքի կայունության մեջ չէին տեսնում զրեթե ոչ մի արժեք³⁶: Այս հարցում Լևելինի դիրքորոշումն ավելի շատ մոտ էր Փառնի դիրքորոշմանը: Նա հավասում էր իրավունքի դիմանմիզմի ու ճկունության, ինչպես նաև կայունության ու որոշակիության կարևորությանը: Փառնի նման Լևելինը չէր ընդունում իրավունքի բացարձակ կանխատեսելիության, որոշակիության ու կայունության անհնարինությունն ու անցանկալիությունը, ինչպես նաև կարգուկանոնի որոշակի աստիճանի անհրաժեշտությունը³⁷: Ինչպես նա գրում էր, իրավունքում չկա և չի կարող լինել 100 տոկոսանոց իրավական որոշակիություն: Դրա փոխարեն անհրաժեշտ է իրավական որոշակիության խելամիտ աստիճան, որը տարբեր է իրավունքի տարբեր ոլորտների համատեքսում³⁸:

11. Հետագայում նա որոշ շափով գարգացրեց այդ թեման: Իր հայտնի «Ընդհանուր իրավունքի ավանդույթ» գրքում, որը գրվել էր նրա գիտական ճանապարհի մայրամուտին, նա նշում էր, որ իրավունքի որոշակիությունն ու կանխատեսելիությունը որպես կարևոր, բայց ոչ բացարձակ արժեքներ իրականում ապահովվում են մի ամբողջ խումբ կայունացնող գործոնների օգնությամբ, որոնք նվազեցնում են կամայական հայեցորդության դերը: Դա և (1) դատավորների հատուկ պատրաստությունն է, և (2) իրավական որոշակի դոկտրինայի արմատացած լինելը, և (3) դոկտրինաների մշակման՝ իրավաբանների շրջանում ընդունված մեթոդները, և (4) արդարության հասնելու անհրաժեշտության զգացումը, և (5) դեկարատիվ տեսության փորձինչ հնացած, բայց ենթագիտակցական մակարդակում գործող ֆիլցիան և որոշումը որպես միակ ճշնարիտը մասուցելու ավանդույթը, և (6) որոշման իրապարակային մոտիվացման անհրաժեշտությունը, և (7) սահմանափակումները, որոնք դրվում են դատավարության մրցողականությամբ և կողմերի առաջարկած միայն երկու երկրներանքների միջև ընտրության անհրաժեշտությամբ, և (8) դատավարության կոլեգիալությունը, և (9) դատավորների մեծ մասի անձեռնմխելիությունը, անկախությունն ու ազնվությունը և մի շարք այլ գործոններ³⁹: Դրանցից յուրաքանչյուրն առանձին քիչ բան է նշանակում, բայց բոլորը միասին օգնում են փոխառությունը այն ներունակ անորոշակիությունը, որն անխուսափելիորեն բխում է այն փաստից, որ ոչ

օրենքի նորմերը, ոչ էլ նախադեպերը չեն հանդիսանում բացարձակ պարտադիր և բույլ են տալիս տարբեր մեկնաբանություններ: Ուստի, դատական հայեցողության ազատությունը առկա է, բայց ունի սահմանափակ բնույթ:

12. Ընդ որում, ինչպես գրում էր Լևելինը, XX դարի մեկ երրորդի շատ դատավորներ մտածում են որպես մեծ ոճի դատավորներ՝ փորձելով գտնել բովանդակային արդարություն, բայց բոթի վրա իրենց որոշումները փաստարկում են որպես Ֆորմալ ոճի դատավորներ և գուտ մեխանիկորեն կիրառում պոզիտիվ նորմերը: Որոշումների իրական դրդապատճառների ու դատական հայեցողության իրական դերի բարցնելն ու որոշումը որպես պոզիտիվ իրավունքից բացառապես ֆորմալ լոգիկայով հիմնավորված դեղուկցիա ներկայացնելու փորձը Լևելինը համարում էր կեղծավորություն⁴⁰: Նա գրում էր, որ դատավորները հաճախ որոշման են հանգում սկզբում և հետո միայն դրա լեզվիմ հիմնավորման համար ընտրում հարմար ֆորմալ փաստարկները⁴¹: Նրա իդեալը մեծ ոճն էր, որին դատավորները պետք է հետևեն ինչպես բուն իրավական համակարգի ձևավորման ընթացքում, այնպես էլ նրա հասունության շրջանում, եթե անհրաժեշտ են միայն լոկալ շտկումներ ու նորարարություններ⁴²:

13. Ասվածը չի նշանակում, որ այնպիսի ռեալիստների համար, ինչպիսին է Լևելինը, նշանակություն չուներ, թե ինչպիսին իրավունքը պետք է լինի: Յերինազի ու Փառնի նման նա իրավունքը տեսնում էր բացառապես որպես սոցիալական կոնկրետ նպատակների հասնելու գործիք: Դա ուղակիրեն խստովանում էր, որ հենց Փառնին է ամերիկյան իրավունքը պարտական իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի, ոչ ավտոնոմության ու գործիքայնության հստակ ու առողջ գիտակցման համար: Այնուամենայնիվ Լևելինը համարում էր, որ իրավական ռեալիզմի շարժման գլխավոր խնդիրը ոչ թե այդ նպատակների որոնումն է (նորմատիվային վերլուծության ժամանակ), այլ իրավունքի գործման իրողությունների բացահայտումը (դեսկրիպտիվ վերլուծության ժամանակ): Փառնի դժգոհությունը ռեալիստների կողմից իրավունքի նորմատիվային, իդեալական տարրի տնտեսման նկատմամբ Լևելինը հերքում էր: Հիշեցնենք, որ Փառնի բավարար չէր համարում միայն իրավական իրողությունների ուսումնասիրությունը և պնդում էր իրավունքի բաղաքանության հետազոտությունը՝ ռեալիստների մոտ չտեսնելով որևէ դոկտրինա կամ ընդհանրապես հետաքրքրություն իրավական գիտության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այդ կողմի հանդեպ⁴³: Իսկ Լևելինը համարում էր, որ ինքն ու իր գործընկերները լիովին ընդունում են իրավունքի քաղաքականության ու իրավական բարեփոխման նպատակների որոշման կարևորությունը: Միայն թե խնդիրն այն է, որ իրավական ռեալիզմը չի հավակնել իրավական սպառիչ հարացույցի ստեղծման՝ իր առջև դնելով ավելի համեստ նպատակ՝ բացել իրավաքանների աշքերը իրավական համակարգի գործարկման իրողությունների վրա: Նա պնդում էր գործողության մեջ իրավունքի և այն բանի վերլուծության ժամանակավոր բաժանման վրա, թե ինչպիսին այդ իրավունքը պետք է լինի (իրավունքի քաղաքականություն): Կարևոր է ընդգծել, որ նրա կարծիքով այդ տարանջատումը ժամանակավոր է, բանի որ իրավունքի վերլուծությունը առանց նրա նպատակների, իհարկե, անհնարին է: Բայց նախքան առաջարկելը ինչ-որ բան փոխել իրավունքի մեջ, հարկ է իմանալ ճշնարսությունը, թե իրավունքն իրականում ինչպես է գործում ձերքազատվել միֆերից, ֆիկցիաներից ու կեղծավորությունից: Ուստի, իրավական ռեալիզմի առաջին նպատակը դատական իրավաստեղծման իրողությունների գիտակցումն է⁴⁴: Գիտնականները կարող են անցնել իրավունքի քաղաքականության վերլուծության հարցերին միայն այն բանի հստակ հասկացության ձևավորումից հետո, թե ինչպես է իրավունքը գործում:

14. Համապատասխանաբար, Լևելինին չի կա-

րելի մեղադրել այն բանի համար, որ անտեսել է իրավունքի նպատակները: Ինչպես նա կարծում էր, վեճերի քննման իրական գործընթացի հիմքում ընկած են իրավունքի քաղաքականության պատկերացումները: Այս գործուներն առաջնորդում են դատավորին այս կամ այն նախադեպը որպես որոշման հիմք ընդունելիս, կարևոր դեր են խաղում օրենքների մեկնաբանման այս կամ այն տարբերակի ընտրության ժամանակ և, ընդհանուր առմամբ, ունեն որոշիչ նշանակություն⁴⁵: Իր համեմատաբար ավելի ուշ շրջանի հոդվածներից մեկում նա գղում էր, որ դատարանների գործունեության դեսկրիպտիվ վերլուծության ոլորտում որոշակի շեղումը, մասնավորապես իր կարգախոսը, որ իրավունքն այն է, ինչ անում են դատավորները և ոչ ավելին, կարող էին տպավորություն ստեղծել, որ վեճերի քննման ժամանակ իրավունքի վերջնական նպատակների մասին հարցը դատարանների համար այնքան էլ կարևոր չէ⁴⁶: Ուղղակի իրավական ռեալիզմի հետազոտական ծրագրի կենտրոն Լևելինը առավել կարևոր էր համարում դնել իրավունքի մյուս ասպեկտը: Ընդունելով Փառնդի «սոցիոլոգիական իրավագիտության» գործիքային հարացույցը՝ Լևելինն, ըստ եռթյան տեղափոխել էր շեշտադրումը իրավաստեղծման այն ասպեկտի վրա, որը Փառնդը բողել էր չմշակված⁴⁷:

¹ Տե՛ս՝ Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները:

² Հրատարակված է մեկ տարի անց՝ oliphant H. A Return to Stare Decisis // 14 American Bar Association Journal. 1928.P.71 ff.

³ Radin M. The Theory of Judicial Decision: or How Judges Think // 11 American Bar Association Journal. 1928. P.357 ff.

⁴ Hutcheson J.C.Jr. The Judgment Intuitive: the Function of the “Hutch” in Judicial Decision // 14 Cornell Law Quarterly. 1928-1929.P.274ff.

⁵ Cook W. W. Scientific Method and the Law// 13 American Bar Association Journal. 1927. P. 303 ff.

⁶ Moore U., Callahan C. C. Law and Learning Theory: A Study in Legal Control // 53 Yale Law Journal 1943. P. 1 ff.

⁷ Rodell F. Goodbye to Law Reviews // 23 Virginia Law Review. 1936. P. 34 ff.

⁸ Arnold T. W. Institute Priests and Yale Observers - A Reply to Dean Goodrich // 84 University of Pennsylvania Law Review. 1936. P. 811 ff

⁹ Ռեալիզմները համարում էին, որ իրենց աշխատանքները ոչ թե նոր դպրոց, այլ գիտական շարժում են ներկայացնում՝ Duxbury N. Patterns of American Jurisprudence 1997 P. 68-69:

¹⁰ Pound R. The Ideal Element in Law. 2002.P.VII.

¹¹ Llewellyn K.N. A Realistic Jurisprudence-the Next Stop // 30 Columbia Law Review. 1930. P. 431 ff.

¹² Frank J. Law and the Modern Mind. 1985.

¹³ Pound R. The Call for a Realist Jurisprudence // 44 Harvard Law Review 1930-1931 P 697 ff

¹⁴ Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review. 1930-1931. P. 1222 ff. Գիտական այս բանավեճի անձնական կողմի մասին ավելի մասնամասն տես Hull N. E. H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence. 1997 P. 181-191

¹⁵ Herget J., Wallace S. The German Free Law Movement as the Source of American Legal Realism // 73 Virginia Law Review. 1987. P. 434.

¹⁶ Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P. 3.

- ¹⁷ Green M. S. Legal Realism as Theory of Law // 46 William and Mary Law Review 2005. P. 1928.
- ¹⁸ Llewellyn K. N. A Realistic Jurisprudence-the Next Step // 30 Columbia Law Review .1930.P.448 ff.
- ¹⁹ Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P.X.
- ²⁰ Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study 1996 P. 2.
- ²¹ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 5:
- ²² Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 9:
- ²³ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 180:
- ²⁴ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 72-75:
- ²⁵ Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study. 1996. P. 88-89.
- ²⁶ Llewellyn K. N. Remarks on the Theory of Appelate Decision and the Rules or Canons About How Statutes Are to Be Interpreted // 3 Vanderbilt Law Review. 1949-1950. P. 396.
- ²⁷ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 403:
- ²⁸ Այս և մյուս օրինակները կարողացել են Llewellyn K. N. Remarks on the Theory of Appelate Decision and the Rules or Canons About How Statutes Are to Be Interpreted // 3 Vanderbilt Law Review. 1949-1950 P. 401-406:
- ²⁹ Llewellyn K. N. A Realistic Jurisprudence -the Next Step // 30 Columbia Law Review 1930 P 453 ff.
- ³⁰ Llewellyn K. N. A Realistic Jurisprudence - the Next Step // 30 Columbia Law Review 1930. P 434 ft.
- ³¹ Llewellyn K. N. A Realistic Jurisprudence ? the Next Step // 30 Columbia Law Review 1930 P. 442 ff.
- ³² Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 443:
- ³³ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 434-435:
- ³⁴ Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study 1996. P. 81.
- ³⁵ Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review 1930-1931 P. 1242 ff.
- ³⁶ Fuller L. L. American Legal Realism//82 University of Pennsylvania Law Review 1933 1934 P 431.
- ³⁷ Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P. 128.
- ³⁸ Llewellyn K. N. On Reading and Using the New Jurisprudence // 26 American Bar Association Journal 1940. P. 418.
- ³⁹ Llewellyn K. N. The Common Law Tradition - Deciding Appeals. 1960. P. 19-51.
- ⁴⁰ Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and its Studiy 1996. P. 190.
- ⁴¹ Llewellyn K. N. Cases and Materials on the Law of Sales 1930 P X (մեջըերումը? Hull N.E.H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence. 1997. P. 178).
- ⁴² SLEwellyn K. N. The Common Law Tradition - Deciding Appeals 1960. P. 37.
- ⁴³ Pound R. The Call for a Realist Jurisprudence//44 Harvard Law Review. 1930-1931. P. 699-700.
- ⁴⁴ Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review 1930-1931. P. 1236-1237.
- ⁴⁵ Տե՛ս Ղամբարյան Արքուր, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 1254:
- ⁴⁶ Llewellyn K. N. On Reading and Using the New Jurisprudence // 26 American Bar Association Journal 1940. P. 420.
- ⁴⁷ Hull N. E. H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence 1997 P 143.

РЕЗЮМЕ***Формирование и развитие правового реализма в США***

В статье всесторонне излагаются основные черты концепции правового реализма, как одного из современных подходов правопонимания в западной теории права и правовой практики, а также раскрываются сущность и содержание данной концепции правопонимания.

SUMMARY***Formulation and development of the legal realism in USA***

In this article the main characteristics of the conception of legal realism are comprehensively stated as one of the modern approaches to legal understanding in the western theory of law and legal practice, and the essence and content of given conception are revealed.

ՀԱՍՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երևանի «Գլածոր» համալսարանի մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար
Երևանի «Գլածոր» համալսարանի ղեղիանուր իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՎԱՆՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ԵՐԱԾԽԱԽԸՆԵՐԸ



Կրթության իրավունքը՝ որպես մարդու բնական իրավունք, միջազգային մակարդակում սկսեց ճանաչվել Երկրորդ աշխարհամարտից հետո: Ներպետական կյանքի բազում իրավահարաբերությունների կարգավորման միջազգայնացումը ի վերջո հանգեցրեց նրան, որ մարդու կրթության իրավունքը նույնական ճանաչվեց որպես համընդգրկուն արժեք, ստացավ միջազգային իրավական կարգավորում և վերցվեց միջազգային պաշտպանության ներքո: ՍԱԿ-ի ստեղծմամբ ըստ էության, սկսվեց կրթության իրավունքի միջազգային իրավական կոնվենցիոն հիմքների ձևավորումը, որոնցում փորձ արվեց արտացոլել կրթության իրավունքի՝ որպես մարդու իրավունքների կարևոր բաղադրատարրի, թե՛ ազատական, թե՛ սոցիալիստական հայցակարգերը:

Ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքը երաշխավորվել ու կարգավորվել է մի շարք միջազգային համընդիանուր և տարածաշրջանային իրավական փաստաթղթերով, որոնց հիմնական նպատակը կրթության իրավունքի նորմների ու սկզբունքների ստանդարտացումն ու միասնականացումն է, այս բնագավառում պետությունների համար համընդիանուր վարքագծի կանոնների սահմանումը, ինչպես նաև միջազգային մակարդակով գրագիտության բարձրացման և կրթության իրավունքի ապահովման ուղղությամբ տարկող պայքարում միջազգային իրավունքի սուբյեկտների համար միջազգային պարտավորությունների և պատասխանատվության նախատեսումը:

Կրթության իրավունքի սոցիալական արժեքում և միջազգայնացման բաղադրականության անկյունարարը դրվեց հատկապես 1948թ. Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրում: Նախարանում հոչակագրի հեղինակները, գնահատելով այս փաստարութը՝ «որպես բոլոր ժողովուրդների ու ազգերի կողմից նվաճվելիք ընդհանուր մի շափանիշ», վերջինիս դրույթների կատարումը երաշխավորող կարևոր նախապայման

են տեսնում, *intervalia*, ուսումը և կրթությունը: Հոչակագրում մասնավորապես նշվում է. «...որպես յուրաքանչյուր անհատ և հասարակության ամեն մի մարմին, մշտապես մտապահելով սույն Հոչակագիրը, ձգտի ուսման ու կրթության միջոցով քաջակերել հարգանքն այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդիանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների և թե՛ դրանց իրավազորության ներքո գտնվող տարածքների ժողովուրդների կողմից»:

Հոչակագրի 26-րդ հոդվածում շարադրվեց կրթության՝ որպես մարդու բնական իրավունքի, միջազգային իրավական ընկալման և երաշխավորման ելակետային նշանակության հիմնադրույթները: Համաձայն այդ հոդվածի՝ ա) յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, բ) կրթությունը առնվազն տարրական և համբակրթական փուլերում անվճար է, գ) տարրական կրթությունը պարտադիր է, դ) տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի համբամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ ընդունակություններին համապատասխան հավասարապես մատչելի բոլորի համար (կետ 1):

Հոչակագրում ամրագրված են նաև այն սոցիալական խնդիրները, որոնք պետք է լուծվեն կրթության միջոցով: Համաձայն 26-րդ հոդվածի՝ կրթությունը պետք է նպատակառուղղված լինի անձի լիարժեք գարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ուսասական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուժողականության ու բարեկամությանը (կետ 2):

Հոչակագրում հասուն ընդգծվում է, որ «ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք» (կետ 3):

Կրթության միջազգային երաշխավորման

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ու կարգավորման գործում Հոչակագի 26-րդ հոդվածի բովանդակությունը հիմք հանդիսացավ հետազայում այս բնագավառում մի շաք միջազգային նորմերի ու սկզբունքների ձևավորման ու զարգացման համար:

Գնահատելով Հոչակագի 26-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների կարևորությունը՝ պետք է միաժամանակ փաստել, որ այսօր աշխարհում մոտավորապես 113 000 000 երեխաներ դպրոց չեն հաճախում: 774 000 000 մեծահասակներ չեն կարողանում գրել և կարդալ, որից 2/3-ը կանայք են: Սի շաք զարգացող երկրներում ծննդերը, սովորույթի համաձայն արգելում են աղջիկներին կրթություն ստանալ: Միևնույն ժամանակ հաշմանդամները, փախստականները, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենց կրթական ցածր մակարդակով մեծամասնություն են կազմում: 30 զարգացող պետություններում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ կրթության մակարդակը պայմանավորված է բնակչության սոցիալական դրությամբ²:

Կարելի է կարծել, որ 21-րդ դարում պետությունները լուծել են պարտադիր տարրական կրթություն ապահովեր խնդիրը կամ տարրական և հանրակրթական փուլերում երաշխավորել են դրա անվճար լինելը, այնինչ՝ վիճակագրությունը վկայում է, որ Հոչակագի նորմերը դեռևս չեն կորցրել իրենց արդիականությունը, և պետությունները բավականին անելիքներ ունեն կրթության իրավունքի լիարժեք երաշխավորման համար:

1960թ. Կրթության ոլորտում խտրականության դեմ կոնվենցիան պարտավորեցրեց մասնակից պետություններին Հոչակագրում ճանաչված յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքն ու խտրականության անթույլատրելիության սկզբունքը կյանքի կոչելիս ապահովել հավասար հնարավորություն և վերաբերմունք:

Քննարկվող կոնվենցիայի շրջանակներում պետությունները, առևտ առևտ, պարտավորեցին են չեղյալ հայտարարել ցանկացած նորմատիվ ակտ ու վարչական կարգադրություն և դադարեցնել վարչական ցանկացած պրակտիկա, որոնք խտրականություն են ներառում կրթության բնագավառում, երաշխավորել, անհրաժեշտության դեպքում օրենսդրական կարգով, խտրականության բացառում ուսումնական հաստատություններ սովորողների ընդունելության հարցում, պետական մարմնների կողմից ուսումնական հաստատություններին այս կամ այն տեսակի օգնություն ցուցաբերելիս թույլ չտալ որևէ սահմանափակում կամ նախապատվություն, որը բացառապես հիմնված լինի սո-

վորողների՝ որևէ խմբին պատկանելության վրա, իրենց տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիներին տրամադրել կրթություն ստանալու նույն հնարավորությունները, ինչ որ սեփական քաղաքացիներին (հոդվ. 3):

Բացի նրանից, որ կոնվենցիայով պետությունները կրթության իրավունքի երաշխավորման ընդհանուր բնույթի պարտավորություններ են ստանձնել (դարձնել տարրական կրթությունը անվճար և պարտադիր, միջնակարգ կրթությունն, իր տարրեր ձևերով, բոլորի համար հնարավոր և մատչելի, բարձրագույն կրթությունը՝ բոլորի համար հավասարապես մատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների): Վերջիններս պարտավորվել են նաև միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում ապահովագույն կրթական մատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների): Վերջիններս պարտավորվել են նաև միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում ապահովագույն կրթական մատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների):

Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ կոնվենցիան ամրագրեց ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը և պարտավորեցրեց պետություններին հարգել և անհրաժեշտ պայմաններ ստեղծել վերջինիս իրականացման համար:

Դատելով կոնվենցիայի շրջանակներում պետությունների ստանձնած պարտավորությունների բնույթի՝ պարզ է դառնում, որ կոնվենցիան լուծեց հետևյալ կարևորագույն խնդիրները. **առաջին**՝ պարտավորեցրեց պետություններին նյութական և իրավական նախադրյալներ ստեղծել կրթության իրավունքի իրացման համար, **երկրորդ**՝ պարտավորեցրեց պետություններին հավասար պայմաններ, հնարավորություն և վերաբերմունք ապահովել կրթություն ստանձնության համար, **երրորդ**՝ համապատասխան իրավական իմբեկ ստեղծեց շարունակական կրթության և ուսուցման երաշխավորման համար (հոդված 4, կետ (գ)), **չորրորդ**՝ իրավաբանորեն ամրագրեց պետության կողմից կրթական ստանդարտների ապահովման և կրթության որակի երաշխավորման անհրաժեշտությունն ու պարտադիրություն (հոդված 4, կետ (ը)):

Կրթության բնագավառում խտրականու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան կանխարգելմանն են ուղղված նաև միջազգային իրավական այլ փաստաթղթեր: Օրինակ՝ 1965թ. Ռասայական խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի⁴ 5-րդ հոդվածը նշում է. «...մասնակից պետությունները պարտավորվում են արգելել ու վերացնել ռասայական խորականությունն իր բոլոր ձևերով և ապահովել յուրաքանչյուրի իրավահավաքարությունն օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման տարրերակման, հասկապես ... կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունքի ... իրականացման կապակցությամբ»: 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը⁵ քննարկվող հարցի հետ կապված մասնավորապես նշում է, որ «այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել ... մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը» (հոդվ. 27): Այլ կերպ ասած՝ նորմը մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորություն է ընձեռում ոչ միայն ազգային, այլև կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին:

Կրթության ոլորտում խորականության դեմ է ուղղված նաև Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին 1979թ. կոնվենցիայի⁶ 10-րդ հոդվածը: Այս նորմի ուժով պետությունները համաձայնել են ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վերացնելու կանանց նկատմամբ խորականությունը կրթության ասպարեզում՝ կանանց համար տղամարդկանց հետ հավասար իրավունքներ երաշխավորելու նպատակով: Մասնավորապես, պետությունները պարտավորվել են երաշխավորել մասնասակ պայմաններ կարիերայի և մասնագիտական կողմնորոշման, կրթություն և դիպլոմներ ստանալու մատչելիության համար, միևնույն ուսումնական ծրագրերից, միևնույն քննություններից, միևնույն ստանդարտի որակավորման ուսուցչական անձնակազմից, միևնույն որակի դպրոցական շենքերից ու սարքավորումներից օգտվելու հնարավորություն, տղամարդկանց ու կանանց դերերի կարծրատիպային գաղափարի մերժում ուսման բոլոր մակարդակներում և ձևերում, կրթառոշակ և կրթության այլ նպաստներ ստանալու միատեսակ հնարավորություններ, շարունակող կրթության ծրագրերից օգտվելու միատեսակ հնարավորություններ, դպրոցը չավարտող աղջիկների թվի կրծատում և դպրոցը ժամանակից շուտ բողած աղջիկների ու կանանց համար ծրագրերի կազմակերպում, սպորտին և ֆի-

զիկական պատրաստության պարապմունքներին ակտիվորեն մասնակցելու միևնույն հնարավորություններ, կրթական հասուլ տեղեկատվությունից օգտվելու հնարավորություն:

Կարծում ենք, որ Կոնվենցիայի կարևորությունն ու առանձնահատկությունն այն է, որ առաջին ուղղված է կրթության ոլորտում հատկապես սեռային խորականության արգելմանը, երկրորդ՝ ուղղված է կրթության շնորհիվ հասարակության մեջ կնոջ դերի բարձրացմանը, երրորդ՝ պարտավորեցնում է պետություններին երաշխավորել խորականության դրսուրման արգելքը կրթության բոլոր մակարդակներում, ձևերում և ոլորտներում:

Կրթության բնագավառում խորականությունն արգելող միջազգային իրավանորմերը թոյլ են տալիս կարծել, որ ժամանակակից միջազգային իրավունքին հաջողվել է լուծել և խսպան վերացնել կրթության բնագավառում արմատացած խորականությունը, թեկուզ այն բանի ուժով, որ պարտավորությունների բարեխիղճ կատարման *յաւ օգուստուսի շնորհիվ պետությունները պարտավոր են կատարել իրենց միջազգային պարտավորությունները: Սինչդեռ, վիճակագրական տվյալները և ՍՎԿ-ի Տնտեսական և սոցիալական խորիրոյին ներկայացված բազմաթիվ գեկույցներ փաստում են, որ աշխարհի 72 000 000 երեխաներ չեն ստանում տարրական պարտադիր կրթություն, որից 54 տոկոսը աղջիկներ են:*

Կրթության իրավունքի միջազգային իրավական երաշխիքներ են սահմանվում նաև 1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով⁸: Ըստ Դաշնագրի 13-րդ հոդվածի՝ «պետությունները, ճանաչելով յուրաքանչյուրի կրթության իրավունքը, համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը նարդու իրավունքների ու իիմնարար ազատությունների նկատմամբ: Կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակությանը, նպաստելու բոլոր ազգերի և ռասայական, էթնիկական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և աշակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը» (կետ 1): Կրթության իրավունքի լիարժեք իրավանացման նպատակով Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ. ա) տարրական կրթությունը պարտադիր է և անվճար բոլորի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համար, թ) միջնակարգ կրթությունն իր տարրեր ձևերով, ներառյալ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, բաց և մատչելի է բոլորի համար բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով, զ) բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի է բոլորի համար բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով, դ) հիմնական կրթությունը խրախուսվում կամ հնարավորինս ակտիվացվում է այն անձանց համար, ովքեր չեն անցել կամ չեն ավարտել իրենց տարրական կրթության լրիվ դասընթացը, ե) պետք է ակտիվորեն իրականացնել բոլոր մակարդակների դպրոցների համակարգի զարգացումը, սահմանել կրթարոշակների բավարար համակարգը, սահմանել կրթարոշակների բավարար համակարգը, շարունակաբար կատարելագործել ուսուցչական կազմի նյութական պայմանները, չորրորդ՝ չափանիշական գիտական թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու և նեկավարելու ազատությունը, հինգերրորդ՝ երկու տարվա ընթացում աստիճանաբար ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն բոլորի համար:

1966թ. Դաշնագիրը երաշխավորում է նաև ծնողների կամ օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի այլ դպրոցների ընտրության, ինչպես նաև իրենց երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը (հոդվ. 13, կետ 3):

Դաշնագիրի 13-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է ուսումնական հաստատություններ հիմնելու ազատությանը և նշում է, որ «Սույն հոդվածի ոչ մի մաս չպետք է մեկնաբանվի որպես առանձին անձանց և մարմինների՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու և դրանք սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքներին և նման հաստատություններում այնպիսի նվազագույն ստանդարտներին համապատասխան դեկավարելու ազատության սահմանափակում, որոնք կարող են սահմանվել պետության կողմից»:

Դաշնագիրը, ելնելով այն հանգանանքից, որ կրթության իրավունքը բնական իրավունք է, պահանջում է մասնակից պետություններից, որ նրանք, ովքեր մասնակից դառնալու ժամանակ իրենց մետրոպոլիայի տարածքում կամ իրենց իրավագործության տակ գտնվող մյուս տարածքներում չեն կարողացել ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն, երկու տարվա ընթացքում աստիճանաբար երաշխավորեն պարտադիր անվճար տարրական կրթության իրավունքը բոլորի համար (հոդվ. 14):

Դաշնագիրի 13-րդ և 14-րդ հոդվածների բո-

վանդակությունն էականորեն տարրերվում է կրթության իրավունքը կարգավորող և երաշխավորող այլ միջազգային իրավանորմերից: Մասնավորապես դա արտահայտվում է նրանում, որ պետությունները, *առաջին առաջին առաջադիմական անվճար միջնակարգ կրթություն, երկրորդ՝ մտցնել առաջադիմական անվճար բարձրագույն կրթություն, երրորդ՝ զարգացնել բոլոր մակարդակի դպրոցների համակարգը, սահմանել կրթարոշակների բավարար համակարգ, շարունակաբար կատարելագործել ուսուցչական կազմի նյութական պայմանները, չորրորդ՝ չափանիշական գիտական թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու և նեկավարելու ազատությունը, հինգերրորդ՝ երկու տարվա ընթացում աստիճանաբար ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն բոլորի համար:*

Սի շարք միջազգային փաստաթղթեր մեկնաբանում են Դաշնագրում տեղ գտած հասկացությունները: Այսպես, «Տարրական կրթություն»-ը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Տարրական կրթությունն ընտանիքից դուրս ստացված կրթությունն է, որը երեխաների համար հիմնական կրթության միջոց է հանդիսանում: Այն պետք է լինի համբաւի առաջնային և ապահովի բոլոր երեխաների հիմնական կրթական կարիքների բավարարումը, ինչպես նաև հաշվի առնի տվյալ հասարակության մշակույթը, կարիքներն ու հնարավորությունները»: «Հիմնական կրթական կարիքներ» հասկացությունը ներառում է ուսումնառության անհրաժեշտ նախապայմանները (գրել, կարդալ, հաշվել և այլն) և ուսումնառության հիմնական բովանդակությունը (գիտելիք, հմտություն և այլն), որոնք անհրաժեշտ են նարդու գոյության, նրա ընդունակությունները զարգացնելու, արժանապատվորեն ապրելու և աշխատելու, լիարժեքորեն մասնակցելու ընթացող զարգացումներին, իրենց կենսամակարդակի որակը բարձրացնելու, որոշումներ կայացնելու և հետագա կրթությունը շարունակելու համար»: ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը նշել է, որ «Տարրական կրթություն» և «Հիմնական կրթություն» հասկացությունները, ճիշտ է, հոմանիշներ չեն, բայց դրանց միջև գոյություն ունի մեծ համապատասխանություն: Մասնավորապես Խորհուրդը ընդունել է այն հանգամանքը, որ «Տարրական կրթությունը հիմնական կրթության ամենակարևոր բաղկացուցիչ մասն է»:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը նշել է, որ չնայած Դաշնագրու ամրագրված միջնակարգ կրթության բովանդակությունը կարող է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տարբեր ժամանակներում պետությունների ներպետական օրենսդրություններում տարբեր լինել, բայց այն պետք է ներառի հիմնական կրթությունը և նախապայման հանդիսանա շարունակական կրթության ու մարդու զարգացման համար: Այսու կողմից միջնակարգ կրթությունը պետք է անձին նախապատրաստի տեխնիկական և մասնագիտական կրթություն ստանալուն: Միջնակարգ կրթության բաց և մատչելի լինելը ենթադրում է, որ անկախ անձի ընդունակություններից՝ կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին միևնույն մակարդակներում¹²:

«*Using itել առաջադիմական անվճար կրթություն» հասկացությունը ենթադրում է, որ չնայած պետությունների գործողություններն առաջին հերթին ուղղված են անվճար տարրական կրթության ապահովմանը, միևնույն ժամանակ նրանք պարտավոր են ձեռնարկել կոնկրետ քայլեր միջնակարգ և բարձրագույն կրթությունը նույնպես անվճար դարձնելու ուղղությամբ»:*

Ծննդեական և սոցիալական խորհրդի 13-րդ Ընդհանուր մեկնարանությունը փաստում է, որ «Դաշնագրով ամրագրված միջնակարգ ու բարձրագույն կրթության էական տարրերությունն այն է, որ միջնակարգ կրթությունը իր տարբեր ձևերով բաց և մատչելի է բոլորի համար, մինչդեռ բարձրագույն կրթությունը մատչելի է ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների»¹³:

Դաշնագրի 13-րդ հոդվածը երաշխավորում է նաև կրթության ազատությունը, որն այս դեպքում արտահայտվում է երկու ձևով: *Առաջին՝* ծնողներն ազատ են իրենց երեխաների կրթնական և բարոյական դաստիարակությունը կազմակերպել սեփական համոզունքին համապատասխան, երկրորդ՝ ծնողները (օրինական խնամակալները) ազատ են իրենց երեխաների համար պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի ընտրել այլ դպրոցները»¹⁴:

Դաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված ուսումական հաստատություններ ստեղծելու և ղեկավարելու ազատությունը, համաձայն 13-րդ Ընդհանուր մեկնարանության, տարրածվում է յուրաքանչյուրի, այդ բվում օստարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև իրավաբանական անձանց վրա: Այս ազատությունը վերաբերում է ցանկացած տեսակի ուսումնական հաստատություն հիմնելուն և ղեկավարելուն, միևնույն ժամանակ դա չպետք է հանգեցնի հասրակության որոշ խմբերի համար կրթական հիմքավորությունների ծայրահեղ տարբերությանը»¹⁵:

Կրթության իրավունքը ճանաչվել,

երաշխավորվել և ուրույն կարգավորում է ստացել 1989թ. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ և 29-րդ հոդվածներով¹⁷: Մասնակից պետությունները, համաձայնելով, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթության բնական իրավունք, ստանձնել են կրթության իրավունքի երաշխավորման համընդիանուր բնույթի պարտավորությունները»¹⁸:

Կոնվենցիան, միաժամանակ, պարտավորեցնում է պետություններին դպրոցական կարգապահությունն իրականացնել երեխայի նարդկային արժանապատվության հետ համատեղելի մերողներով (հոդվ. 28, կետ 2): Այս նորմը շրջադարձային նշանակություն ունեցավ այն առումով, որ կրթության կազմակերպման հիմքում դրվեց երեխայի անհատականությունը, պատիվն ու արժանապատվությունը:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի առանձնահատկությունն այն է, որ այն համապարփակ ձևով ամրագրում է կրթության նպատակները: Այսպես, մասնակից պետությունները պայմանավորվել են, որ կրթությունը պետք է ուղղված լինի. ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը դրանց լիիվ ծավալով, բ) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը, գ) երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը, դ) երեխային ազատ հասարակության մեջ փոխընթացնման, խաղաղության, հանդուժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, երիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելուն, ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը (հոդվ. 29, կետ 1):

Կոնվենցիան չի սահմանափակում առանձին անձանց կամ մարմինների՝ պետության կողմից սահմանված նվազագույն պահանջներին ու նորմներին համապատասխան՝ ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու իրավունքը (հոդվ. 29, կետ 2):

Հիմք ընդունելով կոնվենցիայի բովանդա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կությունը՝ կարելի է փաստել, որ պետությունները, առև ալիս, պարտավորվել են. առաջին՝ երաշխավորել կրթության իրավունքի իրացում հոդված 29-ի առաջին կետում ամրագրված նպատակներին համապատասխան, երկրորդ՝ ապահովել կրթության բնագավառում միջազգային համագործակցություն, երրորդ՝ երաշխավորել դպրոցական կարգապահության իրականացում երեխայի արժանապատվության հետ համատեղելի մերողներով:

Ելնելով այն հանգանանքից, որ կրթության իրավունքը բնական ու հիմնական իրավունք է և չի կարող մերժել ոչ ոքի, միջազգային իրավունքը համապատասխան իրավական երաշխիքներ է նախատեսել փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքի իրականացման համար: Այսպես, 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին¹⁹ և 1954թ. Քաղաքացիություն չունեցող անձանց մասին²⁰ կոնվենցիաների 22-րդ հոդվածների համաձայն՝ «Տարրական կրթության կապակցությամբ Պայմանավորվող պետությունները փախստականներին, քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին» (կետ 1): «Պայմանավորվող պետությունները տարրական կրթությունից տարրեր կրթության և, մասնավորապես, ուսուցման մատչելիության, օտարերկրյա դպրոցական վկայագրերի, դիմումների ու գիտական աստիճանների ճանաչման, տուրքերից ու վճարումներից ազատման և կրթառոշակների շնորհման կապակցությամբ փախստականներին, քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորին ոչ պակաս բարեհած վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին» (կետ 2):

Ամփոփելով՝ պետք է փաստել, որ ժամանակակից միջազգային իրավունքում առկա են կրթության իրավունքի երաշխավորման բավարար իրավական իիմքեր: Նշված միջազգային փաստաթղթերը կրթության իրավունքի միջազգային համբնդիանուր երաշխիքներ սահմանող հիմնական իրավական ակտերն են, որոնց առկայությունը վկայում է այն մասին, որ կրթության իրավունքը միջազգային համապարփակ իրավական կարգավորման և պաշտպանության արժանացած սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքներից մեկն է: Ներկայում միջազգային իրավունքը երաշխավորում է.

- յուրաքանչյուրի կրթության իրավունքը,
- բոլորի համար պարտադիր և անվճար հիմունքներով տարրական կրթության իրավունքը,

- բոլորի համար բաց և մատչելի միջնակարգ կրթության, ներառյալ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթության իրավունքը,

- բոլորի համար հավասարապես մատչելի բարձրագույն կրթության իրավունքը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,

- ծնողների՝ իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունքը,

- ծնողների՝ զավակների համար իրենց կրթության ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը,

- կրթության բնագավառում խտրականության արգելումը՝ անկախ ուսասայից, մաշկի գոյնից, սեղից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հանողմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, գոյլքային դրությունից, ծննդից կամ այլ կարգավիճակից,

- ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց ուսումնական հաստատություններ հիմնելու և դեկավարելու ազատության չսահմանափակումը,

- փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքը,

- դպրոցական կարգապահության իրականացումը երեխայի նարդկային արժանապատվության հետ համատեղելի մերողներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միաժամանակ փաստել, որ ժամանակակից միջազգային իրավունքը հատուկ երաշխիքներ չի նախատեսում ակադեմիական ազատության համար, իսկ մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և դեկավարելու իրավունքը ճանաչում է ծնողների՝ իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունքի իրականացման համատեքստում:

Գոյություն ունեն մի քանի հստակ նորմեր, որոնք պաշտպանում են ակադեմիական ազատությունը: Օրինակ, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերն ամրագրում են, որ պետությունները պարտավորվում են «հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը» և «խրախուսել միջազգային համագործակցությունը գիտական և մշակութային բնագավառներում»: 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

միջազգային դաշնագրի 18-րդ, 19-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներում ամրագրված են մտքի, կարծիքի, արտահայտվելու, տեղեկատվության, հավաքների և միավորումներ կազմելու ընդհանուր ազատություններ: Ակադեմիական ազատության վերաբերյալ հայտնի են որոշ ոչ համընդհանուր բնույթի հոչակագրեր, որոնք, սակայն, իրավական պարտավորություններ չեն առաջացնում մասնակից պետությունների համար²¹: 1993թ. մարտին ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՍԱԿ-ի Մարդու իրավունքների կենտրոնի կողմից փորձ արվեց ստեղծել Ակադեմիական ազատության մասին համընդհանուր հոչակագիր, սակայն վերջինիս նախագիծը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր խորհրդաժողովի հավանությանը չարժանացավ: Փաստորեն, չկան համալսարանականների ակադեմիական ազատության երաշխավորման և այսօրինակ հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական հստակ մեխանիզմներ և գործիքակազմ:

Կարծում ենք, որ միջազգային համրությունը քայլեր պետք է ձեռնարկի ակադեմիական ազատության հարաբերությունները կարգավորող միջազգային նորմեր և սկզբունքներ սահմանելու ուղղությամբ, մասնավորապես անհրաժեշտ է ընդունել Ակադեմիական ազատության մասին կոնվենցիա:

Հարկ է փաստել նաև, որ մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և դեկավարելու իրավունքի առնչությամբ ևս բացակայում են միջազգային իրավական հստակ հարաբերություններ:

մեխանիզմներ: Մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և դեկավարելու ազատություններ կրության իրավունքը երաշխավորող վերը քննարկված միջազգային համընդհանուր համաձայնագրերի շրջանականերում չի ճանաչվել, դրանցում ամրագրվել են միայն այս ազատություններ չսահմանափակող երաշխիքներ²²:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է միջազգայնորեն կարգավորել մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և դեկավարելու իրավունքի հետ կապված նշանակած և այլ հարցեր, ինչպես նաև ճանաչել և ամրագրել այս իրավունքը: Խնդիրն այն է, որ բազմաթիվ պետություններում գործում են մասնավոր ուսումնական հաստատություններ, որոնց իրավական կարգավիճակը, գործունեության սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները սահմանված են միայն պետությունների ներքետական օրենսդրություններով, և պրակտիկայում բացակայում են մասնավոր ուսումնական հաստատությունների նկատմամբ միասնական մոտեցում, ընդհանուր բնույթի միասնական նորմեր, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ: Կարծում ենք, որ այս բացը կարող է լրացվել միջազգային իրավունքի միջոցով՝ միջազգային իրավական համապատասխան նորմեր և սկզբունքներ ամրագրելով:

¹ Տե՛ս UN General Assembly, Universal Declaration of Human Rights, 10 December 1948, A/RES/217 (III).

² Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի E/2011/NGO/70 փաստաթուղթը, 16 մայիսի, 2011թ.:

³ Տե՛ս UN Educational, Scientific and Cultural Organisation, Convention against Discrimination in Education, adopted by the General Conference at its eleventh session, 14 December 1960.

⁴ Տե՛ս UN General Assembly, International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, 21 December 1965, A/RES/2106 (XX).

⁵ Տե՛ս UN General Assembly, International Covenant on Civil and Political Rights, 16 December 1966, A/RES/2200 (XXI).

⁶ Տե՛ս UN General Assembly, Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women, 18 December 1979, A/RES/34/180.

⁷ Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի E/CN.6/2011/NGO/23 փաստաթուղթը, 3 դեկտեմբերի, 2010, ինչպես նաև նույն խորհրդի E/CN.6/2011/NGO/55 փաստաթուղթը, 6 դեկտեմբերի, 2010: Տե՛ս նաև Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՍԱԿ-ի CEDAW/C/2007/III/3/Add.3 փաստաթուղթը, 11 մայիսի, 2007:

⁸ Տե՛ս UN General Assembly, International Covenant on Economic, Social and Cultural Rights, 16 December 1966, A/RES/2200 (XXI).

⁹ Տե՛ս Կրթություն բոլորի համար համաշխարհային հոչակագիր, 5 մարտի, 1990, հոդված 5:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, հոդված 1:

¹¹ Տե՛ս ՍԱԿ-ի E/C.12/1999/10 փաստաթուղթը, 8 դեկտեմբերի, 1999, կետ 9, 10:

¹² Տե՛ս ՍԱԿ-ի ED-2003/WS/73 փաստաթուղթը, էջ 11:

¹³ Տե՛ս ՍԱԿ-ի E.C.12/1999/10 փաստաթուղթը, 8 դեկտեմբերի, 1999, կետ 14:

¹⁴ Տե՛ս նույն տեղում կետ 19:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 28, 29:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, կետ 30:

¹⁷Տե՛ս UN General Assembly, Convention on the Rights of the Child, 20 November 1989, A/RES/44/25.

¹⁸Տե՛ս քննարկվող կոնվենցիայի հոդված 28, կետ 3:

¹⁹Տե՛ս UN General Assembly, Convention Relating to the Status of Refugees, 28 July 1951, 429 (V).

²⁰Տե՛ս UN General Assembly, Convention Relating to the Status of Stateless Persons. Adopted on 28 September 1954 by a Conference of Plenipotentiaries convened by Economic and Social Council resolution 526 A(XVII) of 26 April 1954.

²¹Օրինակ՝ Ազգեմիական ազատության և բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության մասին 1988թ. Լիմայի հոչակագիրը, Պոզնամի (Լեհաստան) 1993թ. Ազգեմիական ազատության մասին հոչակագիրը, Դար Էս Սալամի (Աֆրիկա) 1990թ. Ազգեմիական ազատության և ակադեմիական հանրության հասարակական պատասխանատվության մասին հոչակագիրը և այլն:

²²Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը, Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածի 2-րդ կետի ձևակերպումը և այլն:

РЕЗЮМЕ

Международные всеобщие конвенциональные гарантии права на образование

В современной международной системе прав человека, право на образование признается как естественное и неотчуждаемое право. Многие международные правовые документы гарантируют исполнение этого права в соответствии с международными правовыми принципами и стандартами. В этом контексте, в статье представляются и анализируются те международные правовые документы, которые содержат в себе нормы и начальные пункты о праве на образование и, при этом, обязывают государств-участников гарантировать старателльное исполнение этих норм. Особенно, в статье обсуждаются такие международные документы как Всеобщая декларация прав человека (1948), Конвенция о борьбе с дискриминацией в области образования (1960), Международная конвенция о ликвидации всех форм расовой дискриминации (1965), Международный пакт об экономических, социальных и культурных правах (1966), Международный пакт о гражданских и политических правах (1966), Конвенция о ликвидации всех форм дискриминации в отношении женщин (1979), Конвенция о правах ребенка (1989) и т.д.. В статье обсуждаются международные гарантии в сфере образовательного права, характер обязательств государств-участников, те образовательно-правовые отношения, которые регулируются нормами международного права. В статье анализируются такие понятия, как “начальное образование”, “основное образование”, “среднее образование” и т.д.. В этом контексте, научное исследование показывает, что современное международное право гарантирует:

- право на образование каждого человека,
- обязательное и бесплатное начальное образование для всех,
- открытое и доступное среднее образование для всех в его различных формах, включая профессионально-техническое образование,
- одинаково доступное высшее образование для всех на основе способностей каждого,
- свободу родителей и в соответствующих случаях законных опекунов, выбирать для своих детей тип образования,
- право родителей и в соответствующих случаях законных опекунов, обеспечивать религиозное и нравственное воспитание своих детей в соответствии со своими собственными убеждениями,
- право на образование без какого бы то ни было различия, как-то в отношении расы, цвета кожи, пола, языка, религии, политических или иных убеждений, национального или социального происхождения, имущественного, сословного или иного положения,
- право национальных меньшинств вести собственную просветительскую работу, включая руководство школами,
- не умаление свободы отдельных лиц и учреждений создавать учебные заведения и руководить ими,
- право на образование беженцев и лиц не имеющих гражданство,
- поддерживание школьной дисциплины с помощью методов, отражающих уважение человеческого достоинства ребенка.

По мнению автора, в современном международном праве отсутствуют конкретные нормы гарантировящие академическую свободу; право отдельных лиц и учреждений создавать учебные заведения и руководить ими не признается и не регулируется международными конкретными нормами, а признается не умаление свободы этого права.

В статье делаются конкретные предложения для заполнения этих пропусков в международном праве.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

SUMMARY

International Universal Conventional Guarantees for the Right to Education

In the human rights' contemporary international system, the right for education has been recognized as natural and inalienable right. Many international documents guarantee the implementation of this right according to international principles and standards. In this sense, the article present and analyse those international legal documents, which contain norms and points of departure on the right for education and obligate states parties to secure diligent implementation of these provisions. Particularly, the author touch upon Universal Declaration of Human Rights (1948), Convention against Discrimination in Education (1960), International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination International (1965) Covenant on Civil and Political Rights (1966), International Covenant on Economic, Social and Cultural Rights (1966), Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (1979), Convention on the Rights of the Child (1989) and etc..

Article brings to light the scope of international guarantees for the right to education, the nature of states' obligations, those educational relations, which are regulated by the norms of international law. In the article are analysed a number of concepts which hold a firm place in above mentioned documents, such as "elementary education", "primary education", "secondary education" and etc.. In this aspect, the research shows that contemporary international law guarantees:

- the right for everyone to the education,
- free and compulsory Primary education to all,
- generally available and accessible Secondary education in its different forms, including technical and vocational Secondary education to all,
- on the basis of capacity, equally accessible higher education to all,
- the liberty of parents and, when applicable, legal guardians to choose for their children schools and type of education,
- the right of parents to ensure such education and teaching in conformity with their own religious and philosophical convictions,
- prohibition of discrimination in education of any kind such as race, colour, sex, language, religion, political or other opinion, national or social origin, property, birth or other status,
- the right of members of national minorities to carry on their own educational activities, including the maintenance of schools and the use or the teaching of their own language,
- not interference with the liberty of individuals and bodies to establish and direct educational institutions,
- right for education to refugees and stateless persons,
- the administration of school education in a manner consistent with the child's human dignity.

According to the author, contemporary international law does not have strict norms for guaranteeing academic freedom. At the same time, international law does not recognize the right of individuals and bodies to establish and direct educational institutions, international law only guarantees not interference with this right.

In order to fill these gapes, the author makes concrete suggestions.

ԱՆՍԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Խաչատոր Աբովյանի անվան հայկական պետական
մանկարժական համալսարանի քաղաքագիտության և
իրավունքի պատմության ամբիոնի հայցորդ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ԳԼՈԲԱԼԱՑՎՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գլոբալացման գործնքացները, փոխելով
աշխարհաքաղական պատկերները և միջազ-
գային անվտանգության միջավայրը, հարկադրում
են մարդկանց ու երկրներին արձագանքել 21-րդ
դարի առաջադրած նոր սպառնալիքներին ու մար-
տահրավերներին: Հիմ մարտահրավերները տեղը
զիցել են նորերին, որոնք խթանել են անվտանգու-
թյան, հակամարտության և խաղաղության գաղա-
փարների շուրջ նոր մտածողության ձևավորմանը:
Նոր աշխարհի կարևորագույն խնդիրներն են նաև
ազգային պետականության և ազգային անվտան-
գության պահպանման հարցերը: Ուստի, կարեռելով
արդիական ու կենսականորեն անհրաժեշտ
համարվող անվտանգություն երևույթը, փորձենք
հանգանակութեն ներկայացնել այս եզրույթի տար-
բեր բացատրությունները:

«Անվտանգություն» հասկացությունը տար-
բեր աղբյուրներում ձևակերպված է տարբեր կերպ՝
մի վիճակ, որի ժամանակ վտանգ չի սպառնում, կա
վտանգից պաշտպանվածություն՝ կամ վտանգից
բացակայություն, վիճակ, երբ որևէ մեկին կամ մի
բանի վտանգ չի սպառնում²:

Ըստ Բարի Բյուզանի՝ «Անվտանգությունը
կարելի է ընկալել որպես սպառնալիքի դեմ պայքա-
րելու և պետությունների ու հասարակությունների
ինքնության և քննամական համարվող ուժերի դեմ
իրենց ֆունկցիոնալ ամբողջականության պահ-
պանման ունակությունը³:

Քաղաքագետ Լ. Շիրինյանի բնորոշմանը
անվտանգությունը հասարակական օրգանիզմի
այս վիճակն է, երբ նա, չնայած ներքին և արտա-
քին անբարենապատ ներգործություններին, պահ-
պանում է իր ամբողջությունն ու ինքնազարգա-
ման կարողությունը⁴:

Այսինքն՝ տարբեր բնորոշումների ընդհան-
րացումով կարելի է եզրակացնել, որ անվտանգու-
թյունը մարդկության բարեկեցությունն ապահովող
իհմնական գործուն է, մի վիճակ, որին ականա
փորձում է հասնել յուրաքանչյուր՝ ձգտելով անվ-
տանգ ու ապահով դրանել իրեն շրջապատող աշ-
խարհը և բացառել ինքնապաշտպանության և
սպառնալիքի գոյությունը:

Սակայն երևույթն ավելի լայն ու խոր իմաս-

տավորում է ստանում, երբ առնչվում է ազգային
անվտանգությանը:

Քաղաքագիտության հանրագիտական բա-
ռարանում «ազգային անվտանգություն» հասկա-
ցությունը սահմանվում է որպես արտաքին և ներ-
քին վտանգներից հասարակության և պետության
կենսական կարևորագույն շահերի պաշտպանվա-
ծության վիճակը, ինչպես նաև քաղաքական, տն-
տեսական, գիտատեխնիկական, տեղեկատվա-
կան, բնապահպանական և այլ տիպի անվտանգու-
թյունների հանրագումարը⁵:

Երբեմն ազգային անվտանգությունը սահ-
մանվում է որպես ազգային կենսակերպի
և գոյապահպանության, ինչպես նաև զարգացման
նկատմամբ սպառնալիքների բացակայություն⁶:

Ըստ Լ. Շիրինյանի՝ ազգային անվտանգու-
թյունը կապերի ու հարաբերությունների այնպիսի
ամբողջություն է, որոնք բնութագրում են անձի, հա-
սարակության և պետության մի վիճակ, երբ ապա-
հովում է նրանց հաստատուն գոյությունը, կենսա-
կան պահաճմունքների բավարարումն ու իրակա-
նացումը, ներքին ու արտաքին վտանգների կասե-
ցումը, անձի, հասարակության ու պետության ինք-
նազարգացումն ու առաջընթացը: Ազգային անվ-
տանգությունն արտացոլում է անվտանգության
կապը ազգի՝ որպես ամբողջական համակարգի
հետ: Վերջինս իր մեջ ընդգրկում է հասարակական
ինստիտուտներն ու նրանց գործունեությունը,
որոնք և ապահովում են ազգային շահերի իրակա-
նացումը պատմականորեն ձևավորված կոնկրետ
իրադրության մեջ: Ազգը տվյալ դեպքում հանդես է
գալիս որպես էթնիկ մի հանրություն՝ իր ավան-
դույթներով, սովորություններով ու մշակույթով⁷:

Միաժամանակ, արտաքին և ներքին
վտանգներից հասարակության և պետության կեն-
սական շահերի պաշտպանվածության վիճակն
անվանվում է նաև պետական անվտանգություն: Մի
խումբ հեղինակներ պետական անվտանգու-
թյունը դիտում են որպես պետականության և երկ-
րում հասարակական կարգի ամրության, տարած-
քային ամբողջականության անձեռնմխելիության և
արտաքին ու ներքին քաղաքականության որոշման
հարցում անկախության վիճակ, մեկ այլ խումբ՝ որ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես հակառակորդի քայլայիշ գործունեությունից պաշտպանված վիճակ⁸, մյուսների պնդմամբ՝ պետական անվտանգությունը քչնամական ուժերին հակադրվելու պետության ընդունակությունն է և ժողովրդի շահերի պաշտպանությունը:

Ընդհանուր առմամբ «ազգային անվտանգություն» և «պետական անվտանգություն» հասկացություններն ունեն հոմանիշային ընդհանություն, սակայն, առանձին դեպքերում, ազգային անվտանգությունն օգտագործվում է ավելի լայն առումով՝ ընդգրկելով պետական անվտանգությունն իրեւ մասնավոր դեպք, և, քանի որ ազգերը կազմակերպվում են պետության ձևով, պետական անվտանգությունն ինքնին դառնում է ազգային անվտանգության բաղադրիչը՝ ներառելով քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, քնապահպամությունը, զյուղատնտեսությունը, տեղեկատվական և էներգետիկ դաշտերը և այլն:

Ընդունված է առանձնացնել ազգային անվտանգության երեք սուբյեկտ՝ անձ, հասարակություն և պետություն:

Այս առիթով մեջքերենք Թոմաս Հորսի այն դիտարկումը, որ պետության և պետական քաղաքականության հիմնախնդիրը պետության, հասարակության և անձի անվտանգությունն է միաժամանակ՝⁹:

Սեկ այլ աղբյուրում նշվում է, որ ազգային անվտանգությունը համակարգ է, որտեղ անընդհատ փոխհարաբերության մեջ են գտնվում անձի, հասարակության և պետության շահերն ու դրանց մերին և արտաքին սպառնալիքները :

Արդի պայմաններում անվտանգության ապահովման մերողների մշակումն առնշվում է այնպիսի երևույթների ծագմանն ու ակնթարքային գարգացմանը, ինչպիսիք են զրոբալացումը և միջազգային ինտեգրումը (համարկումը): Ակնհայտ է՝ զրոբալացման արդյունքում աշխարհին աստիճանաբար դառնում է միասնական համակարգ, ինչն էլ մտավախություն է առաջացնում, որ արագործեն զրոբացող այս գործներացի հետևանքով տեղի է ունենում համաշխարհային ստանդարտացում և ազգային մշակույթների միօրինակացում, որոնք ահազանգ են մարդկությանը:

Պատմական զարգացման ընթացքում իր կուտակած հարուստ կենսափորձով իմաստնացած մարդկությունը նոր հազարամյակում իրեն բազում նոր խնդիրներ է առաջադրում: Գլոբալացման գործընթացը, ցանկացած երկրի առջև մեծ հնարավորություններ ու չափազանց գրավիչ հեռանկարներ բացելով, զերծ չէ տարաբնույթ վտանգներից ու սպառնալիքներից, որոնցից, մասնավորապես, կարելի է առանձնացնել 21-րդ դարը բնորոշող

1. քաղաքական սպառնալիքները՝ ներքին քաղաքական անկայունություն, ահաբեկչություն, մարդու իրավունքների ուսնահարում,

2. տնտեսական սպառնալիքները՝ աղքատություն, հարուստ և աղքատ երկրների միջև աճող անդունդ, ներքին ֆինանսական ճգնաժամեր, հարուստ և աղքատ երկրների միջև մեծացող անդունդ, տնտեսապես հզոր պետությունների կամ անկայուն երկրների հարևանության ազդեցություն և հեղինակային իրավունքների խախտում,

3. շրջակա միջավայրի կամ մարդու ստեղծած սպառնալիքները՝ միջուկային աղետ, գլոբալ բնական միջավայրի փոփոխություններ, հողի և ջրի աղտոտում, սննդի և այլ ռեսուրսների պակաս,

4. սոցիալական սպառնալիքները՝ փոքրամասնություն-մեծամասնություն, հակամարտություն, քաղաքների գերբնակեցվածություն (ուրբանիզացիա) և գյուղերի ամայացում, քմրանյութերի միջազգային առևտուր, անվերահսկելի զանգվածային արտագաղք և հիվանդություններ¹⁰:

Համաշխարհային զարգացման ներկա փուլին բնորոշ են միջազգային, տարածաշրջանային և դրանց համատեքստում՝ ազգային անվտանգության խնդիրները, որոնց լուծումը հնարավոր է տալ միայն փոխագործակցության և միասնական որոշումներ կայացնելով ուղին ընտրելով՝ այն միանշանակ ընդունելով իրեւ դարաշրջանի պարտադրությունը: Երկրաշաղաքական անկանխատեսված բացող զարգացումները հանգեցրել են դեռևս ոչ վաղ անցյալում անլուծելի բացող մի շարք խնդիրների առաջացմանը: Ուստի, աշխարհաքաղաքական զարգացումների ներկա փուլում մշակութային ու տեղեկատվական մերձեցման համատեքստում առաջ են մնվում ազգային ինքնության պահպանաման անհրաժեշտ տարր հանդիսացող հոգևոր մշակութային անվտանգության պահպանման, միջազգային ահաբեկչությունների, էքնիկ և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման խնդիրները:

Երկրաքաղաքական ներկայիս զարգացումները թելադրում են առավելագույն զգուշակություն մասնավորապես փոքրաթիվ ժողովուրդների ինքնության պահպանման, ազգային անվտանգության պահպանման, ազգային քաղաքականության կերտման և ազգային հիմնարար արժեքների ստեղծման ու պահպանման հարցերում: Ուստի, յուրաքանչյուր ազգ ստեղծված վտանգներին դիմակայելու համար պետք է ունենա իր կենսակերպին համապատասխանող ազգային անվտանգության պահպանման ամուր համակարգ, որի հիմքում պետք է ընկած լինի տարաբնույթ սպառնալիքների բացահայտումը, կանխարգելումն ու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խափանումը:

Դարաշրջանը բնութագրող մի շարք արդիական խնդիրների կողքին իրեւ առավել վտանգավոր մարտահրավեր կարելի է դիտարկել կիրեհանցագործությունները և տեղեկատվական տեխնոլոգիաների երկակի դերը։ Սի կողմից իրեւ առաջնարկագործության գործուն տեղեկատվական հարթությունում ամրապնդելով երկրի դիրքերը՝ մեծացնում են ազգային հզորության ավանդական բաղադրատարրերի՝ դիմանագիտության, ռազմական, տնտեսական ոլորտների տեսակարար կշիռը, մյուս կողմից տեղեկատվական տեխնոլոգիաները դառնում են միջազգային ահարեւկության և անվտանգության ու խաղաղության սահմանան ամենավտանգավոր գործիքներ։ Ուստի, հատկապես վերջին տարիներին, տարբեր միջազգային կազմակերպություններ աշխատում են տեղեկատվական տեխնոլոգիաները ծառայեցնել մասնավորապես միջազգային անվտանգությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու և մարդու իրավունքների ու ազատությունների ուղարկումը կանխելու ուղղությամբ օգտագործելուն։

Գլոբալացվող աշխարհում Հայաստանն իր տեղն ունի և ներգրավված է միջազգային ու տարածաշրջանային զարգացումներին ուղղված մի շարք միջոցառումներում։ Անառարկելի է այն փաստը, որ մեր երկիրի անվտանգությունն իր ներպետական նշանակությունից բացի նաև տարածաշրջանային և գլոբալ անվտանգության անքաժանելի մասն է։ Եվ, հարկավ, իրեւ համաշխարհային իրականության անքալտելի մաս, վտանգներից ու սպառնալիքներից զերծ չեն նաև Հայաստանի Հանրապետությունն ու աշխարհասփյուր հայությունը, որ դարերի հոլովույթում գոյատևել է միայն իր համառությամբ ու ազգային ինքնուրույն միավոր մնալու անսասան կամքով, անշուշտ, անմասն չմնալով համաշխարհային քաղաքական ու մշակութային կյանքից։ Այս գիտակցությունը մեր մեջ ամուր նստած է ու նոյնիսկ, կարելի է ասել, արմատակալած մեր գոյության ողջ ընթացքում։

Մեջբերենք հայ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի՝ դեռևս 20-րդ դարի սկզբին ասված խոսքը. «Մեր մոտավոր նախատակն է կուլտուրական մի ժողովուրդ լինել, այսինքն զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ խորով արտահայտել մեզ կյանքում, այսինքն՝ մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբր խորք զավակ կամ ծովյ ու խավար մի ստրուկ, ծովել մեր կյանքը համաշխարհային կյանքի հոսանքին՝ պահպանելով մեր հոգուն առանձնահատուկ գծերն ու գույները։ Այլ խոսքով՝ ունենալ մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հա-

նուր մարդկության ստեղծագործության մեջ»¹³։

Հավելենք, որ այս ամենին հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ ազգային մտածողություն, ազգային ինքնագիտակցություն և ազգային արժեքներն անաղարտ պահելու հաստատում կամք, քանի ազգային անվտանգությունը նախ և առաջ արտացոլվում է ազգային մտածողության, ազգի քաղաքական, տնտեսական, գաղափարական, ռազմական և այլ հայացքներում, որոնք ներկայացնում են նրա հոգևոր զարգացման բովանդակությունը, մակարդակն ու առանձնահատկությունները։

Գլոբալացում կոչվող համաշխարհային ամենակուլ այս գործնական ավելի մեծ մտավախություն է առաջացնում ազգամշակութային ինքնության կորացույան և ուժացման խնդիրներում։ Այսօր, ավելի քան երեսէ, մեր առջև կանգնած է ազգային ինքնության պահպանման խնդիրը։ Այն, անկասկած, միայն ազգային հայեցակարգեր ու ռազմավարություն մշակելը չէ, այլ իր պատմությանը քաջածանոթ յուրաքանչյուր հայ մարդու՝ գլոբալացվող աշխարհի հոլովույթում իր տեսակն ամուր պահելու պարզ ընկալումը։ Կարծում ենք, շնայած դարավիր պատմության հոլովույթում քաղմից արծարծված է այս հարցը և, նոյնիսկ, կարելի է ասել, քաղմից ծեծված, սակայն, մեկ անգամ ևս հարկ է նշել, որ ազգային ինքնության պահպանման մեր ամենահզոր գործիքը լեզուն է, որը վտանգված է։ Լեզվի անաղարտությունն այսօր կարող է ամուր վահանի դեր կատարել մեր երկրի ազգային անվտանգության, պետականության և ինքնության պահպանման գործում։

Մեջբերենք Լ. Շիրինյանի հետևյալ բնորոշումը՝ արդի Հայաստանի երկրառազմավարությունը պետք է մշակվի ու հիմնավորվի առարկայական implicate տվյալներով՝ երկրի երկրարարական դիրքերով և պատմամշակութային, քաղաքակրթական առանձնահատկությունների, հայոց ազգային ինքնության ճանաչողությամբ (ընդգծում՝ հետ), իսկ պետական կառույցի վոփնիսությունների տրամաբանությունը պետք է կատարվի հիշյալ գործոնների պահանջների ողով։

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ազգային անվտանգության իր ռազմավարությունը, որը պետության, հասարակության և անհատի անվտանգության պահպանման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական բաղաքականության համակարգն է։ Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժամանակակից կառավագական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

քաղաքականության մշակման և իրազործման միջոցով»¹⁶:

Ամփոփելով, նշենք, որ, հիրավի, մեր պետական քաղաքականության հիմքում ընկած է աշխարհաքաղաքական զարգացումներից հետ չմնալու, աշխարհում տեղի ունեցող դրական բոլոր փոփոխություններին արձագանքելու, համաշխարհային գործընթացին ինտեգրվելու գաղափարը, հաշվի առնելով, որ արդի գլոբալացվող աշխարհի նոր

մարտահրավերներին դիմակայելու և համարժեք հակագիրելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պետություն և հասարակություն ենթարկվի դարաշրջանի փոփոխություններին՝ ձգտելով նոր մշակող հայեցակարգերի միջոցով բարեփոխել կյանքը՝ առանց խեղաքուրելու ազգային նկարագրը և վտանգի ենթարկելու սեփական երկրի ազգային անվտանգությունը:

¹ Steu Ожегов С.И., Шведова Н.Ф., Толковый словарь русского языка.- М.: Азъ, 1994, С.928.

² Steu Ժամանակակից հայոց լեզվի բացադրական բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, հատոր 1, էջ 137:

³ Steu Buzan Barry, "New Patterns of Global Security in the Twenty-first Century" International Affairs, 1991, pp. 432-433.

⁴ Steu Շիրինյան Լ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունը /Հասարակական միտքը արդի ժամանակաշրջանում/, ՀՀ ԳԱ ՓՄԻԻ, Եր., 2011, էջ 179:

⁵ Steu Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան /Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բարաջանյան Ա., Աստվածատրյուն Ս., Եր. 2004, էջ 13-14:

⁶ Steu Շահգելյան Մ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավաճակ» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 3:

⁷ Steu Շիրինյան Լ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունը /Հասարակական միտքը արդի ժամանակաշրջանում/, ՀՀ ԳԱ ՓՄԻԻ, Եր., 2011, էջ 179:

⁸ Steu Արխիս Ա., Գործեցի Ա., Միհայլո Բ. Էкономическая безопасность: оценки проблемы, способы обеспечения, Вопросы экономики, N12, 1994, С.36-44.

⁹ Steu Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.

¹⁰ Steu Trager F., Simone F., An Introduction to the Study of National Security//National Security and American Society: Theory, Process and Policy. Ed by Trager F., Kronenberg P., Lawrence, University of Kansas, 1973.

¹¹ Steu Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. Մերուդարձնություն և արդյունքներ, «Նորավաճակ» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2005, էջ 29:

¹² Steu Անվտանգության ոլորտի խորհրդատվական վերահսկողություն. սկզբունքներ, լծակներ և գործունեություն, Լուսան, 2003, էջ 25:

¹³ Steu Տերյան Վ., Հայ գրականության գալիք օրը, Երկեր, Սովետ. գրող, 1989, էջ 314:

¹⁴ Steu Воронов А.А. Основы национальной безопасности. Научно-практическое пособие. Общая часть., М., 2000, С. 1.

¹⁵ Steu Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Եր., 2010, էջ 13:

¹⁶ Steu «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

РЕЗЮМЕ

Вопросы национальной безопасности в современном глобализирующемся мире

Процесс глобализации, изменяя общечеловеческие представления о международной безопасности, вынуждает человечество иначе откликаться на новые вызовы и угрозы. Старые проблемы уступили новым, способствуя формированию нового мышления в сфере безопасности, противостояния и мира. В современном мире важнейшими являются также вопросы, касающиеся национальной государственности и безопасности. Считая данную проблему актуальной и жизненно необходимой, автор в данной статье представляет некоторые проблемы государственной безопасности, продиктованные новой эпохой.

SUMMARY

National security issues in the modern globalized World

Processes of globalization, changing geopolitical images and international security environment, makes people and countries to respond to the 21st century's new threats and challenges. Old challenges to yield place to new people, promote security, peace and conflict of ideas about the formation of a new way of thinking. New world's most important tasks of the national security state and national issues. Highlighting the urgent and vital as security phenomenon, we tried to present in detail the article's era national security issues.

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

«Կոնցեն-Դիալոգ» փաստաբանական ընկերություն ՓԲԸ-ի
ավագ իրավաբան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի իրավագիտության բաժնի ասպիրանտ

ՕՐԵՆՔ-ՕՐԵՆՍԳԻՐՔ ԿՈԼԻՉԻՈՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽՆԴԻՐԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՈՒՄ: ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ:

Նախաբան

Երբ օրենքի և օրենսգրքի միջև առկա է հակասություն, ապա ո՞րն է գերակա:

Համաձայն գործող «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով սահմանված՝ առավել քարձոր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա»:

Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավական կողիզիաները լուծվում են իրավական ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա: Հետևապես օրենքի և օրենսգրքի միջև վերը նշված հակասության հարցը կողիզիոն հարց է:

Այս կողիզիոն հարցի լուծման համատերսուում ձևավորվել է մոտեցում, համաձայն որի՝ օրենք-օրենսգրք հակասությունը պետք է միանշանակ լուծվի օրենսգրքին նախապատվություն տալու միջոցով, քանի որ օրենսգրքը կողիֆիկացված իրավունք է: Մեր կարծիքով այս մոտեցումը սխալ է, և նրա հետևանքով ձևավորվել է իրավակիրառ սխալ պրակտիկա, որովհետև, ինչպես պաշտպանվում է սույն աշխատանքում, օրենսգրքը օրենք հակասությունը անհրաժեշտաբար չի հանգեցնում օրենսգրքի գերակայությանը:

Խնդիրը պետք է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Իրավական ակտերի մասին» օրենքի, ձևավորված դատական պրակտիկայի և կողիֆիկացիայի տեսության համատեքստուում:

Այսպիսով, սույն աշխատանքում կփորձենք ցույց տալ, որ կողիֆիկացիային նախապատվություն տալը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իմաստ չունի, ավելին՝ սխալ է գործող Սահմանադրության և «Իրավական

ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տեսանկյունից:

Սույն աշխատանքը նպատակ ունի ցույց տալ, որ օրենսգրք-օրենք հակասությունը լուծվում է ընդիհանուր կողիզիոն կանոններով, որոնք ամրագրված են «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածում:

Օրենսգրքի «գերակայությունը»

Օրենսգրք-օրենք կողիզիաների դեպքում օրենսգրքին նախապատվություն տալու գաղափարը առաջացել է մասնավորապես իրավական համակարգի կողիֆիկացման ձևով համակարգման գաղափարից:

Ինչպես ընդունված է նշել տեսության մեջ, օրենսդրության կողիֆիկացիան համակարգման ձև է, որն էապես վերամշակում, փոփոխում, նորացնում է իրավունքի որոշակի ճյուղի կամ ենթաճյուղի իրավական ակտերը, և որի արդյունքում ընդունվում է կողիֆիկացված ակտ: Այդպիսի կողիֆիկացման ակտեր են օրենքների ժողովածուները, օրենսգրքերը, օրենսդրության հիմունքները, կանոնադրությունները, կանոնագրքերը, դրույթները և այլն:

Կողիֆիկացիային ըստ տեսության բնորոշ են մի շարք գծեր:

1. կողիֆիկացիայում կարգավորվում են տվյալ ոլորտի առավել կարևոր սկզբունքային հարաբերությունները,

2. կողիֆիկացիան կարգավորում է հարաբերությունների լայն ոլորտ,

3. կողիֆիկացիան մեկ միասնական փաստաթուղթ է,

4. կողիֆիկացիան ուղղված է ավելի արդյունավետ կարգավորումների սահմանմանը,

5. կողիֆիկացիան ունի համակարգվածություն,

6. կողիֆիկացիայի ակտը ծավալուն է, ունի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բարդ կառուցվածք²:

Ինչպես կարելի է տեսնել, թվարկված առանձնահատկությունները բնորոշ են ցանկացած օրենքի:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ «օրենքը կարգավորում է առավել կարելոր, բնորոշ և կայուն հասարակական հարաբերություններ», այսինքն՝ օրենքը բավարարում է նշված 1-ին և 2-րդ չափորոշիչներին՝ ըստ սահմանամանի. իսկ մյուս չափորոշիչներին համապատասխանությունը նույնականացնելու հետ ապացուցելի է:

Այսպիսով, առաջին խնդիրը, որ անհրաժեշտ է ընդգծել պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրների տեսանկյունից, այն է, որ մշակված տեսական չափորոշիչները բավարար հստակ չեն, և, ավելին, չունեն պրակտիկ նշանակություն: Տեսությունը նշակվել է օրինակ՝ փաստաթղթերի ուսումնափրության հիման վրա, ինչպես Նապոլեոնի օրենսգիրքը կամ Հուստինիանոսի օրենքների ժողովածուն, որոնք, հանդիսանալով առաջին փաստաթղթեր, հմարավոր են բավարարել են կողմից կացիայի հիշատակվող տեսական չափորոշիչներին՝ որպես իրենց ժամանակի օրենսդրությունում համեմատաբար եղակի նմուշներ:

Այս մոտեցումը հանգեցրել է նոյն քյուր պատկերացմանը, որ օրենսգիրքը (կողմից կացված օրենքը) «ավելի լավն է», ավելի որակյալ է, քան օրենքը, հետևապես օրենսգրքին պետք է տրվի նախապատվություն: Սակայն այս պատկերացման մեջ չկա պատճառականություն:

Եթե օրենսգիրքն ընդունվում է՝ վերամշակելով իին օրենքները, ապա այն կարող է լինել ավելի ժամանակակից, իսկ համակարգելով ու ձևափոխելով իինը՝ ավելի որակյալ, բայց եթե այն նախորդում է նոր օրենքին, որն ավելի արելված է արտահայտում հասարակական հարաբերությունների զարգացման կարգավորումները, հավանաբար օրենքն է ավելի որակյալ, քան իին օրենսգիրքը:

Եվ, վերջապես, կողմից կացիան պահպանողական դրսերում է: Այն արտահայտում է տվյալ ժամանակահատվածի քաղաքական գործընթացը և կաշկանդում է իրավական համակարգը:

Անդրադառնանք մեր երկրի պրակտիկային:

Հայաստանի իրավակիրառական պրակտիկայում օրենսգրքին նախապատվություն տալու տեսակետը հիմնվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի վրա, համաձայն որի՝

«Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:

Ինչպես նկատելի է, նորմով սահմանվում է պարտավորություն՝ բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Սակայն պարզ չէ, թե ում համար է սահմանված կանոնը, և որն է դրա հետևանքը: Եթե այն սահմանված է օրենսդրի համար, ապա հավանաբար, կա այս նորմի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարց, որովհետև Սահմանադրության 62-րդ հոդվածից բխում է, որ օրենսդրի պարտականությունները կարող են սահմանվել միայն Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով: Թեև զուտ ինքն իրենով այս նորմը չի հանդիսանում կոլիգիոն իրավիճակի լուծում⁴, բայց դատական պրակտիկան այս նորմը կիրառել է հենց այդ նպատակով:

Օրինակ՝ 2009թ. հուլիսի 24-ի Վարչական գործ թիվ ՎԴ-3/0416/05/08 գործով որոշման 6-րդ մասում նշվել է:

«Հ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այլ օրենքներում պարունակող վարչական դատավարական նորմները պետք է համապատասխանեն նոյն օրենսգրքին:

Նշանակած օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Նոյն օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել ճանաչման հայցի դեպքում՝ անկախ ժամկետությունում:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջը ճանաչման հայցի տեսակ է, և այդպիսի պահանջ դատարան կարող է ներկայացվել ցանկացած ժամանակ, իսկ այլ օրենքներում նշված իրավական նորմի մասով այլ իրավական կարգավորման առկայության դեպքում կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դրույթը»:

Համանման եզրակացությունների կամ դիրքորոշումների կարելի է հանդիպել նաև ԵԿԴ/2794/02/09, ԵԶԴ/0075/02/09, ՍՎԴ-1/0444/02/11 գործերում, ինչպես նաև մասնավոր տեսակետներում⁵:

Ոչ այսպահանական կերպով, սակայն Հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը նույնպես առիր է ունեցել արտահայտվելու այս հարցի շուրջ:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրը սահմանադրական դատարանի որոշման ուժը տարածում է 20-ամյա վաղեմուրյամբ իրավահարաբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված նորմը հակասում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասին, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (տվյալ դեպքում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթները պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին, չնայած այն բանին, որ ՀՀ Ազգային ժողովը, 2007թ. փետրվարի 21-ին փոփոխություն կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.1 հոդվածի 1-ին մասում, շեշտել էր, որ նոր հանգամանքների ինստիտուտը կիրառվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում: 2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում օրենսգրքից այս նորմը նույնպես հանվեց):

Նույն կանոնն ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում. «Հայաստանի Հանրապետության դատարաններում... քաղաքացիական դատավարության դատավար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Վկայակոչելու պատճառները Սահմանադրական դատարանը չի նշել. հնարավոր է, որ դա պարզապես արվել է օրենսդրին կշտամբելու նպատակով կամ ցույց տալու համար, որ օրենքի և օրենսգրքի միջև կա անհամապատասխանություն: Սահմանադրական դատարանն այս գործում օրենքի և օրենսգրքի միջև կոլիզիա չի լուծել:

Այլ օրենքներում... պարունակող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին, իսկ հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»:

Վերոգրյալ օbiter dictum-ը, սակայն, բավարար չէ եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանը նույնպես հակասէ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը համարել է կոլիզիոն լուծում, ապա այդ դեպքում նա առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում ամրագրված կոլիզիոն նորմով, կիրա-

քի 9-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը համարել կոլիզիոն լուծում, թեև դատարանը նշում է, որ.

«... տվյալ դեպքում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթները պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին», չնայած այն բանին, որ ՀՀ Ազգային ժողովը, 2007թ. փետրվարի 21-ին փոփոխություն կատարելով ՀՀ քաղաքացիական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում: 2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում օրենսգրքից այս նորմը նույնպես հանվեց:

Սակայն Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները ճանաչում է մասամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ոչ այն պատճառով, որ այն չի համապատասխանում ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքին: Եվ ինչպես կարելի է ընթանել իրավիճակը, տվյալ գործում խնդիրը պայմանավորված էր ոչ այնքան Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքով, այլ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որում իրավակարգավորման պակասի պատճառով Սահմանադրական դատարանի մասին օրենքը պրակտիկայում ստացել էր Սահմանադրությանը ոչ համահունչ կիրառում:

Սահմանադրական դատարանը վկայակոչել է միայն, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Վկայակոչելու պատճառները Սահմանադրական դատարանը չի նշել. հնարավոր է, որ դա պարզապես արվել է օրենսդրին կշտամբելու նպատակով կամ ցույց տալու համար, որ օրենքի և օրենսգրքի միջև կա անհամապատասխանություն: Սահմանադրական դատարանն այս գործում օրենքի և օրենսգրքի միջև կոլիզիա չի լուծել:

Իսկ եթե նաև գանք այն մտքին, որ Սահմանադրական դատարանը նույնպես «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը համարել է կոլիզիոն լուծում, ապա այդ դեպքում նա առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում ամրագրված կոլիզիոն նորմով, կիրա-

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ոել է այն, մինչդեռ անտեսել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմերի միջև կողիզիոն հարց լուծելիս չի լուծել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի միջև կողիզիոն խնդիր:

Այսինքն՝ կողիզիոն խնդրի լուծման համարկադրություն առաջացած կողիզիային չի անդրադարձել, հարցին տվել է թերի պատասխան:

Անդրադառնանք հարցի առաջարկվող լուծմանը:

Օրենսգրք-օրենք կողիզիայի լուծումը

Առաջարկված իրավական խնդրի լուծումը պետք է տրվի «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի միջոցով՝ նամանավանդ հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը հիշյալ գործում նորից կիրառում է այս օրենքը:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն օրենքը նոր և օրենսգրքերը ունեն հավասար իրավարանական ուժ:

Նախ նոյն օրենքի 8-րդ հոդվածը, սահմանելով իրավական ակտերի ստորադասությունը, չի պարունակում որևէ նշում օրենսգրքի մասին, օգտագործում է միայն օրենքը բարը.

«Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Սույն նորմի համատեքստում օրենսգրքը կարող է լինել միայն օրենք կամ այլ իրավական ակտ, որովհետև Սահմանադրություն լինել չի կարող: Եթե օրենսգրքն այլ իրավական ակտ է, ապա նոյն տրամաբանությամբ օրենսգրքը չպետք է հակասի օրենքին, իսկ այդպիսի իրավիճակում նախապատվությունը պետք է տրվի օրենքին, ոչ թե օրենսգրքին:

Բայց օրենսգրքն այլ իրավական ակտ չէ, որովհետև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը ամրագրում է, որ «օրենքները կարող են ընդունվել օրենսգրքերի տեսքով»: Այսինքն՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքը հստակ սահմանում է, որ օրենսգրքերը նույնպես օրենքներ են:

Նոյն տրամաբանությունն է նաև դրված Սահմանադրության 6-րդ հոդվածում:

Իրավական ակտերի գերակայության հարցը լուծելու համար ուստիմնասիրության առարկա են դարձվում այդ ակտերն ընդունող մարմինները և նրանց դերը, այսինքն՝ իրավական ակտերի ստորադասության հարցը քննարկվում է դրանք ընդունող մարմինների ստորադասության տեսանկյունից: Օրինակ՝ գերատեսչական ակտերը ստորադաս են կառավարության որոշումներին: Նոյն տրամաբանությունն է բովանդակում նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, որում օգտագործվում է «միևնույն մարմնի ընդունած իրավական ակտ» հասկացությունը, ինչը հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերն են: Տվյալ պարագայում օրենսգրքերը և օրենքները միևնույն մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, որում օգտագործվում է «միևնույն մարմնի ընդունած իրավական ակտ» հասկացությունը, ինչը հավասար իրավաբանական ակտեր են:

Սահմանադրական դատարանը, կիրառելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, չէր կարող փոփոխել այդ օրենքի իմաստը՝ առանց այդ օրենքի որևէ նորմ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու:

Հավասար իրավաբանական ուժ ունեցող ակտերը տրամաբանեն չեն կարող լինել գերական մեկը մյուսի հանդեպ. Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նրանք կամ առնվազն հավասար են, սիմետրիկ, կամ՝ անհավասար, ասիմետրիկ:

Կարող ենք կողիզիոն նորմեր գտնել բազմաթիվ օրենքներում և օրենսգրքերում: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը, Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը, Քենական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը, Հողային օրենսգրքի 1-ին հոդվածը, մի շարք այլ օրենքները և օրենսգրքերը դրանց օրինակներն են: Մասնավորապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում ամրագրված է.

«Հայաստանի Հանրապետության դատարան ներում... քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում... պարունակող քաղաքացիա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին, իսկ հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»:

Այս նորմն իր բնույթով կոլիզիոն իրավիճակի լուծման համար նպաստեսված նորմ է, որովհետև նրա կիրառմը ենթադրվում է այնպիսի իրավիճակներում, որտեղ առաջացել է հակասություն։ Սա բխում է հենց նորմի ձևակերպումից, «փոքր հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»։

Սակայն առանձին օրենսգրքերում կամ օրենքներում պարունակվող կոլիզիոն նորմերը չեն կարող ինքնուրույն աշխատել։

Տվյալ դեպքում վերաբերելի են «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին (կոլիզիոն նորմերի լուծման սկզբունքը՝⁸ 2-րդ (իիերարիկ կոլիզիա՝⁹ 3-րդ (սիմետրիկ կոլիզիա՝¹⁰ 8-րդ (այլ օրենքներում կոլիզիոն նորմերի ամրագրման արգելը՝¹¹ և 9-րդ (բացառությունը չեղարկում է կոլիզիոն նորմերի հնարավոր կիրարկումը՝¹² մասերը։ 4-րդ մասը չի վերաբերում մեր խնդրին, որովհետև մեր իրավիճակը սիմետրիկ է՝ օրենք-օրենսգրքը, 5-րդի կարգավորման առարկան միևնույն ակտի ներսի կոլիզիաներն են, մինչդեռ մեր դեպքում երկու տարրեր ակտեր են՝ օրենք և օրենսգրքը, 6-րդը նորից կարգավորում է ասիմետրիկ հարաբերություն, 7-րդը սիմետրիկ հարաբերությունների կարգավորման բացառություն կանոնն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից ելնելով։

Ընդհանուր սկզբունքի կիրարկման համատեքսում Օրենսգրքը կոլիզիաների լուծումը կապել է գերակայության հետ. մի նորմը գերակա է մյուսի հանդեպ, ունի նախապատվություն և ավելի բարձր իրավաբանական ուժ, ինչի ուժով չեղարկում է մրցակից նորմին։ Օրենքներն ու օրենսգրքերը մեկը մյուսի հանդեպ գերակայություն չունեն, այսինքն՝ հարցը նաև չի կարող լուծվել իիերարիկ կոլիզիայի կանոնի համատեքսում։ Սիմետրիկ կոլիզիան ունի մեկ ընդհանուր կարգավորում՝ lex posterior derogat lex prior, և դրանց մեկ և միակ բացառությունը ավելի վաղ ընդունված իրավական ակտերի հետ հարաբերակցության համար՝ lex prior derogat lex posterior (94-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերություն) սկզբունքն է։ Ընդ որում 24-րդ հոդվածի 3-րդ մասի և 94-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համարումը ցույց է տալիս, որ սիմետրիկ կոլիզիաների դեպքում կոլիզիոն հարցերի լուծումը կատարվում է բացառապես «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հան-

րապետության օրենքի դրույթներով. այդ դրույթների և այլ հավասարազոր իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գրծում են բացառապես առաջինիս դրույթները։ Այլ բացառություն, ներառյալ այնպիսի բացառություն, որը թույլ տար այլ օրենքների կամ օրենսգրքերի շրջանականերում իրականացնել կոլիզիոն իրավակարգավորում, չկա։

Այդ նույն նպատակով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասը արգելում է նախատեսել «գերակայության» նորմ այլ օրենքներում, որովհետև գերակայությանը վերաբերող հարցերը կարգավորվում են բացառապես այս օրենքով։

Եվ վերջապես, բացառությունն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում չի համարվում կոլիզիա, որովհետև բացառությամբ ենթադրվում է ընդհանուր իրավահարաբերության կարգավորումից որոշակի իրավահարաբերության առանձնացում (որը չբացավելու դեպքում կկարգավորվի նույն ընդհանուր կանոնով)։

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում և մի շաբթ այլ կոլիզիայի լուծման նորմեր պարունակող իրավական ակտերում պահանջվում են կոլիզիայի հաղթահարման նորմեր՝ նախապատվությունը տալով այդ ակտերին, ինչը հակասություն է ստեղծում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի հետ։ Նշված տրամաբանությամբ պետք է գործի «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, այլ ոչ թե այդ իրավական ակտերի կոլիզիոն կարգավորումները։ Վերջինիս դեպքում կոլիզիան լուծվելու է ոչ թե օրենք-օրենսգրքը փոխհարաբերության համատեքսում, այլ lex prior-lex posterior փոխհարաբերության համատեքսում։

Մյուս կողմից «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումը, այն է՝

«Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» այսու է դիտարկել նրա առաջացրած իրավական հետևանքների պրիզմայում։

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է դիսպոզիցիա (պարտավորություն՝ ուղղված համապատասխան սուբյեկտին՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համապատասխանեցնել օրենքները օրենսգրքերին), սակայն չի նախատեսում ինքնուրույն հետևանք: Կոլիզիոն իրավիճակում հետևանքներ առաջանում են բացառապես «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 24-րդ հոդվածով: Հետևապես օրենք-օրենսգրքը կոլիզիոն փոխհարաբերության լուծման համար կիրառելի է այս նորմը:

Եզրակացություններ և առաջարկներ

Օրենք-օրենսգրքը հակասությունը պրակտիկայում լուծվում է կողիֆիկացիայի գերապատվորյան և մասնավոր իրավական ակտերի կոլիզիոն լիիրավ վիճակների կարգավորման նորմերով՝ անտեսելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը հետևողականորեն չի կիրառվում, և նկարագրված օրենք-օրենսգրքը փոխհարաբերության համատեքստում մեծ մասամբ անտեսվում է:

Այսպիսի պրակտիկան պարունակում է համակարգային սխալ և առնվազն ձևական տեսանկյունից չի կարող ապահովել արդարություն: Սրան զուգահեռ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը բերի իրավակիրառման հետևանքով ստացել է բռվանդակություն, որը համակարգայնորեն համահունչ չէ նույն օրենքի 24-րդ հոդվածին:

Օրենք-օրենսգրքը փոխհարաբերությունը հնարավոր է՝ կարիք ունի օրենսդրական առանձին կարգավորման հետևանքների մասով:

Սուսանձն կանոն նախատեսել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածում նախընտրելի չէ. Եթե նախատեսվի օրենսգրքի գերակայությունը օրենքի հանդեպ, ապա այդ կանոնը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրելի իմաստ չի ունենա, որովհետև օրենքով օրենսգրքի վերաբերյալ կանոն նախատեսվելը օրենսգրքի՝ օրենքի հանդեպ գերակայության համատեքստում խնդրահարույց է: Կողիֆիկացիային նախապատվորյուն տալն էլ Հայաստանի իրավական համակարգի պայմաններում ինքնին նախընտրելի տարրերակ չէ:

24-րդ հոդվածում հատուկ մասնավորեցնել, որ օրենքներն ու օրենսգրքերը ունեն հավասար իրավաբանական ուժ և նրանց միջև չի կարող լինել գերակայություն, նույնպես անհմաստ է, որովհետև կատացվի 24-րդ հոդվածի 3-րդ մասի կրկնություն:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչելը, սակայն, կվերացնի խնդրահարույց բռվանդակությունը և կարող է հարցը իրավակիրառ պրակտիկայում լուծել:

¹ Տե՛ս օրինակ Ներսեսյան Վ.Ը. Общая теория права и государства: Учебник для вузов, 447 (Норма 2004, Москва).

² Տե՛ս օրինակ Ներսեսյան Վ.Ը., ред., Проблемы, общая теория права и государства: Учебник для вузов, 359-364 (Норма 2004, Москва).

³ Տե՛ս Բերժալ Ժ.-Լ. (под общ. ред. В.И. Даниленко), Общая теория права, 117 (Nota Bene 2000, Москва).

⁴ Այս մասին ներքում:

⁵ Արքուն Գրիգորյան, Օրենսդրական փաքեր, որը ենթակա է փոփոխությունների, 18 դեկտեմբերի, 2011 Հետք, առցանց: <http://hetq.am/arm/opinion/8151/orensdrakan-patet-ory-entaka-e-popokhutyunneri.html>

⁶ ՍԴՈ-751

⁷ Նույնում

⁸ «Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա»:

«Իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ակտերի մեջ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, բացառությամբ սույն օրենքի 94-րդ հոդվածի չորրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի»:

«Արգելվում է իրավական ակտում նախատեսել հավասար իրավական ուժ ունեցող այլ իրավական ակտերի նկատմամբ գերակայության մասին նորմ: Նման նորմերն իրավական ուժ չունեն»:

¹⁰ «Իրավական ակտում հակասության դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, բացառությամբ սույն օրենքի 94-րդ հոդվածի չորրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի»:

¹¹ «Իրավական ակտում հակասություն չի համարվում ընդհանուր բացառության սահմանում»:

¹² «Իրավական ակտում հակասություն չի համարվում ընդհանուր բացառության սահմանում»:

Օգտագործված աղյութների ցանկ

Գյորեր, տեսություն, դրկտրին

1. В.С. Нерсесянц, Общая теория права и государства: Учебник для вузов (Норма 2004, Москва).
2. В.С. Нерсесянц, ред., Проблемы общая теории права и государства: Учебник для вузов (Норма 2004, Москва).
3. Ж.-Л. Бержаль (под общ. ред. В.И. Даниленко), Общая теория права, 117 (Nota Bene 2000, Москва).

Նորմատիվ իրավական ակտեր

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունները, ՀՀՊՏ 2005.12.05/ Հասովկ թողարկում, Հոդվ. 1426:
5. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենք, ՀՀՊՏ 2002.05.21/15(190), Հոդվ.344:
6. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի Քաղաքացիական օրենսգիրը, ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

Դատական պրակտիկա

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 15-ի «Քաղաքացիներ Արմեն Համամջյանի, Արդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության և 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍԴՂ-751 որոշում, ՀՀՊՏ 2008.04.30/25(615) Հոդվ.401:
8. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 24-ի Վարչական գործ թիվ ՎԴ-3/0416/05/08 մասին որոշում, ՀՀՊՏ 2009.10.23/53(719).1, Հոդվ.1178.49:
9. Հայաստանի Հանրապետության Վերաբնիշ քաղաքացիական դատարանի 2010 թվականի հունիսի 15-ի քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ-2794/02/09 մասին որոշում:
10. Հայաստանի Հանրապետության Վերաբնիշ քաղաքացիական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 2-ի քաղաքացիական գործ թիվ ԵԶԴ-0075/02/09 մասին որոշում:
11. Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի հունիսի 26-ի քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-1/0444/02/11 մասին վճիռ:

Այլ

12. Արթուր Գրիգորյան, Օրենսդրական փարեր, որը ենթակա է փոփոխությունների, 18 դեկտեմբերի, 2011 Հետք, առցանց: <http://hetq.am/arm/opinion/8151/orensdrakan-patet-orgy-entaka-e-popokhutyunneri.html>

РЕЗЮМЕ

**Проблема коллизионного взаимоотношения закон-кодекс в правовой системе РА.
Трактовочные решения.**

Закон или кодекс? Который из них должен преобладать, если существует конфликт между нормами последних.

В данной статье проблема рассматривается в контексте общей теории кодификации, Армянского законодательства и судебной практики. По мнению автора, из-за неполноценного применения закона О правовых актах РА и упущения из виду важных аспектов права, формировалась неправильная практика. В результате возникла систематическая задача между законом О Правовых актах РА и законами и кодексами, которые включают нормы решения правовых коллизий.

Автор пытается объяснить недопонимание цели кодификации и ее связи с решением правовых коллизий. В статье аргументируется, что в Армении кодексы простые законы и имеют одинаковую юридическую силу с последними. В результате, любая правовая коллизия между ними должна решаться коллизионными нормами закона О правовых актах РА, а не каким нибудь другим способом.

SUMMARY

**Issue of conflicting interrelation of law and code in the legal system of RA.
Interpretative solutions.**

Law or code? Which one shall prevail if there is a legal conflict between the norms of the latter ones.

In the original article the issue is analyzed in context of general theory of codification, Armenian legislation and judicial practice. The author is of opinion that a wrong practice has evolved because of incomplete application of the Law on Legal Acts and omission of important aspects of the law. As a result, a systematic problem has arisen in the Law of Legal acts and other laws and codes including norms of conflict solution.

The author tries to explain the misunderstanding of the aim of codification and its relation to the solution of legal collisions. It is argued that codes are ordinary laws in Armenia and that they have equal force. As a consequence, any conflict between them shall be addressed using the collision norms of the Armenian Law on Legal Acts and no other means.

ԱՐԺԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵԼԼԻ ԱՌԱՋԵԼՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի
իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական-
վերլուծական բաժնի առաջատար մասնագետ

ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Արժանապատվություն» եզրույթը, սկսած անտիկ ժամանակաշրջանից, գրադարել է փիլիսոփաների ուշադրությունը՝ հետազայում դառնալով գիտության տարրերի ուսումնասիրության առարկան: Եզրույթն օգտագործվում է իրավունքի տարրեր ճյուղերում և դառնում համապատասխան ճյուղն ուսումնասիրող գիտության առարկան, սակայն, այս ամենով հանդերձ, ոչ մասնագիտական գրականության մեջ, ոչ էլ որևէ իրավական ակտում տրված չէ «արժանապատվության» բնութագրումը: Արդյունքում չկա որևէ տարրերակում արժանապատվություն եզրույթի՝ իրավունքի տարրեր ճյուղերում օգտագործվող տարրերակների միջև, նոյն ինքը՝ «արժանապատվություն» եզրույթը, չի ընկալվում միանշանակորեն, ինչի արդյունքում չի ապահովում սահմանադրափական եզրույթի մեկնարանության, կիրառության միասնականությունն ու պաշտպանության արդյունավետությունը:

Մասնագիտական գրականության մեջ մասնագետների մի մասի կողմից «արժանապատվություն» ընկալվում է որպես կոնկրետ իրավական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված կատեգորիա¹, որպես մարդու իրավունք², որպես մարդու իրավունքների իմք³: Կարծում ենք՝ այս մոտեցումները գոյության իրավունք ունեն, սակայն դրանցից ոչ մեկը չի բացահայտում «արժանապատվության» էությունը, պարզապես շոշափում են վերջինիս դրսերման որոշակի կողմերը: Գտնում ենք, որ բննարկվող եզրույթի բովանդակությունը պետք է փնտել անձի արժանապատվության պաշտպանության և վերաբերելի եզրույթի գարգացման պատմության համատեքստում:

Այսպիսով, «արժանապատվություն» եզրույթը ծագում է լատիներեն *dignitas* բառից, որը հոոմեական դասական մտածողության շրջանակներում նշանակել է կարգավիճակ: Հարգանքը և պատիվ էր վայելում այն անձը, ով արժանանում էր դրան՝ ելելով այս կամ այն կարգավիճակն ունենալուց: *Dignitas*-ը, ըստ էության, ոչ թե անհատին, այլ պետությանը և հանրային պաշտոններին վերագրվող հատկանիշ էր: Դասական հոոմեական

մտածողության շրջանակներում քննարկվող եզրույթի ավելի լայն հայեցակարգը զարգացրել է Ցիցերոնը, ըստ որի՝ *dignitas*-ը պատկանում էր յուրաքանչյուր մարդու, մարդու այդպիսին լինելու ուժով՝ անկախ որևէ լրացուցիչ կարգավիճակից⁴: Ցիցերոնը իմք է դնում «արժանապատվություն» եզրույթի նոր ընկալման, որի շրջանակներում արժանապատվությամբ օժտված էր

1. բացառապես մարդը,
2. արժանապատվությամբ օժտված էին բոլոր մարդիկ,
3. մարդն օժտված էր արժանապատվությամբ մարդկային ցեղին պատկանելու ուժով:

Միջին դարերում հումանիստները բարձրացնում են այն գաղափարը, որ մարդն օժտված է արժանապատվությամբ, քանի որ ստեղծված է Աստծո կերպարով, ինչն առանձնացնում է մարդուն այլ արարածներից: Միջնադարում արժանապատվության մեկնաբանության հայեցակարգը համարվեց մեկ հեղափոխական դրույթով, համաձայն որի, լինելով Աստծո կերպարով ստեղծված էակ, մարդն օժտված է անհատի (person) արժանապատվությամբ. նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե՝ ինչ-որ բան⁵: Սա արմատական դրույթ է անձի արժանապատվության էության բացահայտման համար. Փաստորեն, մարդու արժանապատվությունը կայանում է նրանում, որ նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե՝ ինչ որ բան: Արժանապատվության գաղափարը զարգացվում է՝ նշելով, որ անձն օժտված է բանականությամբ, ինքնատիրապետմամբ, կամքի ազատությամբ և այլ անձանց հետ հաղորդակցվելու հնարավորությամբ⁶:

Վերածննի ժամանակաշրջանում արժանապատվությունը քննարկվում է Աստծո կողմից մարդուն տրված պարզեցների հետ փոխհամաձայնության լույսի ներքո. Պիկո դելլա Միրանդոլան իր «Մարդու արժանապատվության մասին հոեսորության» մեջ նշում է, որ «մարդու արժանապատվության արմատները մարդու՝ ով լինելու ընտրության հնարավորությունն է, և սա Աստծո պարզեցվելու համարական է»:

Արժանապատվության բովանդակության բացահայտման համար հատկանշական է Կանտի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերաբերելի դիրքորոշման վկայակոչումը: «Բարոյականության մետաֆիզիկան» աշխատության մեջ Կանոն արտահայտում է այն գաղափարը, որ անձի արժանապատվության բովանդակությունը պահանջում է, որ մարդուն վերաբերեն որպես նպատակի և ոչ թե միջոցի: Կանոնը որոշակի այլ ձևակերպմամբ կրկնելի է դեռևս Կարողի կեղեցու կողմից որդեգրած այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ մարդու արժանապատվությունը կայանում է նրանում, որ նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե ինչ-որ բան: Մարդուն որպես ինչ-որ բան վերաբերվելու դեպքում նա, փաստորեն, դառնում է միջոց, գործիք որևէ այլ նպատակի հասնելու համար:

«Արժանապատվություն» եզրույթը հենց վերոնշյալ բովանդակությամբ էլ ամրագրվել է Մարդու իրավունքների համընդիանությունը հոչակագրում: Հոչակագրի 1-ին հոդվածում նախատեսվում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Դրույթի տրամաբանությունը շարունակվում է նոյն հոդվածի հաջորդ նախադասությամբ՝ մարդիկ օժտված են բանականությամբ և խղճով: Հոդվածի տրամաբանությունից պարզ է դառնում, որ մարդիկ ազատ են, հավասար և օժտված են արժանապատվությամբ այն բանի ուժով, որ հանդես են գալիս որպես բանականությամբ և խղճով օժտված էակներ: Դեռևս միջնադարում ձևավորված արժանապատվության հայեցակարգի՝ հոչակագրում ամփոփած լինելու մասին է վկայում նաև Հոչակագրի 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ բոլոր մարդիկ իրավունք ունեն ամենուր ճանաչվելու անհատ (person) օրենքի առաջ: Այս դրույթով ևս իրավական մակարդակում ճանաչվում է մարդու արժանապատվությունը, ինչի ուժով մարդը ինչ-որ մեկն է (person՝ անհատ), ոչ թե ինչ-որ բան: Հոչակագրի այս դրույթով մարդը ճանաչվում է իրավունքի սուբյեկտ, ինչն էլ իրենից ներկայացնում է անձի արժանապատվության իրավական ճանաչման դրսորումը: Ասվածի տրամաբանական շարունակությունն են հանդիսանում այն բոլոր իրավունքները և ազատությունները, որոնք տեղ են գտնել Հոչակագրում: Դրանք կոչված են բավարարելու արժանապատվությամբ, այսինքն՝ Աստծոն կողմից ստեղծված բանականությամբ, խղճով և ազատ կամքով օժտված էակի կենսական պահանջները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Մարդու նման ընկալումը արտացոլում է նաև արժանապատվության վերաբերյալ կանույան հայեցակարգի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ մարդու արժանապատվության բովանդակությունը պահանջում է, որ նրան վերաբերվեն որպես նպատակի, այլ ոչ թե միջոցի: Մարդու արժանապատվության նման ընկալումը

Գերմանիայի Սահմանադրական դատարանի արդարադատության շրջանակներում ստացել է հստակ ձևակերպում՝ որպես օբյեկտ-բանաձև:

Ասվածից հետևում է, որ արժանապատվությունն օբյեկտիվ կատեգորիա է, այն տրվում է մարդուն իր ծննդյան ուժով ու մարդկային ցեղին պատկանելու ուժով և կայանում է բանականությամբ ու խղճով օժտված էակ լինելու և նման կերպ այլոց կողմից ընկալվելու մեջ: Անձի արժանապատվության այս ներքին և արտաքին կողմերը իմպերատիվ կերպով փոխկապակցված չեն. անձի արժանապատվությունը կարող է խախտվել հասրակության կողմից, սակայն նա կարող է պահպանել արժանապատվության ներքին կողմը, և՝ հսկառակը: Ասվածից հետևում է, որ անձի արժանապատվությունը կարող են խախտել ոչ միայն պետությունը, հասրակությունը կամ որևէ անձ, այլ հենց ինքը՝ անհատը՝ դրսորելով մարդու բնույթին հսկառակ վարքագիծ:

ՀՀ Սահմանադրության մեջ «մարդու արժանապատվությունը» ևս տեղ է գտնել որպես օբյեկտիվ կատեգորիա: Սահմանադրությունն արժանապատվությամբ օժտված լինելը չի պայմանավորում որևէ նախապայմանով. այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը ևս մարդուն օժտում է արժանապատվությամբ մարդկային ցեղին պատկանելու ուժով: Սա բխում է նաև այն բանից, որ Հիմնական օրենքը ճանաչում է բոլորի հավասարությունն օրենքի առաջ և օժտում հավասար իրավունքներով և ազատություններով կամ որոշ իրավունքների պարագայում նման իրավունքներ ծեռք բերելու հավասար հնարավորությամբ, իսկ արժանապատվությունն էլ ճանաչում է այդ իրավունքների անքանելի հիմք: ՀՀ Սահմանադրությունը մարդու արժանապատվությունը չի պայմանավորում նույնիսկ անձի կամահայտնությամբ. մարդն օժտված է արժանապատվությամբ, նույնիսկ եթե նա չի գիտակցում նման ֆենոմենի առկայությունը սեփական անձի մեջ: Ասվածի մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի իրավադրույթը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությամբ իմպերատիվորեն ամրագրված է պարտավորություն յուրաքանչյուրի համար՝ հարգել այլոց արժանապատվությունը. այս պարտավորությունը կախվածության մեջ դրված չէ անձի կողմից սեփական արժանապատվությունն ընկալելու նախապայմանից: Ասվածի համատեքստում հաճախ առաջ է գալիս մասնագիտական գրականության մեջ «արժանապատվություն» եզրույթին տրված հսկառական մեկնարանությունների արդյունքում ծագող շփոթք, որը հանգում է հետևյալին. ՀՀ բա-

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

դարացիական օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում դիմելու դատարան և պահանջելու արժանապատվության, պատվի և գործարար համբավի պաշտպանություն: Այս համատեքստում արժանապատվությունը մեկնաբանվում է որպես անձի կողմից սեփական ընդունակությունների, որակների, արժանիքների վերաբերյալ պատկերացում, գնահատական: Մասնագիտական գրականության մեջ հաճախ արժանապատվություն եզրույթի օրյեկտիվ և սուբյեկտիվ իմաստները միմյանցից չեն տարբերակում, և արդյունքում արժանապատվություն եզրույթը գործադրվում է սուբյեկտիվ իմաստով՝ որպես անձի՝ սեփական որակների վերաբերյալ սուբյեկտիվ կարծիք, ինչի հետևանքով էլ արժանապատվության առկայությունը կախվածության մեջ է դրվում անձի կողմից սեփական արժանապատվության գիտակցումից և սեփական որակների հանդեպ ունեցած պատկերացումներից: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, արժանապատվությունն օրյեկտիվ կատեգորիա է և պայմանավորված չէ այս կամ այն նախապայմանով, ուստիև պետք է հստակութեն տարբերակել անձի արժանապատվությունը օրյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով և հաշվի առնել, որ սուբյեկտիվ իմաստով արժանապատվությունը չի հակադրվում օրյեկտիվ իմաստով արժանապատվությանը, այլ բխում է դրանից. այն հանդես է գալիս որպես օրյեկտիվ իմաստով արժանապատվության պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի դրսւորում:

ՀՀ Սահմանադրության մեջ «արժանապատվության» որոշակի կողմերը բացահայտող դրույթներ են ամրագրված 3-րդ, 14-րդ և 47-րդ հոդվածներում: Այս հոդվածները գտնվում են անխօնի տրամաբանական կապի մեջ. առաջին դրույթն ունի արժեքաբանական նշանակություն. այն «արժանապատվություն»-ը ճանաչում է որպես բարձրագույն արժեք՝ դասելով մարդու, նրա հիմնական իրավունքների և ազատությունների շարքին, 14-րդ հոդվածն էլ շարունակում է 3-րդ հոդվածի տրամաբանությունը և սահմանում, որ մարդու արժանապատվությունը հարգվում է պետության կողմից, ինչով ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու արժանապատվության հարգման սկզբունքը և այն պաշտպանելու պետության պարտավորությունը: ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների ժողովածուում այս առնչությամբ արդարացիորեն նշվում է, որ «մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագիրը»:

Սահմանադրության 3-րդ հոդվածի ձևակերպումը ստեղծում է այն թյուր տպավորությունը, թե արժանապատվությունը, մարդու, նրա հիմնական իրավունքները և ազատությունները, ինչով գտնվում են իրավոնական հարաբերակցության մեջ, սակայն 14-րդ հոդվածի առաջին հատվածի ձևակերպումը փարատում է այդ տպավորությունը՝ ամրագրելով մի ձևակերպում, որով բացահայտվում է արժանապատվության և մարդու իրավունքների հարաբերակցությունը, մասնավորապես «արժանապատվությունը» ճանաչում է որպես մարդու իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք: Արժանապատվության հանդեպ որդեգրած նման մոտեցումն էլ գործառական առումով որոշակիորեն երաշխավորում է Սահմանադրությամբ ամրագրված «արժանապատվության հարգման սկզբունքը»: Արժանապատվությունը մարդու իրավունքների անքակտելի հիմք ճանաչելուց հետևում է, որ չկան իրավունքներ և ազատություններ արժանապատվությունից զատ, այսինքն՝ դրանց առկայությունը պայմանավորված է արժանապատվության առկայությամբ, մինչդեռ հակառակ իրավիճակը հնարավոր է այս կամ այն պատմաքաղաքական իրողությունում. պետության կողմից ճանաչվում և պաշտպանության է արժանանում մարդու իրավունքների որոշակի կոնկրետ ծավալ. այդ իրավունքների քանակը չի կարող պայմանավորել արժանապատվության գոյի ավել կամ նվազ աստիճանը, քանզի արժանապատվությունը և իրավունքները տարբեր հարթության վրա են գտնվում: Առաջինը հանգում է մարդու էությանը, բնույթին, ինքնարավ է, իսկ իրավունքները կոչված են իրացնելու մարդու բնույթից բխող կենսական պահանջները, հետևաբար, եթե այդ իրավունքները նույնիսկ ճանաչված չինեն պետության կողմից, այսինքն՝ արժանապատվության արտաքին կողմը երաշխավորված չինչի կոնկրետ պետությունում, դեռևս չի ճանակում, որ արժանապատվությունը՝ որպես մարդու էություն, ևս բացակայում է: Այն շարունակում է գոյություն ունենալ որպես օրյեկտիվ կատեգորիա, պարզապես արթեորված և երաշխավորված չի լինում կոնկրետ պետության շրջանակներում: Արժանապատվության իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք լինելու որոշում է նաև իրավունքների և ազատությունների բովանդակությունը և ծավալը: Քանի որ մարդու արժանապատվությունը հանգում է մարդու՝ Աստծո կողմից և Նրա կերպարով ստեղծված, բանականությամբ և կամքով օժտված էակ լինելուն, ճշանակում է մարդու իրավունքները և ազատությունները, որոնք կոչված են երաշխավորելու նման էակի բնույթով պայմանավորված կենսապահանջները,

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ևս պետք է լինեն բանական և բխեն մարդու բնույթից: Ասվածի տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն իրավունքները և ազատությունները, որոնք հակասում են մարդու բնույթին կամ չեն բխում դրանից, խախտում են մարդու արժանապատվությունը:

Այն հանգամանքը, որ Սահմանադրությունն անձի արժանապատվությունը հոչակում է որպես իրավունքների և ազատությունների անքաղաքի հիմք, երբեմն ստեղծում է այն կարծրատիպը, թե արժանապատվություն կատեգորիան ինքնուրույն արժեք չէ, այլ միջնորդավորված է և ածանցված իրավունքներից և ազատություններից: Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ. ՀՀ Սահմանադրության վկայակոչված 47-րդ հոդվածը պարտավորեցնում է բոլորին հարգել այլոց «իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»: Յաջ հոդվածով էլ արժանապատվությունն առանձնացվում է և ճանաչվում բարձրագույն արժեք՝ ի թիվս մարդու հիմնական իրավունքների և ազատությունների: Նման ձևակերպումների առկայությունը վկայում է, որ, լինելով իրավունքների և ազատությունների հիմք, արժանապատվությունը, միաժամանակ, ինքնուրույն կատեգորիա է և պահանջում է ինքնուրույն արժենություն և պաշտպանություն: Արժանապատվությունը ՀՀ Սահմանադրության մեջ, փաստորեն, ունի երկակի կեցություն. մի դեպքում այն հանդիսանում է գալիս որպես ինքնուրույն կատեգորիա, մյուս դեպքում՝ որպես հիմք այլ իրավունքների համար: Արժանապատվության երկու կեցությունները հավասարարժեք չեն. առաջինը գերակայում է երկրորդի նկատմամբ, քանի որ արժանապատվությունն է, որպես ինքնուրույն արժեք, ծնում իրավունքներ և ազատություններ, և ոչ թե հակառակը: Մարդու իրավունքներն ու ազատությունները ճանաչվում և պաշտպանության են արժանանում պետության կողմից, քանի որ ճանաչվում է մարդու արժանապատվությունը, այսինքն՝ մարդը ճանաչվում է որպես իրավունքի սուբյեկտ, որպես ինքնանպատակ, որի կենսապահանջների համար անհրաժեշտ են որոշակի իրավունքներ և ազատություններ: Ուստիև, մինչև մարդու իրավունքների և ազատությունների հիմք լինելը արժանապատվությունը հանդիսանում է գալիս որպես ինքնուրույն ֆենոմեն, որին ծառայելու նպատակով էլ պայմանավորված են գոյություն ունեցող իրավունքները և ազատությունները: Ասվածից չի հետևում, որ եթե օրենսդրական մակարդակում չի ամրագրվում արժանապատվություն եղուրքը, այլ պարզապես ճանաչվում են մարդու իրավունքները և ազատությունները, դրանք կրում են միայն հոչակագրային բնույթը, քանզի եթե սահ-

մանադրական մակարդակում տեղ են գտնում այնպիսի իրավադրույթներ, որոնք երաշխավորում են մարդու իրավունքի սուբյեկտ լինելը և իրավական համակարգի ինքնանպատակ լինելը, նշանակում է՝ պետությունը ճանաչում է մարդու արժանապատվությունը ընդհանուր սահմանադրախրավակական փիլիսոփայության մեջ: Այլ հարց է, որ պետք է տարբերակել «ճանաչել» և «հարգել ու պաշտպանել» եզրույթները: Մինչ սահմանադրախրավակական բարեփոխումները, ճիշտ է, ՀՀ-ն ընդհանուր սահմանադրախրավակական տրամաբանության մեջ ճանաչում էր արժանապատվությունը, Սահմանադրության 48-րդ հոդվածի ուժով պարտավորեցնում էր «յուրաքանչյուրին հարգել այլոց արժանապատվությունը», սակայն ինքն իրեն չէր սահմանափակում այն հարգելու և պաշտպանելու պարտավորությամբ, մինչդեռ նման պարտավորության առկայության պարագայում քննարկվող օրյեկտի կարեռությունը այլ հարբություն է տեղափոխվում. պետության՝ անձի արժանապատվությունը հարգելու պարտավորությանը գուգահեռ ծագում է անձի անմիջականորեն գործող իրավունքը՝ պահանջելու պետության կողմից արժանապատվության հարգում և պաշտպանություն:

Արժանապատվության գաղափարական ճանաչման և ուղղակի հարգման պետության սահմանադրախրավական պարտավորությունների շրջանակներում երկու կոնցեպցիա կարող ենք առանձնացնել. առաջին դեպքում արժանապատվությունն ընկալվում է բացառապես որպես իրավունքների և ազատությունների հիմք իրավունք՝ ի հավելումն իրավունքների և ազատությունների հիմք լինելուն¹¹: Այս երկու կոնցեպցիաները ունեն ուրույն տրամաբանություն և հանգեցնում են տարբեր հետևանքների մարդու իրավունքների պաշտպանության համակարգում: Առաջին դեպքում արժանապատվությունն ակամա վերածվում է միջնորդավորված արժեքի և կարծես ինչ-որ վերացական կատեգորիայի, քանզի անձը չի կարող դիմել որևէ պետական մարմնի և պահանջել պաշտպանել իր արժանապատվությունը: Այս ընկալման շրջանակներում անձը կարող է պահանջել որևէ խախտված իրավունքի պաշտպանություն միայն, որը ենթադրում է նաև արժանապատվության խախտում, քանզի այս կոնցեպցիայի շրջանակներում արժանապատվության և այլ իրավունքների հարաբերակցության տրամաբանությունը հանգում է հետևյալին. եթե խախտվում է որևէ իրավունք, խախտվում է նաև անձի արժանապատվությունը, ուստիև անձը կարող է պահանջել միայն իր խախտված իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև անուղղակիորեն արժանապատվության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պաշտպանություն, սակայն այս պարագայում որպես խախտման և պաշտպանության օբյեկտ ընկալվում է կոնկրետ իրավունքը և ոչ թե արժանապատվությունը, և անձը ինքը ևս պնդում է իր կոնկրետ իրավունքի պաշտպանության մասին: Նման վարդելաձնը բացատրվում է նրանով, որ եթե արժանապատվությունը ընկալվում է բացառապես որպես իրավունքների և ազատությունների հիմք, բացառվում է դրա գոյությունը այդ իրավունքներից և ազատություններից դրուս, բացառվում է դրա ինքնուրույն գոյությունը, հետևաբար արժանապատվության ինքնուրույն պաշտպանության անձի իրավունքը: Հենց այս կոնցեպցիան էր դրված ՀՀ Սահմանադրության հիմքում մինչ սահմանադրախրավական բարեփոխումները¹²:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում պետությունն ամրագրեց արժանապատվության հարգման պարտավորությունը, որը ծնում է անձի իրավունքը՝ պահանջելու անմիջականորեն արժանապատվության պաշտպանություն պետության կողմից. այս պայմաններում արժանապատվությունը միջնորդավորված պաշտպանությունից ձեռք է բերում ակտիվ և անմիջական պաշտպանության հնարավորություն: Նման պայմաններում, օրինակ, անձը հնարավորություն ունի դիմելու սահմանադրական արդարադատության մարմին՝ պահանջելով որոշել վիճարկվող օրենքի համապատասխանությունն իր արժանապատվությանը: Նման փորձ առկա է Ռուսաստանի «Դաշնության սահմանադրական արդարադատության համարկարգում»: Այս մասին են վկայում ՌԴ սահմանադրական դատարանի՝ 1996 թվականի մայիսի 16-ի, 2007 թվականի հունիսի 27-ի որոշումները: «Դատարանը, քննության առմելով դիմումները, բացահայտել է արժանապատվության բովանդակության որոշակի դրսուրումները, արժանապատվության հարգման՝ պետության պարտավորության վերաբերելի կողմերը և համարել դրանք վիճարկվող դրույթներից բխող իրավակարգավորումների հետ:

ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել անձի արժանապատվության անմիջական պաշտպանության իրավունքի գիտակցությունը ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի միջոցով: Ասվածի մասին է վկայում սահմանադրական արդարադատության շրջանակներում դիմումների՝ վիճարկվող դրույթների ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ ներկայացված փաստարկների ուսումնասիրությունը, մասնավորապես դիմումները հազվադեպ են պահանջում որոշել վիճարկվող դրույթների համապատասխանությունը Սահմանադրության 14-րդ հոդվածին. այն եզակի դեպքերում էլ, եթե վերջինս հիշատակվում է, դիմումները որևէ հիմնավորում վիճարկվող դրույթի՝ արժանապատվությունը հարգելու իրավունքին հակասելու վերաբերյալ չեն ներկայացնում: «Դիմումները պարզապես վկայակոչում են նշված հոդվածը, սակայն շարունակում են հիմնավորել միայն այս կամ այն իրավունքի խախտումը վիճարկվող դրույթի կիրառման արդյունքում. նշվածի հետևանքով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ձեռք է բերում բացառապես հոչակագրային բնույթ, մինչդեռ կարող է դառնալ ՀՀ Սահմանադրության գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգ: Կարծում ենք՝ այս իրավիճակը կարող է շտկվել սահմանադրական արդարադատության շրջանակներում. «արժանապատվություն» եզրույթի և արժանապատվության հարգման պետության պատավորության բովանդակային սահմանաները կարող են տեղ գտնել Սահմանադրական դատարանի որոշումներում՝ իրավական դիրքորոշումների տեսքով, որոնց միջոցով կստակեցվի «արժանապատվության» և այս պաշտպանելու պետության պարտավորության բովանդակային չափանիշները՝ հիմք հանդիսանալով թե՝ իրավաստեղծ, թե՝ իրավակիրառ գործունեության համար:

¹ Տե՛ս The European Journal of International Law, Vol.19, no.4 EJUL 2008, էջ 655:

² Տե՛ս Federal Constitutional Court of Germany, February 5, 2004 (BVerfGE 109, 133, 181).

³ Տե՛ս Co..Co..A..Comparing Constitutional Adjudication, Summer School on Comparative Interpretation of European Constitutional Jurisprudence, 2nd Edition – 2007, էջ 2, The Dignity of Man in Constitutional Adjudication.

⁴ Տե՛ս Cicero De Officiis I translated with an Introduction and Notes by Andrew P. Peabody (Boston: Little, Brown, and Co.(1887): Աղյուրը՝ http://oll.libertyfund.org/?option=com_staticxt&staticfile=show.php%3Ftitle=542&chapter=83344&layout=html&Itemid=27 (08.10.2012).

⁵ Տե՛ս The Catechism of the Catholic Church, Part One: The Profession of Faith, Section 2: The Profession of the Christian Faith, Chap. 1, Art. 1, paras. 6 and 356 – 357, աղյուրը՝ www.vatican.va/archive/catechism/p1s2c1p6.htm

⁶ Տե՛ս նոյն տեղում:

⁷ Ste' Pico Della Mirandola: Oration On the Dignity Of Man (15th C. CE), աղյուրը/

http://public.wsu.edu/~brians/world_civ/worldcivreader/world_civ_reader_1/pico.html, (16.11.2012 թվ.).

⁸ Ste' Human Dignity and Bioethics: Essays Commissioned by the President's Council on Bioethics,

աղյուրը/http://bioethics.georgetown.edu/pcbe/reports/human_dignity/chapter13.html#endnote5, (16.11.12 թվ.).

⁹ Ste' EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) The principle of respect for human dignity, Montpelier, 2-6 July 1998, աղյուրը՝ [http://www.venice.coe.int/docs/1998/CDL-STD\(1998\)026-e.asp#_ftnref91\(07.12.12\)](http://www.venice.coe.int/docs/1998/CDL-STD(1998)026-e.asp#_ftnref91(07.12.12)).

¹⁰ Ste' ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, աղյուրը՝

<http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> (06.12.12).

¹¹ Ste' Խոսքը վերաբերում է ոչ թե արժանապատվության իրավունքին՝ որպես արժանապատվություն ունենալու իրավունք, այլ պետության կողմից արժանապատվության հարգում պահանջելու իրավունքին, քանզի, ինչպես արդեն նշել ենք, արժանապատվությամբ օժտված են բոլոր մարդիկ՝ մարդկային ցեղին պատկանելու ուժով, և դա իրավունք չէ, այլ տրված իրողություն:

¹² Ste' Խոսքը վերաբերում է պետության կողմից արժանապատվության հարգում պահանջելու՝ անձի սուբյետիվ իրավունքի բացակայությանը մինչ սահմանադրախրապական բարեփոխումները, քանզի մինչ այդ անձի արժանապատվության պաշտպանության սուբյեկտիվ իրավունքը երաշխավորված է եղել, ըստ էության, զրադարձության և վիրավորանքի առնչությամբ միայն:

РЕЗЮМЕ

Конституционно-правовое содержание “достоинства личности”

В рамках статьи автор выявляет смысл понятия “достоинство личности”, рассматривает смысл данного понятия в процессе его исторического развития и основные концептуальные подходы толкования понятия “достоинства личности”. Автор предлагает разграничение между объективным и субъективным смыслами понятия “достоинства личности”, и выявляет остоянное соотношение между правом на защиту достоинства личности и правом на защиту чести, достоинства и деловой репутации. Автор рассматривает конституционное бытие “достоинства личности” в свете конституционных реформ принявших место в Республике Армения в 2005 году. Автор рассматривает позитивные обязательства государства вытекающие из таких конституционных урегулирований “достоинства личности” как признание достоинства личности как конституционного блага и прямого обязательства государства уважения и защиты “достоинства личности”. Автор рассматривает механизмы защиты достоинства личности и выявляет новые возможности такой защиты в рамках конституционного правосудия.

SUMMARY

Constitutional content of the «human dignity»

In the article the author discussed the problems concerned with the content of the notion «human dignity». The content of the relative notion has been controversial topic in the legal literature for several years. The notion itself has been in use for several centuries, anyway, neither in any legal act, nor in legal literature the respective notion has not been defined completely. The author highlighted the content of «human dignity» in the light of its historical development. The author presented the main criteria on which the contemporary concept of «human dignity» is based. The author differentiated such categories as objective and subjective meanings of «human dignity», showed the correlation between the right to protection of dignity and right to demand protection of reputation. The author discussed the «human dignity» in the logic of constitutional amendments taken place in the Republic of Armenia in 2005, and showed the possibility of using new mechanisms for protection of «human dignity». The author discussed the constitutional axiology of «human dignity». The author also highlighted the new possibilities in protection of human dignity in the framework of constitutional justice.

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
ՀՀ փաստաբանների պալատի անդամ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի իմաստիտուտի հայցորդ



ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ՍՊԸ) կամ Ընկերություն) որպես իրավաբանական անձի հիմնական հատկանիշներից մեկը նրա գույքային առանձնացվածությունն է: Գույքային առանձնացվածությունը ընկերության ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական գործունեության հիմնք է: «Գույքային առանձնացվածություն ասելով հասկացվում է ինչպես կազմակերպության սեփականությունը չհանդիսացող, բայց նրան ամրացված գույքը, այնպես էլ կազմակերպության սեփական գույքը: Ընդորում, առանձնացված գույք հասկացությունը նյութական բարիքներից (իրերից) զատ ներառում է նաև իրերի նկատմամբ իրավունքները, պարտականությունները, դրամական միջոցները և այլն»¹: Ինչ վերաբերում է ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալին, ապա, դա, Ընկերության կանոնադրությամբ հաստատված և դրամական արտահայտությամբ սահմանված որոշակի գումարի չափ է, որի նկատմամբ սեփականության իրավունքը կազմակերպության պետական գրանցման պահից փոխանցվում է ընկերությանը: ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ բացակայում է ՍՊԸ-ի «կանոնադրական կապիտալ» հասկացության ձևակերպությունը: «Կանոնադրական կապիտալ» հասկացության վերաբերյալ միասնական և ավարտուն մշակում չկա նաև քաղաքացիական իրավունքի տեսական գրականության մեջ:

Մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի² (այսուհետ՝ Օրենսգրք) ընդունումը ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ «կանոնադրական կապիտալ» հասկացությունն ընդհանրապես չէր օգտագործվում: Նախահեղափոխական ժամանակաշրջանում իրավաբանական անձի գույքային բազայի և մասնավորապես կանոնադրական կապիտալ հասկացության փոխարեն օգտագործվում էին «պահուստային կապիտալ», «քաժնետիրա-

կան կապիտալ», «հիմնական կապիտալ» հասկացությունները: Սովետական ժամանակաշրջանում լայնորեն գործածվում էր «կանոնադրային ֆոնդ» հասկացությունը, որի տակ հասկացվում էր «ձեռնարկությանը ամրակցված հիմնական և շրջանառու ֆոնդերի դրամական գնահատումը, որոնք հաշվառված էին ձեռնարկության հաշվեկշռում»: Նկատի ունենալով այն փաստը, որ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալ հասկացությունը ներկայիս ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ նախատեսվել և օգտագործվում է առանց դրա սահմանումը ձևակերպելու՝ չի կարող քննադատության շարժանալ: Նշանակած հասկացության սահմանումը բացակայում է նաև 2001թ. ընդունված «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում⁴ (այսուհետ՝ Օրենք), որով ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի կարգավորմանը նվիրվել են բազմաթիվ հոդվածներ: Օրենքի 2-րդ գլխի 10-րդ հոդվածը, 3-րդ և «Ընկերության կանոնադրական կապիտալ» վերտառությամբ 4-րդ գլուխը պարունակում են կանոնադրական կապիտալի և դրա հետ կապված հարաբերությունների կարգավորմանն ուղղված այնպիսի նորմեր, ինչպիսիք են՝ կանոնադրական կապիտալի չափը (10-րդ հոդվածի 2-րդ մասի ե/ կետ), ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կարգը (10-րդ հոդվածի 2-րդ մասի ե/ կետ), ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը փոխանցելը (օտարելը) (14-րդ հոդված), մասնակցի բաժնեմասի՝ ժառանգներին կամ իրավահաջորդներին փոխանցման կարգը (16-րդ հոդված), ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը գրավ դնելը (17-րդ հոդված), ընկերության կողմից կանոնադրական կապիտալու բաժնեմասը ձեռք բերելը (18-րդ հոդված), կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բոնագանձում տարածելը կամ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բռնագրավելը (20-րդ հոդված), բաժնեմասերն ընկերության կանոնադրական կապիտալում (28-րդ հոդված), ավանդներն ընկերության կանոնադրական կապիտալում (29-րդ հոդված), կանոնադրական կապիտալում ավանդների ներդրման կարգը (30-րդ հոդված), կանոնադրական կապիտալի ավելացումը կամ նվազեցումը (31-րդ, 32-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածներ): Մեր կարծիքով, ինչպես Օրենսգրի 98-րդ հոդվածում, այնպես էլ Օրենքի 28-րդ հոդվածում պետք է արտացոլվի կանոնադրական կապիտալ հասկացության սահմանումը, քանի որ այդ հասկացությունն ակտիվություն օգտագործվում է նշված նորմատիվ իրավական ակտերում, և որ շատ կարեղ է, այդ հասկացությունն օգտագործվում է ինչպես Օրենսգրի, այնպես էլ Օրենքի համապատասխան հոդվածներում ՍՊԸ-ի պաշտոնական հասկացության մեջ: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի պաշտոնական հասկացության բացակայության պայմաններում նշված հասկացությունը իրավաբանական գրականության մեջ կարող է միատեսակ չմեկնաբանվել: Նմանօրինակ իրավիճակ է ստեղծվել Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ ոչ քաղաքացիական օրենսգրքում և ոչ էլ ՍՊԸ-ների մասին ֆեներատիվ օրենքում ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի պաշտոնական հասկացություն սահմանված չէ: Դրա արդյունքում Վ. Ֆ. Կորելսկի և Ռ. Վ. Գավրիլովի համահետինակությամբ լույս տեսած Բորսայական բառարանում նշված հասկացությունը բացատրվում է հետևյալ կերպ: «Կանոնադրական կապիտալը դրամական այն արժեքն է, որը ներդրվում է բաժնետիրական ընկերության հիմնադրի (հիմնադիրների) կողմից՝ որպես նրա գործունեության մեկնարկային կապիտալ»⁵: Բացի դրանից, ժամանակակից գրականության մեջ առկա են նաև «կանոնադրական կապիտալ» հասկացության այնապիսի սահմանումներ, որոնք նշված երևույթի նյութական իմաստն ընդհանրապես չեն բացահայտում: Ըստ Բերնարի և Կոլի՝ Ֆինանսա-տեսական բացատրական բառարանի՝ «կանոնադրական կապիտալը կազմակերպության ստեղծման ժամանակ նրա կանոնադրությամբ սահմանված կապիտալի չափն է»⁶: «Կանոնադրական կապիտալ» հասկացությունը նմանօրինակ կերպով է բացատրվում նաև Ս. Ի. Կոլագինի կողմից, որի տեսակետի համաձայն՝ «կանոնադրական կապիտալը այն կապիտալն է, որի չափը սահմանվում է կանոնադրությամբ»⁷: Մեկ այլ հետինակ՝ Ռ. Տ. Բատիստան քննարկվող հասկացությունը բացատրում է հետևյալ ձևով՝ «կանոնադրական կապիտալը մշտական հաշվապահական ցուցանիշ է, որն արտահայտում է կազմակեր-

պության ունեցվածքը»⁸:

Որոշ հեղինակներ առաջարկում են «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալ» հասկացությունը դիտարկել տնտեսական և իրավական տեսանկյուններից: Այսպես, Ն. Ա. Լիտնևայի տեսակետի համաձայն՝ «Տնտեսական առումով կանոնադրական կապիտալը սեփական կապիտալի հիմնադրական սկզբնական արտահայտությունն է, հիմնադիրների կողմից կազմակերպության ունեցվածքում նրա կանոնադրական նպատակների իրականացման համար ներդրվող գումար», իսկ քաղաքացիական իրավունքի տեսանկյունից՝ «Կանոնադրական կապիտալը պարտատերերի շահերը երաշխավորող գույքի նվազագույն չափն է»⁹: Սակայն, հասկանալի չէ, թե ինչում է կայանում նշված հասկացությունը տարբեր տեսանկյուններից դիտարկելու անհրաժեշտությունը, եթե դրանք, ըստ էության, ուղղված են «կանոնադրական կապիտալ» հասկացության սահմանմանը: Մեր կարծիքով, դրանց միաձուլման միջոցով ուսումնասիրվող երևույթի բնութագիրն առավել ամբողջական կդառնա: Այս առումով կարելի է համաձայնել Օ. Ա. Սերովոյի կարծիքի հետ, որի համաձայն՝ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի դիտարկումը տնտեսական և իրավական տեսանկյուններից միակողմանի է և իմաստ չկա այդ հասկացությունը սահմանել տարբեր տեսանկյուններից, կախված այն բանից, թե ում կողմից են դրանք դիտարկվում՝ իրավագետի, թե տնտեսագետի, պայմանով, որ մեկ միասնական հասկացության մեջ արտացոլվեն ինչպես այդ կատեգրիայի տնտեսական, այնպես էլ իրավական կողմերը»¹⁰: «Կանոնադրական կապիտալ» հասկացության կապակցությամբ ընդհանրական մոտեցման կողմնակից է նաև Ի. Ա. Սայապինան, որն առաջարկում է այդ հասկացությունը ձևակերպել հետևյալ կերպ՝ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը ընկերության գույքի նվազագույն չափը սահմանող դրամական արժեքների հանրագումարով»¹¹: Սակայն այս հասկացությունը ևս արժանի է քննադատության, ամենից առաջ այն պատճառով, որ կանոնադրական կապիտալի հասկացությունը չի կարելի սահմանել «մեծություն» բառի միջոցով, քանի որ այն ոչ թե ինչ-որ պայմանական միավոր է, այլ իրական, որոշակի քանակի գույք, ընկերության ունեցվածքի ամփաթեշ նվազագույն մաս, որը հիմնադիրների գույքից առանձնացվում է պարտատե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերի շահերը երաշխավորելու և ընկերության հիմնադիրների (մասնակիցների) պատասխանատվությունը սահմանափակելու համար: Որոշակի նմանություն ունի նաև Ս. Ա. Մակարովի սահմանումը. «Կանոնադրական կապիտալը հիմնադիրների ներդրումների հաշվին ձևավորված որոշակի դրամական գումար է, որը նախատեսվում է ընկերության գործունեության, պարտատերերի գույքային շահերի պաշտպանության և հիմնադիրների մասնակցության բաժնեմասերը որոշելու համար»¹²: Չնայած, որ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի հասկացության սահմանումը դրա գործառույթների դիտարկման տեսանկյունից ճիշտ է, սակայն չի կարող քննադատության շարժանանալ այն փաստը, որ այդ սահմանումը հեղինակի կողմից կառուցվել է «որոշակի դրամական գումար» բառակապակցության միջոցով: Չե՞ որ կանոնադրական կապիտալ ասելով հասկացվում են ոչ միայն դրամական գումարները, այլև արժեքները, այլ գույքը կամ գույքային իրավունքները, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքները, որոնց, որպես ավանդի ներդրման հնարավորությունը նախատեսված է օրենսդրությամբ:

«Կապիտալ» հասկացությունը (լատիներեն՝ *capitalis*, որը նշանակում է զլիսավոր) տնտեսական հարաբերություններում օգտագործվում է գործարարության մեջ կիրառվող համախառն աղբյուրները որոշելու համար¹³: «Աղբյուր» հասկացությունն իր հերթին բացատրվում է հետևյալ կերպ՝ «Դա այն ամենն է, ինչը ծախսվում է արտադրանք բողարկելու և ծառայություններ մատուցելու համար՝ դրամական միջոցներ, արժեքներ, պաշարներ, հնարավորություններ, եկամուտներ»¹⁴: Ինչ վերաբերում է «կանոնադրական» հասկացության սոուզարանությանը, ապա այն առաջին հերթին ունի «հիմնական» և միայն երկրորդ հերթին «կանոնադրությամբ հաստատված» նշանակությունները: Այդ պատճառով կանոնադրական կապիտալը ենթարկում է ոչ միայն այն կապիտալը, որը սահմանված է ՍՊԸ-ի կանոնադրությամբ, այլև ընկերության ստեղծման և գործունեության հիմքը՝ նրա գույքային բազան:

Ելնելով վերը նշված նկատառումներից՝ «կանոնադրական կապիտալ» հասկացության համար առաջարկված բոլոր սահմանումներից առավել ընդունելի է Ա. Ն. Կիրսանովի տեսակետը, որը բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալ հասկացությունը ձևակերպում է հետևյալ կերպ՝ «Կանոնադրական կապիտալը կենսունակ բաժնետիրական ընկերության ձևակերպում սապատակով հիմնադիրների կողմից

որպես ավանդ փոխանցվող սկզբնական միջոցների դրամական համարժեքով արտահայտված գումարն է, որը բավարար է նրա հետագա զարգացման, պարտատերերի շահերի երաշխավորման համար, և որի նվազագույն չափը սահմանված է օրենսդրությամբ»¹⁵:

Ինչ վերաբերում է ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալին, ապա հնարավոր ենք համարում նշված հասկացության ձևակերպումը սահմանել հետևյալ կերպ. «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը դրամական փոխարժեքով արտահայտված, կանոնադրությամբ նախատեսված չափերով մասսերի բաժանված, հիմնադիրների (մասնակիցների) կողմից որպես ավանդ ներդրված Ընկերության գույքի այն նվազագույն չափն է, որն ապահովում է Ընկերության նախնական մեկնարկային գործունեությունը, երաշխավորում է Ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանությունը, որոշում է կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) մասնաբաժինները և սահմանափակում նրանց պատասխանատվությունն Ընկերության պարտավորություններով»:

ՍՊԸ-ի «կանոնադրական կապիտալ» հասկացությունը և «ՍՊԸ-ի գույք» հասկացությունները նույնը չեն: Վերջինիս արժեքը չի համապատասխանում կանոնադրական կապիտալի դրամական փոխարժեքի չափին: ՍՊԸ-ի գույքի համեմատությամբ, ընկերության կանոնադրական կապիտալը, ավելի ճիշտ դրա դրամական փոխարժեքը, ինչպես նաև նրա բաժնեմասերից յուրաքանչյուրի անվանական արժեքը սահմանված են ընկերության կանոնադրությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայրենական օրենսդրության մեջ բացակայում են «կանոնադրական կապիտալ» և «ՍՊԸ-ի գույք» հասկացությունների ձևական սահմանումներ՝ անհրաժեշտ է դրանց հարաբերակցությունը պարզաբնել այնպես, որպեսզի բացառված դրանց նույնացման հնարավորությունը:

«Գույք» հասկացությունն իրավաբանական գրականության մեջ օգտագործվում է մի քանի իմաստներով: Այսպես, Ի. Վ. Երշովան այս հասկացությունը մեկնաբանում է երեք իմաստներով: Առաջին հերթին «գույք» հասկացության տակ հասկացվում է առարկաների և նյութական այլ արժեքների ամբողջությունը, այդ բվում՝ դրամը և արժեքները: Երկրորդ հերթին այս հասկացության տակ հասկացվում են առարկաները և գույքային իրավունքները: Եվ երրորդ իմաստով «գույքն» իրենից ներկայացնում է առարկաների, գույքային իրավունքների և պարտականությունների ամբողջու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն, որոնք բնութագրում են իրենց կրողի գույքային դրույունը¹⁶:

Լ. Վ. Լապաշի կարծիքով՝ «Ներկայիս օրենսդրությունը «գույք» հասկացության կառուցվածքը ճշտելու և դրա բովանդակությունը պարզելու կարիք ունի, որը հնարավոր է կատարել եռատարր համակարգ կառուցելու միջոցով՝ առարկաներ, ներառյալ դրամ և արժեթղթեր, գույքային իրավունքներ և այլ գույք»: «Այլ գույք» ասելով՝ հետինակը ենթադրում է, որ դրա տակ մտնում են այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են էներգիան և հզորությունը¹⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի համաձայն՝ անձի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, որը կարող է արտահայտված լինել ինչպես նյութական (առարկաների), այնպես էլ առարկաների նկատմամբ իրավունքների և պահանջի իրավունքի տեսքով: Ինչպես նշում է Լ. Վ. Լապաշը. «առանձին դեպքերում դատարանը արտահայտում է այն կարծիքը, որ «գույք» տերմինը վերաբերում է բոլոր տեսակի ամրագրված իրավունքներին, որոնք հայցվորն ունակ է ապացուցել: Այստեղ, անկասկած, մտնում են ֆիզիկական սեփականություն չհանդիսացող մասնավոր իրավունքի այնպիսի ակտիվներ, ինչպիսիք են բաժնետոմսերը և դրամական պահանջները, որոնք հիմնված են պայմանագրի կամ դելիկտի վրա»¹⁸: Նշենք, որ «գույք» տերմինի տակ դելիկտային պարտավորությունների դիտարկման կողմնակից է նաև Վ. Կեսյանը, որի տեսակետի համաձայն՝ «Գույքի, որպես սեփականության իրավունքի օրենսդիր դերում հանդիս են օալիս նաև դելիկտային պարտավորություններից ծագող իրավունքները»¹⁹:

Եթե «գույք» հասկացությունը դիտարկենք որպես առարկաների ամբողջություն, գույքային իրավունքներ և պարտականություններ, ապա պարզ է դանում, որ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը» այլ հասկացություն է, քան «ընկերության գույք» հասկացությունը, քանի որ «կանոնադրական կապիտալ» հասկացությունը չի կարող ներառել պարտքեր, այսինքն՝ գույքային պարտավորություններ: Հետևաբար, ՍՊԸ-ի գույք ասելով պետք է հասկանալ Ընկերության տիտղոսային տիրապետման տակ գտնվող իրերը՝ շարժական և անշարժ գույքը (իրերը, գույքային համալիրները, հողային տարածքները և այլն), դրամը, արժեթղթերը, այլ գույքն ու գույքային իրավունքները (իրերի նկատմամբ իրավունքներ և գույքի կապակցությամբ ծագող պարտականություններ), մտավոր գործունեության արդյունքները, դրանց նկատմամբ

բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն): ՍՊԸ-ի ունեցվածքի մեջ են մտնում նաև Ընկերության կողմից իր գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղները, արտադրանքը և շահույթը:

ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի և ՍՊԸ-ի գույքի միջև էական տարրերություններից մեկն էլ կայանում է նրանում, որ ի տարրերություն ՍՊԸ-ի գույքի կազմի փոփոխության՝ նրա կանոնադրական կապիտալի ձևավորման համար օրենսդրությամբ, ինչպես նաև առանձին ընկերությամբ կանոնադրությամբ սահմանված են որոշակի պահանջներ, որոնց պահպանումը պարտադիր է ընկերության հիմնադիրների (մասնակիցների) համար: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի կազմի և չափի փոփոխումը հնարավոր է միայն ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովի որոշմանք՝ ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունները կատարելու և այդ փոփոխությունները պետական գրանցման ենթարկելու միջոցով (Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերություն): ՍՊԸ-ի որպես իրավաբանական անձի, գույքն ու պարտավորությունները արտացոլվում են նրա հաշվապահական հաշվեկշռում, որն իրենից ներկայացնում է կազմակերպության տնտեսական միջոցների վերաբերյալ տեղեկություններ, որոնք կոչվում են ակտիվներ: «Ակտիվները ներառում են հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, ֆինանսական ներդրումները, պահուածները, դերհտորական պարտքը. իրենց հերթին պահպանների մեջ հաշվառվում են կազմակերպության կապիտալներն ու ռեզերվները, կարճաժամկետ և երկարաժամկետ փոխառու միջոցները, դերհտորական պարտքը»²⁰:

Խոսելով ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի կառուցվածքի մասին՝ պետք է նկատի ունենալ ոչ թե դրանում ընկերության հիմնադիրների ներդրումները (նշված հարաբերությունը իրավաբանական գրականության մեջ մեկնաբանվում է որպես հիմնադիրների կողմից ընկերության կանոնադրական կապիտալու դրամական կամ ոչ դրամական ավանդների ներդրման գործընթաց²¹), այլ կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի հանրագումարը: Այսպես, Ե. Ա. Իգնատյան ընդգծում է, որ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը բաղկացած է ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքից»²²: Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալու մասնակիցի բաժնեմասի իրավական բնույթի ուսումնասիրության և մեկնաբանության վրա:

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասի հասկացության և իրավական բնույթի մասին գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Դրանցից մեկի համաձայն՝ բաժնետոմսը կամ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասը պարտավորական իրավունք է: Այս դիրքորոշման կողմնակիցներից են՝ օրինակ Ս. Ա. Խօնատենիկոն և Ս. Ն. Մովչանը²³: Չնենարկվող դիրքորոշման կողմնակից է նաև Վ. Պ. Կամիջենսկին, որը նշված հարաբերությունը բնութագրում է հետևյալ կերպ՝ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը պարտավորականիրավական բնույթի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների ամբողջություն է: Դրանք ՍՊԸ-ի մասնակիցների կողմից ձեռք են բերվում ընկերության կանոնադրական կապիտալում իրենց ներդրած ավանդի փոխարեն»²⁴: Իսկապես, Օրենսգրիֆ 50-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավաբանական անձի գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ՝ նրա հիմնադիրները (մասնակիցները) այդ իրավաբանական անձի նկատմամբ ունեն կամ չունեն պարտավորական իրավունքներ:

Նշված խնդիրի կապակցությամբ մեկ այլ կոնցեպցիա է առաջ քաշում Ս. Դ. Մոգիլևսկին, որի տեսակետից համաձայն՝ «կանոնադրական կապիտալում բաժնեմասը, լինելով քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ոչ այլ ինչ է, քան գույքային իրավունքների տարատեսակ, քանի որ վերջիններիս վերագրվում են մասնակիցների սուբյեկտիվ իրավունքները, կապված գույքի տիրապետման, օգտագործման և տօրինման իրավագործությունների հետ, ինչպես նաև այն նյութական (գույքային) պահանջները, որոնք ծագում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև գույքը բաժանելու կամ փոխանակելու դեպքում»²⁵:

Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Ն. Բեգունովան, որը գրում է՝ «ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասը քաղաքացիական իրավունքի առանձնահատուկ օբյեկտ է, որն ամբողջությամբ չի մտնում ոչ առարկաների, այդ բվում դրամի և արժեթղթերի, այլ գույքի կամ գույքային իրավունքների մեջ, և ոչ էլ ոչ նյութական բարիքների մեջ: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասն ունի այնպիսի հատկություններ, որոնք ընդհանրական նշանակություն ունեն քաղաքացիական իրավունքի բոլոր օբյեկտների համար և ավահովում է համապատասխան իրավունքը կրող սուբյեկտների նյութական և ոչ նյութական կարիքների բավարարման ունակությունը»:

դուրս գալու կամ հեռացվելու դեպքում կանոնադրական կապիտալում իր բաժնեմասի իրական արժեքը ստանալու, լուծարման դեպքում պարտատերի պահանջները բավարարելուց հետո ավելացած գույքից մասնաբաժին ստանալու իրավունք²⁶: Սեր կարծիքով, պետք է համաձայնել Ի. Ա. Սայապինայի այն տեսակետին, որ. «այդ դիրքորոշմամբ հաշվի չի առնվում այն հաևգամանքը, որ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունեցող մասնակցի ոչ բոլոր իրավունքներն են, որ ունեն գույքային բովանդակություն»: Սեր կարծիքով ևս, այդպիսի դիտարկումն արդարացված կարող է լինել միայն այն դեպքում, եթե հիմնադիրների և ՍՊԸ-ի միջև ծագած իրավահարարերության օբյեկտի դերում հանդես են գալիս գույքը կամ գույքային իրավունքները, քանի որ չի կարելի իրավունքների այդ զանգվածում բացառել Օրենսգրիֆ 132-րդ հոդվածով սահմանված այնպիսի օբյեկտների հնարավոր առկայությունը, ինչիսին օրինակ տեղեկատվությունն է: Հետևաբար՝ գիտական այն մոտեցումը, որի համաձայն՝ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասը պահանջների միայն գույքային իրավունքներ, մերժում է ՍՊԸ-ի և մասնակիցների միջև պարտավորական այլ հարաբերությունները:

Ելեւով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասը քաղաքացիական իրավունքի առանձնահատուկ օբյեկտ է, որն ամբողջությամբ չի մտնում ոչ առարկաների, այդ բվում դրամի և արժեթղթերի, այլ գույքի կամ գույքային իրավունքների մեջ, և ոչ էլ ոչ նյութական բարիքների մեջ: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասն ունի այնպիսի հատկություններ, որոնք ընդհանրական նշանակություն ունեն քաղաքացիական իրավունքի բոլոր օբյեկտների համար և ավահովում է համապատասխան իրավունքը կրող սուբյեկտների նյութական և ոչ նյութական կարիքների բավարարման ունակությունը:

¹ Տես Քարտելյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երևանի համասարանի չրատարակչություն, Երևան, 2006թ., էջ 116:

² Տես ՀՀ Քաղաքացիական օրենսգրիֆ// ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.1998:

³ Տես Սերգеева Е. В. Правовой статус общества с ограниченной ответственностью//Право и государство. Теория и практика. 2006. N 11. С. 73-74.

⁴ Տես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք// ՀՀՊՏ 20010/38 (170), 07.12.2001:

⁵ Տես Корелский В. Ф., Гаврилов Р. В. Биржевой словарь. Т 2. М., 2000. С. 346.

- ⁶ Stéu Бернар и Колл. Толковый экономический и финансовый словарь: французская, русская, английская, немецкая, испанская терминология. Т 1. М., 1997. С. 287.
- ⁷ Stéu Кулагин М. И. Избранные труды. М., 1997. С. 85.
- ⁸ Stéu Батиста Р. Т. Правовое регулирование акционерных обществ в Панаме: Автореф., Дисс... канд. юрид. наук. М., 1987. С. 80. Цит. по изд.: Тарасенко Ю. А., Кредиторы: защита их имущественных прав. М., 2004. С. 39.
- ⁹ Stéu Лытнева Н. А. Учет и анализ уставного капитала при создании, реорганизации и ликвидации обществ с ограниченной ответственностью. М., 2004. С. 12.
- ¹⁰ Stéu Серова О. А. Право собственности обществ с ограниченной ответственностью. Дисс... канд. юрид. наук: 12.00.03. Коломна. 2001. С. 64.
- ¹¹ Stéu Саяпина И. А. Функции и структура уставного капитала общества с ограниченной ответственностью//Право и политика. 2006. N 6. С. 5
- ¹² Stéu Макаров С. А. Общество с ограниченной ответственностью как субъект гражданского права. Дисс... канд. юрид. наук: 12.00.03. Саратов. 2004. С. 8.
- ¹³ Stéu Энциклопедический словарь бизнесмена: менеджмент, маркетинг, информатика./Под общй редакции М. И. Молдованова. Киев. 1993. С. 340.
- ¹⁴ Stéu Вечканов Г. С., Вечканова Г. Р. Словарь рыночной экономики. СПБ. 1995. С. 424.
- ¹⁵ Stéu Кирсанов А. Н. Порядок формирования и изменения уставного капитала акционерных обществ по российскому и английскому праву. Дисс. канд. юрид. наук. 12.00.03, М., 2006, С. 105.
- ¹⁶ Stéu Ершова И. В. Имущество и финансы предприятия. Правовое регулирование: Учебно-практическое пособие. М., 1999, С. 60.
- ¹⁷ Stéu Лапач Л. В. Проблемы строения категории “имущество” в российском гражданском праве: Автореф. Дисс.. канд. юрид. Наук:12.00.03. Ростов-на-Дону. 2007, С. 8-9.
- ¹⁸ Stéu Лапач Л. В. Понятие “имущество” в российском праве и в Конвенции о защите прав человека и основных свобод//Российская юстиция. 2003, С. 18.
- ¹⁹ Stéu Կարապետյան Ն. «Մեփականության անձնումիտելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում», Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2010թ., էջ 27: *Kesyan V.*, Russia, Application no. 36496/02, 19 հնկումքերի 2006թ.:
- ²⁰ Stéu Ершова И. В., Նշված աշխատ. էջ 62.
- ²¹ Stéu Саяпина Н. А., Функции и структура уставного капитала ООО//Право и политика. 2005, N 6, С. 6.
- ²² Stéu Игнатова Е. А. Комментарий к федеральному закону “Об ООО”. Постатейный. М., 2004, С. 60.
- ²³ Stéu Игнатенко А. А., Мовчан С. Н. Комментарий к федеральному закону “Об ООО”. М., 1999, С. 136.
- ²⁴ Stéu Камышенский В. П., Некоторые особенности формирования уставного капитала ООО//Актуальные проблемы частноправового регулирования. Материалы всероссийской четвертой научной конференции молодых ученых. Самара, 23-24 апреля 2004г//отв. ред. Ю. С. Пивоваров, В. Д. Рузанова. Самара. 2004, С. 79.
- ²⁵ Stéu Могилевский С. Д. Органы управления хозяйственным обществом: Правовой аспект: Монография. М., 2001, С. 79.
- ²⁶ Stéu Бегунова Н. Наследование долей в ООО. Юрист. 2004, N 15, С. 4.
- ²⁷ Stéu Саяпина И. А. Функции и структура уставного капитала ООО//Права и политика. 2005, N 6, С. 6.

РЕЗЮМЕ**Понятие и структура уставного капитала общества с ограниченной ответственностью**

В статье анализированы точки зрения и мнения о понятии уставного капитала и его структуры, вошедшие в обиход правовой литературы и законодательства. На основе их обобщения и подытоживания, сформулирована характеристика и структуры уставного капитала общества с ограниченной ответственностью, которая может заинтересовать студентов юридических вузов и аспирантов, а также субъектов бизнес права как в теоретическом, так и в практическом плане.

SUMMARY**The concept of charter capital of limited liability organization**

The article analyses the views and opinions about the concept of charter capital and its structure circulated in legal literature and legislation. On the basis of their review and summary, a description of the charter capital and structure of limited liability organization was formulated which can be of interest for students of law schools and post-graduates in law as well as business entities both in theoretical and practical aspects.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**ԱՆՍԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ**

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՊՈՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԱՌԵՎԱՏՐԱՅԻՆ ԿԱԾԱՌՔԻ ՕԲՅԵԿՏԻՎ
ԿՈՂՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՏԿԱՆԻԾ**



Առևտրային կաշառքի հանցակազմը նորամուծություն է հանդիսանում ետխորհրդային քրեական իրավունքում: Վերոհիշյալ հանցակազմը նախատեսող նորմը (ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվ.) ընդգրկում է երկու փոխկազմակցված արարք՝ առևտրային կամ այլ կազմակերպության ժառայողին, արքիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արքիտրին մասին օրենսդրությանը համապատասխան գործառույթներ իրականացնող արքիտրին, առողիտորին կամ փաստաբանին կաշառտալը (200-րդ հոդվ. 1-ին մաս), ինչպես նաև նշված սուրբեկտների կողմից կաշառք ստանալը (200-րդ հոդվ. 3-րդ մաս):

ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը օբյեկտիվ կողմից բնութագրվում է որպես վերը նշված անձանց ապօրինաբար անձանք կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեքորդեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմը, համապատասխանաբար, արտահայտվում է վերոհիշյալ սուրբեկտների կողմից օրենքում թվարկված նյութական արժեքները և այլ օգուտները նույն պայմաններով ապօրինաբար ստանալու կամ պահանջելու կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելու մեջ:

Առևտրային կաշառքի օբյեկտիվ կողմի համար հատկանշական է դրամ, գույք կամ այլ օգուտներ տալու կամ ստանալու ապօրինի բնույթը, այսինքն՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածով նախատեսված արարքի հանցակազմը առկա է այն դեպքում, եթե գույքային բնույթի այս կամ այն բարիքը տրվում կամ ստացվում է ապօրինաբար: Ապօրինությունը կայանում է նրանում, որ ծառայողի մոտ առկա չէ այդպիսի վարձատրություն (նյութական բովանդակությամբ օգուտ) ստանալու որևէ իրավական իիմք, այսինքն՝ դա չի բխում օրենքի, ենթաօ-

րենսդրական ակտերի, կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի, ներքին ակտերի, քաղաքացիական կամ աշխատանքային պայմանագրի դրույթներից: Դա նշանակում է, որ այդպիսի օգուտ ստանալը ուղղակիորեն արգելված է իրավական ակտով կամ պայմանագրով, կամ ուղղակի արգելված անդամակազմակազմության գործունեության իրականացման կարգին, սկզբունքներին և նպատակներին: Այսինքն՝ նյութական օգուտ տրամադրելը (ստանալը) ապօրինի բնույթ է կրում այն բոլոր դեպքերում, եթե այն ստանալու հնարավորությունը ամրագրված չէ օրենքում կամ այլ իրավական ակտում կամ նախատեսված չէ պայմանագրի պայմաններով: Նկատի ունենալով հանրային ծառայության համակարգում չընդգրկված կազմակերպությունների և որոշակի մասնագիտական գործառույթներ իրականացնող անձանց իրավական վիճակը և վերջիններիս գործունեության իրավական կարգավորման յուրահատկությունը, որով դրանք տարրերվում են հանրային ծառայողներից, տվյալ դեպքում վարձատրության օրինականության հարցը լուծվում է ոչ այդքան միանշանակ, ինչպես հանրային ծառայողների դեպքում: Այսպես, եթե հանրային ծառայության մեջ գտնվող անձանց համար օրենքով իմպերատիվ սահմանվում են արգելներ և սահմանափակումներ՝ կապված ծառայողական պարտականությունների առնչությամբ այլ անձանցից նվերներ, գումարներ կամ ծառայություններ, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարումից բխող իրավարակումների կամ ելույթների համար հոնորար ստանալու հետ, ապա հանրային ծառայող շհանդիսացող անձանց գործունեության իրավաչափ վարձատրության աղբյուրները կարող են լինել նաև ծառայողական գործառույթների իրականացման համար այլ անձանցից ստացված միջոցները: Օրինակ՝ առևտրային կազմակերպության ներքին իրավական ակտով կամ դրա ծառայողի հետ կնքված աշխատանքա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յին պայմանագրով նախատեսվում է վարձատրություն ստանալու իրավունք՝ տվյալ աշխատողի աջակցությամբ կատարված գործարքի արժեքի որոշակի տոկոսի չափով, արդիտրաժային տրիբունակի ռեզլամենտով սահմանված կարգով վեճը քննելու և լուծելու համար կողմերից գանձվում է որոշակի վճար, և դրանից գոյացած միջոցների հաշվին ապահովվում արբիտրների վարձատրությունը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող առողջապահության կամ ֆաստարանը իրենց մասնագիտական պարտականությունների կատարման համար անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա վերջինից ստանում են որոշակի վճար: Այդպիսի վարձատրությունը իրավաչափ համարելու համար պետք է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք այն ստանալը հիմնված է օրենքի, այլ իրավական ակտի կամ դրանց համապատասխան կնքված պայմանագրի վրա և չի հակասում որևէ իրավական նորմի պահանջներին կամ տվյալ կազմակերպության (ինստիտուտի) գործունեության սկզբունքներին և խնդիրներին: Այսպես, ֆաստարանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու համար վճար ընդունելը վստահորդի հետ կնքված պայմանագրի հիման վրա օրինական է, քանի որ դա բխում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներից: Սակայն եթե հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող ֆաստարանը իրավաբանական օգնություն ցույց տալու համար փոխհատուցում ստանա հանրային պաշտպանության իրավունք ունեցող անձից, ում օրենքի ուժով իրավաբանական օգնությունը պետք է ցույց տրվի անվճար, ապա այդպիսի վարձատրությունը միանշանակ ապօրինի է: Նույնը վերաբերում է նաև արբիտրաժային վեճը քննող արբիտրին, որը գործին մասնակցող անձից գումար կամ նվեր է ստանում՝ նրա օգոտին գործը լուծելու համար, ինչպես նաև բաժնետիրական ընկերության բաժնետերերի կամ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հետ կնքված պայմանագրի հիման վրա տվյալ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում իրականացնող և այդ պայմանագրով սահմանված կարգով վարձատրվող առողջապահության, որը օրինական վարձատրությունից բացի ընկերության ղեկավարից կամ հիմնադրամի կառավարիչից ստանում է այս կամ այն գույքային օգոտ և նրա օգոտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Նկատի ունենալով ոչ հանրային հատվածի ծառայողների գործունեության բնույթը և դրա վարձատրման կարգը (մասնավորապես՝ խորագույն վերաբերություն է իրենց հաճախորդներից համար հասանելիք վարձատրությունը հաճախորդի փոխարեն վճարվի երրորդ անձի կողմից):

Փաստորեն, տրամադրվող օգոտի իրավաչափությունը պայմանավորվում էր ոչ թե այն ստանալու իրավական հիմքերի առկայությամբ կամ բացակայությամբ, որպիսի հանգանաքը տվյալ դեպքում կրում է վճռորոշ նշանակություն, այլ ստացողի կարգավիճակով, ինչը չի կարելի արդարացված համարել:

Ընդ որում, ինչ վերաբերվում է հաճախորդի կարգավիճակը ձեռք բերելուն, ապա այդ հարցի լու-

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ծումը ևս միանշանակ չելու: Այսպես, ծառայությունների վճարովի մատուցումը կարգավորող քաղաքացիական օրենսգրքի դրույթների, ինչպես նաև մասնագիտական գործունեության այս կամ այն ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի (օրինակ՝ «Փաստաբանության մասին», «Առողջապահության գործունեության մասին» ՀՀ օրենքների) նորմերի պահանջներից բխում է, որ ծառայությունները պետք է մատուցվեն կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա, հետևաբար տրամաբանական է ենթադրել, որ հաճախորդի կարգավիճակը ծագում է համապատասխան պայմանագրի կնքելիս: Մինչեւ գործնականում հաճախակի լինում են դեպքեր, երբ որոշակի ծառայությունները մատուցվում են առանց գրավոր պայմանագրի կնքելու, թեև օրենքի ուժով դա համարվում է պարտադիր պայման: Մեր կարծիքով, առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի փաստացի մատուցվող ծառայությունների դիմաց վարձատրություն տրամադրելը կամ ստանալը սխալ կիրակեր որպես առևտրային կաշառ՝ հիմք ընդունելով միայն օրենքի վերոհիշյալ պայմանի չպահպանման հանգամանքը: Իհարկե, տվյալ դեպքում վարձատրությունը տրամադրվում է օրենքով սահմանված կարգի խախտմամբ, սակայն չի կարող համարվել ըստ եռության ապօրինի, քանի որ իրավական նորմերի պահանջներից բխում է տվյալ տեսակի ծառայությունների մատուցման վճարովի բնույթը, ուստի դրա դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Նման դեպքերում անձը կարող է ենթարկել պատասխանատվության (այդ բայում՝ քրեական) այլ արարքի (օրինակ՝ հարկ վճարելուց խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրության), սակայն ոչ առևտրային կաշառի համար: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կողմերի միջև կնքված պայմանագրում նշված վարձատրության գումարը չի համապատասխանում փաստացի ստացվածին:

Հետագայում վերոհիշյալ օրենսդրական ձևակերպումը փոփոխվել է և գործող խմբագրությամբ ՀՀ ՔՕ 200-րդ հոդվ. 3-րդ մասով նախատեսվող արարքի օբյեկտիվ կողմը նկարագրվում է որպես համապատասխան գույքային բնույթի օգուտները ապօրինաբար ստանալը: Ծեշտելով ապօրինության հատկանիշը՝ օրենսդրը հիմնավոր պայմանագրել է առևտրային կաշառի հանցակազմի առկայությունը դրա առարկա հանդիսացող բարիքները ստանալու իրավական հիմքերի բացակայության հանգամանքով:

Նյութական բռվանդակությամբ բարիք տրամադրելու (ստանալու) ապօրինությունը արտահայտվում է նաև նրանում, որ դա չի բխում այդ-

պիսի օգուտ տրամադրողի և այն ստացողի միջև առկա հարաբերությունների բնույթից և պայմանագրված է միայն վերջինիս կողմից կատարվող որոշակի գործողությամբ (անգործությամբ): Այսպես, կաշառքի առարկա չի կարող դիտվել նշված անձանց միջև մտերիմ ընկերական, այլ անձնական կամ ազգակցական հարաբերություններով պայմանագրված և այդ հարաբերությունների հիման վրա արվող նվերը կամ անհատույց տրամադրվող այլ օգուտը, ինչպես նաև կողմերի միջև պարտավորական հարաբերությունների առկայության դեպքում ծառայողի հանդեպ ունեցած պարտքի մարման հաշվին իրեն հանձնվող որևէ նյութական արժեքը: Առևտրային կաշառքի հանցակազմի առկայության մասին կարելի է խստել միայն այն դեպքում, եթե այդպիսի վարձատրությունը հանդես է գալիս որպես այն ստացողի որոշակի վարձագիծը պայմանագրող հանգամանք, որի տրամադրման նպատակն է ապահովել վերջինիս կողմից որոշակի գործողության կատարումը կամ չկատարումը այն պարագաներում, եթե այդպիսի գործողության կամ անգործության համար տվյալ իրադրությունում հատուցում ստանալը ուղղակիրեն արգելված է կամ չի բխում իրավական նորմերի պահանջներից:

Իրավաբանական գրականությունում վարձատրության ապօրինի բնույթը բնորոշվում է որպես աշխատանքային պայմանագրի (պայմանագրի) պայմաններով չնախատեաված, կամ եթե այդպիսի գործողությունները ուղղակիրեն արգելված են գործող նորմատիվ-իրավական ակտերով կամ հիմնադիր փաստաթղթերով կամ օրենքին համապատասխան չեն բխում կնքվող համաձայնագրի, մատուցվող ծառայության կամ անձի իրավաչափ գործունեության այլ տեսակի բնույթից կամ իրականացվում են գաղտնի կամ քողարկված են օրինական այլ գործողությունների կատարմանը²: Կարծում ենք, որ նշված սահմանումները հարկ է լրացնել՝ վերոգրյալից բացի շեշտելով նաև այդպիսի օգուտ տրամադրելով (ստանալով) ծառայողի գործողությունների կամ անգործության պայմանագրված լինելու հանգամանքը, և հավելել, որ նյութական բռվանդակությամբ օգուտ տալը (ստանալը) չի բխում այն տրամադրողի և ստացողի հարաբերությունների կամ տվյալ կազմակերպության և համապատասխան ծառայողի միջև իրավահարաբերությունների բնույթից: Ինչ վերաբերում է վարձատրության տրամադրման գաղտնի կամ քողարկված լինելու հատկանիշին, ապա գտնում ենք, որ դա վերաբերում է միայն գույքային օգուտ տրամադրելու եղանակին, այլ ոչ թե արտացոլում դրա ապօրինի բնույթը:

Անդրադառնալով ապօրինի վարձատրությամբ պայմանավորված գործողութուններին (անգործությանը)` հարկ է շեշտել, որ առևտրային կաշառքի հանցակազմի առկայության համար նշանակություն չունի կաշառքով պայմանավորված գործողությունների փաստացի կատարված կամ չկատարված լինելու հանգամանքը: Այդ տեսակետից իրավացի է այն հեղինակների կարծիքը, ովքեր գտնում են, որ առևտրային կաշառքի համար կաշառք տվողին և ստացողին քրեական պատախանատվության ենթարկելիս նշանակություն չունի նյութական բովանդակությամբ բարիքները տրամադրելու պահը՝ կաշառվող անձի կողմից կաշառատուի կամ այլ անձանց օգտին որոշակի գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ, թե դրանից հետո, սակայն անհրաժեշտ է, որ կաշառվողի կողմից նշված գործողություններ (անգործություն) կատարելու վերաբերյալ պայմանավորվածությունը կաշառք տվողի և ստացողի միջև ձեռք բերված լինի մինչև կաշառվողի կողմից կաշառատուի օգտին համապատասխան գործողություններ (անգործություն) կատարելը³: Նոյն դիրքորոշումն է արտահայտել նաև ՌԴ Գերագույն դատարանի պլենումը «Կաշառակերության և առևտրային կաշառքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 6 առ 10.02.2000թ. որոշմամբ՝ պարզաբանելով, որ կաշառք կամ առևտրային կաշառք հանձնելու պահը (տվողի օգտին գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ թե հետո) չի ազդում կատարվածի որակման վրա: Վերոգրյալի կապակցությամբ Ի. Ա. Պոպովը նշել է. «Կատարվածի որակման համար նշանակություն չունի, թե երբ են նյութական արժեքները կամ ծառայությունները հանձնվել կառավարչական գործառությներն իրականացնող անձին՝ տվողի օգտին գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ՝ թե՝⁴ հետո: Սակայն ... վերջին դեպքում անհրաժեշտ է, որ նյութական վարձատրության վերաբերյալ պայմանավորվածությունը (համաձայնությունը) նախորդի սուբյեկտի գործողությանը (անգործությանը) և կանխորչի այդ գործողության (անգործության) բնույթը»: Տվյալ տեսակետի համաձայն՝ նշված անձանց քրեական պատախանատվության ենթարկելը բացառվում է նախապես չպայմանավորված կաշառքի առարկան՝ նյութական բարիքները կամ գույքային բնույթի ծառայությունները, ստանալու կամ տալու համար⁵, որպիսի մոտեցումը, կարծում ենք, հիմնավոր է: Այսպես, նկատի ունենալով, որ ծառայողին նյութական արժեքներ տալու կամ վերջինիս կողմից այն ստանալու ապօրինի բնույթը ենթադրում է, որ նրա որոշակի վարքագի-

ծը, այն է՝ կաշառատուի համար ցանկալի գործողություններ կամ անգործությունը պետք է պայմանավորված լինի կաշառքի առարկայով (արդեն իսկ ստացված կամ հետագայում ստացվելիք), ուստի առանց ապօրինի վարձատրություն ակնկալելու կատարված կամ չկատարված որևէ գործողության համար որոշակի բարիք տրամադրելը կամ ստանալը, մեր համոզմամբ, չի կարող քրեական պատախանատվություն առաջացնել: Տվյալ դեպքում ծառայողը իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս գործում է օրենքի շրջանակներում և դեկավագում իրավական ակտերի և աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագրի դրույթներով, որպիսի վարքագիծը միանշանակ իրավաչափ է, քանի որ կախված չէ որևէ գործային օգուտ ստանալու հանգամանքից: Այդ տեսակետից հիմնավոր ենք համարում Ա. Կ. Կվիցինիայի կարծիքը կաշառք ստանալու հանցակազմի օրենսդրական կատարելագործման վերաբերյալ, ըստ որի՝ հեղինակը առաջարկել է օրենքում անդրագել կաշառք ստացող պաշտոնատար անձի վարքագծի՝ կաշառվող պայմանավորված լինելու հանգամանքը: Դեռ ավելին, կարծում ենք, որ նման մոտեցումը արդարացված կլիներ տարածել ոչ միայն առևտրային կաշառք ստանալու, այլև այն տալու հանցակազմի վրա՝ նկատի ունենալով, որ ծառայողի կողմից որոշակի գործողություններ կատարելուց հետո վերջինիս նախապես չպայմանավորված նյութական վարձատրություն առաջարկելը կամ տրամադրելը նպատակ չի հետապնդում ազդեցություն գործելու նրա վարքագծի վրա և հակելու նրան այդպիսի վարձատրություն տվողի համար ցանկալի գործողություններ կատարելուն կամ կատարելուց գերծ մնալուն, ինչը, մեր համոզմամբ, տվյալ հանցագործության պարտադիր հատկանիշ է հանդիսանում: Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ կատարել համապատասխան վոփիխություն ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում՝ «անձի օգտին» բառերից հետո ավելացնելով «կաշառքով պայմանավորված» արտահայտությունը:

Առևտրային կաշառքով պայմանավորված գործողությունների (անգործության) կապակցությամբ հարկ է նշել, որ դա օրենքում չի նկարագրվում: Վերոգրյալից բխում է, որ այդպիսի գործողությունը (անգործությունը) կարող է լինել ցանկացած բնույթի, այսինքն՝ իրավաչափ կամ ոչ իրավաչափ. այդ տեսակետը ընդունվում է հեղինակներից շատերի կողմից: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ՝ «Կազմակերպության կառավարչի գործողությունը կամ անգործությունը, որի համար նրան տրվում է ապօրինի վարձատրու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն, կարող է կայանալ առևտրային գաղտնիքը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության (օրինակ՝ քաղաքական կուսակցության) որևէ գաղտնիք հրապարակելու, նախապատրաստվող կամ կնքված գործարքի, գործարար բանակցությունների, կողմների մտադրությունների մասին հայտնելու մեջ և այլն: Արժեքները և գույքային բնույթի ծառայությունները կարող են հանձնվել գործարար համաձայնագրի կնքումը դրդելու կամ, ընդհակառակը, նրա համար, որ գործարքը չկայանա»⁹: Մինչեռ, որոշ քրեագետների կարծիքով, որպես այդպիսին կարող է դիտվել միայն կաշառվողի ոչ իրավաչափ վարքագիծը: Այսպես, Ի. Ա. Պոպովը գտնում է, որ «վարձատրություն ստանալը այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված չեն վնաս պատճառելուն, օրինակ՝ փոխահավետ գործարք կատարելու համար, չի պարունակում մեկնարանվոր հանցակազմի հատկանշները» :

Համամիտ չենք նշված կարծիքին, քանի որ բացառապես անիրավաչափ, վնասի պատճառմանն ուղղված գործողությունների դիմաց որոշակի օգուտներ տալը կամ ստանալը որպես հանցանք դիտարկելը անհիմն սահմանափակում և նեղացնում է առևտրային կաշառքի հասկացությունը, որը չի բխում օրենքի իմաստից: Գտնում ենք, որ առևտրային կաշառքով պայմանավորված գործողությունները կարող են կրել ոչ միայն ապօրինի, այլև իրավաչափ բնույթը. նման դեպքում կաշառքի առարկան հանդես է գալիս որպես օրինական գործողության (անգործության) կատարման ապօրինի պայման: Ինչ վերաբերում է կաշառքով պայմանավորված անիրավաչափ վարքագիծն, ապա տրամարանական է, որ եթե կաշառքի առարկան տրվում է որևէ այլ հանցագործության հատկանշները պարունակող արարք կատարելու համար, կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:

Կաշառքը միշտ հանդես է գալիս որպես որոշակի անձի վրա ներգործելու ապօրինի հնարք, եղանակ, որը նպատակ է հետապնդում հասնել վերջինիս կողմից կաշառք տվողի համար ցանկալի վարքագիծի: Այդպիսի վարքագիծը կարող է դրսւորվել ինչպես ծառայության գծով որոշակի գործողություններ կատարելով, այնպես էլ դրանք կատարելուց գերծ մնալով, եթե դա անիրածեց էր կատարելու օրենքին, այլ իրավական ակտերին, իիմնադիր և ներքին փաստաթղթերին կամ գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան: Ինչպես նշվել է, այդ գործողություններն, ըստ եռության, կարող են իրավաչափ լինել, այսինքն՝ համապատասխանել օրենսդրությանը կամ տվյալ կազմակերպության գործունեությունը կարգավո-

րող այլ իրավական ակտերին: Օրինակ՝ որևէ գործարք կնքելը կամ այն կնքելուց հրաժարվելը, վարկ տրամադրելը, գույք վաճառելը, անձին աշխատանքի տեղափոխելը, պաշտոնը բարձրացնելը և այլն: Հնարավոր է, որ այդ գործողությունների կամ անգործության դեպքում կազմակերպությունը նույնիսկ շահույթ կամ այլ օգուտ ստանա: Սակայն, հաշվի առնելով կաշառման փաստը, այդպիսի գործողությունները կատարելու կամ չկատարելու մասին որոշումը ընդունվում է սահմանված կարգին հակառակ՝ պայմանավորված լինելով ոչ թե ծառայողական անհրաժեշտությամբ, այլ ապօրինի վարձատրության հանգամանքով: Հաճախակի նման գործողությունները կամ անգործությունը նպատակահարմար չեն տվյալ կազմակերպության համար: Օրինակ՝ կազմակերպության դեկավարը մեկ այլ կազմակերպության հետ պայմանագիր է կնքում, որով նախատեսվում է երկարատև համագործակցություն, և թեև այդ պայմանագիրի կատարումը կազմակերպությանը շահույթ է բերում, սակայն այն ավելի փոքր է, քան կարող էր լինել այլ ընկերության հետ նմանատիպ պայմանագիր կնքելիս: Բոլոր դեպքերում, եթե նույնիսկ ընկերությունը այդ գործարքի կնքման արդյունքում ստանա ոչ պակաս կամ նույնիսկ ավելի մեծ շահույթ, ապա միևնույն է, համապատասխան սուբյեկտի կողմից որպես կաշառքի առարկա ստացվող գույքային բարիքը ուղղված է ոչ թե տվյալ կազմակերպության, այլ կաշառվողի անձնական կարիքների բավարարմանը, ուստի կազմակերպությունը կաշառքի առարկայից, որպես կանոն որևէ օգուտ ձեռք չի բերում: Ընդ որում, նույնիսկ եթե ապօրինաբար ստացվող օգուտը նախատեսվում է հենց այն կազմակերպության համար, որտեղ աշխատում է կաշառվողը, ինչը, մեր կարծիքով, չի բացառվում (որպես օրինակ կարելի է պատկերացնել այնպիսի իրավիճակ, եթե բանի կառավարիչը որևէ անձի վարկ տրամադրելու նպատակով, որպես վարկի տրամադրման պարտադիր պայման, վերջինից պահանջում է ոչ համարժեք գնով բանկին վաճառել տվյալ անձին պատկանող ավտոմեքենան կամ այլ գույքը, կամ եթե կազմակերպության դեկավարը խստանում է աշխատանքի ընդունել տվյալ կազմակերպության պարտադիրը կամ նրա մերձավորին վերոհիշյալ պարտքը մերելու դիմաց փոխարենը պահանջելով հրաժարվել պարտքը ստանալոց), ինչպես նաև այլ դեպքերում, եթե տվյալ կազմակերպությունը որոշակի օգուտ է ստանում, օրինակ, կաշառման արդյունքում կնքված գործարքից ստացված շահույթի տեսքով, ապա նման արարքները չեն դադարում հանդության համար վտանգավոր լինելուց:

Սինույն է, դրանք ոտնձգություն են կազմակերպության շահերի դեմ՝ խախտելով դրա գործունեության իրականացման սահմանված կարգն ապահովող հասարակական հարաբերությունները, հետևաբար միշտ կատարվում են ի վես այդ կազմակերպության:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ գույքային օգուտ ստանալու (տալու) ապօրինության հատկանիշը կայանում է նրանում, որ դա իհմնված չէ որևէ իրավական նորմի կամ դրան համապատասխան մշակված կազմակերպության հիմնադիր փաստարդի, ներքին իրավական ակտի կամ կնքված պայմանագրի վրա, այսինքն՝ չի բխում (ուղղակիորեն արգելված է կամ նախատեսված չէ) օրենքի, այլ նորմատիվի իրավական ակտերի, կազմակերպության հիմնա-

դիր փաստարդերի, ներքին իրավական ակտերի պահանջներից, քաղաքացիական կամ աշխատանքային պայմանագրի դրույթներից կամ տվյալ կազմակերպության (ինստիտուտի) գործունեության սկզբունքներից և խնդիրներից, գործունեության իրականացման կարգից, այդպիսի օգուտ տրամադրողի և ստացողի հարաբերությունների կամ տվյալ կազմակերպության և համապատասխան ծառայողի միջև իրավահարաբերությունների բնույթից, և հանդիսանում է ծառայողի գործողությունը կամ անգործությունը պայմանավորող հանգամանք:

¹ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ. Под общ. ред. Мозякова В.В. М.: Экзамен, 2002, С. 464. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. Радченко В.И. -М., Вердикт, 1996, С. 350.

² Տե՛ս Комментарий к УК РФ. Особенная часть. Под ред. Скуратова Ю.И. и Лебедева В.М. -М., 2000, С. 494.

³ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Особенная часть. Отв. ред. Радченко В.И.-М., Вердикт, 1996, С. 350.

⁴ Տե՛ս Документы Верховного суда Российской Федерации. Бюллетень Верховного суда Российской Федерации. Бюллетень N 6 2000 года. <http://www.supcourt.ru/second.php>

⁵ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ/ Под общ. ред. Мозякова В.В. -М.: Экзамен, 2002, С. 465.

⁶ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Особенная часть. Отв. ред. Бойко А.И. Ростов-на-Дону, 1996, С. 439.

⁷ Տե՛ս Квициния А.К. Взяточничество и борьба с ним, 1990, Харьков, С. 68.

⁸ Տե՛ս Горбунов А.В. Уголовно-правовая характеристика подкупа. Челябинск, 2000, С. 50. Тумаркина Л.П. Уголовная ответственность за коммерческий подкуп. М, 2007, С. 68.

⁹ Տե՛ս Комментарий к УК РФ. Особенная часть. Отв. ред. Радченко В.И. -М., Вердикт, 1996, С. 350.

¹⁰ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ. Под общ. ред. Мозякова В.В. -М.: Экзамен, 2002, С. 465.

РЕЗЮМЕ

Незаконность как обязательный признак объективной стороны коммерческого подкупа

В настоящей статье рассматривается признак незаконности, характеризующий объективную сторону коммерческого подкупа. В статье описываются и анализируются условия, исключающие правомерность дачи и получения благ, составляющих предмет коммерческого подкупа, на основании чего раскрывается сущность незаконного характера дачи и получения соответствующих выгод субъектами данного общественно опасного деяния. Статья содержит анализ сложившихся в теории уголовного права мнений и позиций, высказанных разными авторами относительно данного вопроса. В статье затрагиваются также вопросы совершенствования законодательного определения признаков объективной стороны коммерческого подкупа.

SUMMARY

Illegitimacy as obligatory sign of objective party of commercial bribery

This article deals with the sign of illegitimacy that characterized objective party of commercial bribery. The article describes and analyzes conditions that exclude legitimacy of giving and receiving goods that make up the subject of commercial bribery, on the basis of which is discovered the essence of illegal character of giving and receiving corresponding advantage by subjects of that anti-socially dangerous act. This article contains analysis of prevailing in theory of criminal law views and positions, expressed by different authors on this issue. The article also addressed the issues of improvement the legislative definition of the signs of objective party of commercial bribery.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՄՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Եղանակագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՆՈՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՏԻ ԱՐՏՈՆԱԳՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Հարցադրումը, թե ինչու պետք է նորույթը համարվի գյուտի արտոնագրագունակության պայմաններից մեկը, ունի որոշակի տնտեսական, իրավական և, ինչու չէ, նաև բարոյական հիմնավորումներ: Մասնավորապես, նորույթի արտոնագրագունակության պայման լինելու հիմնավորումն այն է, որ գյուտն արտոնագրային իրավունքով պահպանելով իրավատիրոջն ընձեռում է մենաշնորհ գյուտի օգտագործման կապակցությամբ: Այստեղ հարցը կայանում է նրանում, որ իրավատերերին տրված մենաշնորհը լինի համաշափ մյուս տնտեսական և իրավական սկզբունքներին:

Այս առումով տեսական գրականության մեջ դիպուկ նշվում է, որ այն մենաշնորհը, որը տրվում է արդեն իսկ գոյություն ունեցող գյուտերի նկատմամբ՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներից վերցնելով և տրամադրելով մեկ հոգու, երբեք չի կարող համարվել օրինաշափ, գունեայն տեսանկյունից, որ դրանով անհիմն կերպով սահմանափկում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների արդեն իսկ ունեցած և իրավող իրավունքները: Մյուս կողմից այն մենաշնորհները, որոնք տրվում են քաղաքացիական շրջանառության մասնակիցներին անհայտ ու նոր գյուտերի օգտագործման կապակցությամբ, տրամարսնական և հիմնավորված են այն պատճառաբանությամբ, որ դրանով խթան է ստեղծվում նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելու համար: Վերը նշվածը շատ հաճախ ներկայացվում է որպես դրական և բացասական մենաշնորհներ անվանմամբ: Այսինքն՝ նորույթով պայմանագրված մենաշնորհները համարվում են դրական, իսկ մնացածը՝ բացասական:¹:

Գյուտի նորույթի էությանը անդրադարձել են ինչպես միջազգային պայմանագրերը, այնպես էլ ներական օրենսդրությունները: Մասնավորապես, «Արտոնագրային համագործակցության մասին» պայմանագրի² 33-րդ հոդվածի համաձայն գյուտը համարվում է նոր, եթե չի կանխատեսվում տեխնիկայի՝ նախկինում գյուրթյուն ունեցող նակարդակով: Նման տրամարանությամբ է սահմանում գյուտի նորույթը նաև «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին»

ՀՀ օրենքի³ 11-րդ հոդվածը, ըստ որի՝ գյուտը նոր է, եթե այն տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ: Որպես նշվածի շարունակություն՝ նույն հոդվածը բացահայտում է, թե որն է տեխնիկայի մակարդակը՝ նշելով, որ տեխնիկայի մակարդակը ներառում է մինչև տվյալ գյուտի առաջնության բվական աշխարհում բանավոր կամ գրավոր բացահայտման կամ ցանկացած այլ միջոցով հանրամատչելի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների (առանձին մասերի) վերաբերյալ ցանկացած տեղեկություն: Հանրամատչելի են համարվում տեղեկատվության աղբյուրների մեջ բերված տեղեկությունները, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն կամ դրա մասին ծանուցվել օրինական ճանապարհով. ընդ որում, բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները ներառվում են տեխնիկայի մակարդակում, եթե այդպիսի օգտագործումն իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադանալ այն հանգամանքին, որ օրենսդրը հանրամատչելի տեղեկատվությունը բաժանել է երկու տեսակի՝

ա/ տեղեկությունները, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն,

բ/ տեղեկությունները, որոնց մասին ցանկացած անձ կարող է ծանուցվել օրինական ճանապարհով:

Հստ էության, վերը նշված երկու հասկացությունների հիմքում էլ դրված է այն սկզբունքը, որ անձը համապատասխան տեղեկատվությանը ծանոքանալու իրավունք և համապատասխան իրավունք իրացնելու հնարավորություն պետք է ունենա: Այս հանգամանքը կարևորվում է նրանով, որ որևէ իրավական ակտով այդպես էլ վերջնականացնելով չի բացահայտվում տեղեկատվության աղբյուր հասկացությունը: Այլ կերպ՝ տեղեկատվության աղբյուրը արտոնագրային իրավունքի շրջանակներում բացահայտելիս պետք է նախ պարզաբանվեն հետևյալ հարցադրումները.

ա/ արդյո՞ք անձն ունեցել է իրավունք ան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

միջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը,

թ/արդյո՞ք անձն ունեցել է իրական հնարավորություն անմիջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը⁴:

Այսպիսով, վերը նշվածի արդյունքում ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը տեխնիկայի մակարդակը բացահայտում է տեղական և համաշխարհային տեխնիկայի մակարդակների վերաբերյալ առկա տեսական մոտեցումների միասնությամբ։ Այլ կերպ՝ տեխնիկայի մակարդակը բաց օգտագործման դեպքում հանրամատչելի է համարվում տեղական մակարդակով, իսկ մնացած մասով՝ համաշխարհային մակարդակով։ Նմանատիպ մոտեցումը պայմանավորված է նրանով, որ, եթե բաց օգտագործումը հանրամատչելի համարվեր համաշխարհային մակարդակով, ապա այդ իրավանորմը իրացվելիության առումով խնդիրներ կունենար համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության պատճառով։

Այսպիսով, նորույրի մասով իրավահարաբերությունների նշված կանոնակարգումը ենթադրում է եթեր սկզբունքների առակայություն։

1. *հանրամատչելի աղբյուրներում պետք է առկա չլինի նմանատիպ գյուտի վերաբերյալ տեղեկություն, ընդ որում՝ ցանկացած անձան ստեղծագործական բնույթ ունեցող տարրերություն հայտարկող և հայտնաբերված տեխնիկական լուծումների մեջ պետք է մեկնարանվի հօգուտ հայտարկող գյուտի նորույրի,*

2. *տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումը պետք է փնտրվի աշխարհում հայտնի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների շրջանակներում, ընդ որում՝ նշված շրջանակների մեջ որպես բացառություն չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները,*

3. *նորույրի բացահայտման համար կարող են հաշվի առնել միայն այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել մինչև գյուտի առաջնության թվականը⁸։*

Որպես վերը նշված սկզբունքներից բացառություն՝ «Գյուտերի, օգտակար մողելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է, որ գյուտի էության բացահայտումը հաշվի չի առնվտում, եթե դա տեղի է ունեցել գյուտի հայտը ներկայացնելուն նախոր-

դող, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող տասներկու ամսվա ընթացքում՝ հեղինակի (հայտատուի) կամ գյուտի էության մասին նրանից ուղղակիորեն կամ անուղղակի տեղեկություն ստացած անձի կողմից (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն)։ Նշված իրավանորմի առկայությունը պայմանավորված է նրանով, որ այս դրույթով ստեղծվում են համապատասխան իրավական մեխանիզմներ գյուտի ապագա իրավատիրոջ համար գյուտի արդյունավետության, առևտրային նշանակության և այլ հատկությունների բացահայտման համար, քանի որ, ըստ էության, գյուտի արտոնագրման նպատակը պետք է կայանա այդ բացահայտումներից կամ այլ կերպ գյուտի տնտեսական նշանակությունից առավել օգտվելու հնարավորությունից⁹։

Այսպիսով, նշվածի համատեքստում գյուտի նորության բացահայտումն իրենից ներկայացնում է որոշակի քայլերի ամբողջություն։ Մասնավորապես, գյուտի նորության բացահայտման համար պարզաբանվում են նշված հարցադրումները։

ա/ *ո՞րն է հանդիսանում տեխնիկայի մակարդակը,*

թ/ *ո՞րոնք են համարվում պահպանության ենթակա գյուտի բնորոշող գծերը,*

զ/ *ինչպիսի՞ արդյունք է տվել առաջնության թվականի դրույթամբ պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերի համեմատությունը այլ գյուտերի հետ։*

Տեխնիկայի մակարդակը որոշելու համար իրականացվում է նախ և առաջ տեխնիկայի բնագավառի բացահայտումը։ Նախ որոշվում է, թե գյուտը տեխնիկայի որ բնագավառին է վերաբերում, այնուհետև տվյալ բնագավառում փնտրվում են հայտարկվող գյուտին ամենամոտ գյուտերը։ Կամ, այլ կերպ, բացահայտվում է՝ հայտում նշված տեխնիկական խնդիրին որևէ լուծում աղբյունաբերության մեջ տրվել է, իսկ եթե տրվել է, ապա ինչպես։ Նշվածի արդյունքում էլ բացահայտվում է տեխնիկայի մակարդակը։ Ընդ որում՝ տեխնիկայի մակարդակը բացահայտելիս հաշվի են առնվում այն բոլոր տեղեկությունները, որոնք տեսականորեն կարող են հասանելի լինել հանրությանը անկախ նրանից՝ այդ տեղեկատվությանը որևէ անձ անձամբ ծանոթացե՞լ է, թե ոչ։ Տեսության մեջ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե տեխնիկայի մակարդակը բացահայտելիս պետք է հաշվի առնել գաղտնիքը հանդիսացող և հանրությանը հայտնի չդարձված տեղեկությունները¹²։ Մեր կարծիքով, նմանատիպ իրավիճակներում

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

պետք է վերջիններս և հաշվի առնվեն տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, քանի որ այստեղ գործում է զյուտի օբյեկտիվութեն նորույթ լինելու սկզբունքը։ Ավելին, եթե դեռևս չիրապարակված հայտերը և հաշվի են առնվում տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, ապա նմանատիպ մուտքում պետք է ցուցաբերվի նաև մնացած գաղտնիք հանդիսացող և տեխնիկայի մակարդակը կանխորշող տեղեկատվության նկատմամբ։

Այնուհետև պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերը բացահայտելու համար համապատասխան իրավասու մարմնը բացահայտում է, թե որ հատկանիշը կամ դրանց խումբն է բավարար գյուտի շնորհիվ ստացվող տեխնիկական արդյունքին համեմու համար։ Հենց այդ հատկանիշներն ել հանդիսանում են հայտարկվող գյուտի բնորոշող գծերը։ Ընդ որում՝ այս առումով Եվրոպական փորձը հուշում է, որ համապատասխան հատկանիշները պետք է բացահայտվեն տվյալ բնագավառի մասնագետի տեսանկյունից¹³։ Այնպիսի մասնագետի տեսանկյունից, որն ի վիճակի է բացահայտել հայտի համապատասխան փաստաթղթերը և վեր հանել խնդրի լուծումն ապահովող գյուտի հատկանիշները։

Գյուտի նորույթի բացահայտման երրորդ և վերջին փուլում համապատասխան իրավասու մարմնը պարզում է՝ արդյոք վերը նշված հայ-

տարկվող գյուտի հատկանիշները որևէ բանով տարբերվում են տեխնիկայի մակարդակում առկա նմանակ գյուտերից կամ գոյություն ունեն արդյոք այդ հատկանիշներին նման հատկանիշներ տեխնիկայի մակարդակում։ Այս տրամաբանական գործնթացի արդյունքում էլ հենց բացահայտվում է գյուտի նորույթը։ Ընդ որում՝ պետք է նշել, որ գյուտի նորույթի բացահայտման ժամանակ բավարար է նույնիսկ գյուտի բնորոշ գծերի յուրաքանչյուր չնշին տարբերությունը նմանակ գյուտերի հատկանիշներից։

Այսպիսով, նշվածի արդյունքում կարող ենք հանգել այն եզրահանգմանը, որ գյուտի հատկանիշներից նորույթը օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող, նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելուն խթանող այնպիսի երևույթ է, որը պայմանավորված է գյուտով ապահովող տեխնիկական արդյունքի հատկանիշների առանձնահատկություններից։ Հետևաբար գյուտի նորույթը բացահայտելիս յուրաքանչյուր դեպքում որպես նշանակետ պետք է ընդունվեն, թե հայտարկող գյուտով ինչպիսի խթան է ստեղծվում տեխնոլոգիական նորարարությունների համար և ըննարկվող նորույթը գործունեության հատկանիշները, որոնք պահպանում են՝ ինդրի լուծումն ինչպիսի առանձնահատկություններ ունին։

¹ Sté Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain. էջ 86։

² Sté ՀՀԳ Տ 1994/6։

³ Sté ՀՀՊՏ 2008.07.09/42(632) Հոդվ. 715։

⁴ Sté Հարցին նման լուծում տալը բխում է նաև միջազգային պրակտիկայից։ Sté Austria. Supreme Patent and Trademark Chamber of 28 April 2010 (OBP 2/09) (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ), Belgium. Brussels Court of First Instance of 19 December 2008 – Lefebvre v Bogaert, France. Court of Cassation of 7 October 2008 (07-17518) – SMCA v SAT(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ), Netherlands. The Hague Court of Appeal (Gerechtshof te 's Gravenhage) of 13 July 2010 – Clyde Bergemann v Magaldi(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ)։

⁵ Sté Հանով Ա. Ա. Մատվեև Գ. Ա. Տենդենции կ ստուգական պատենտությունների պահպանության վերաբերյալ։ Խաղաղության պահպանության մասին օրենք 1974, Ս. 97։

⁶ Sté Italy. Florence District Court of 29 December 2005 (17178/2005) – Barbieri v Bacci (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ)։

⁷ Sté France. Paris District Court of 13 October 2006 (04/07666) – Asahi v General Electric (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ)։

⁸ Sté Հերց Պ. Բ., Սերգեև Ա. Պ. Ինտելլեկտուալ նորույթ։ – Մոսկվա, 2000, Ս. 111։

⁹ Sté Ա. Պ. Սերգեև. Պահպանության վերաբերյալ։ Խաղաղության պահպանության մասին օրենք 2000, Ս. 421-422։

¹⁰ Sté Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, էջ 87։

¹¹ Sté Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 877/90 (http://www.epo.org/law-practice/legal-texts/html/caselaw/2010/e/clr_i_c_1_8_8_c.htm, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ), ինչպես նաև T381/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t090834eu1.html>, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ) ակտերը։

¹² Sté Catherine Seville. EU Intellectual Property Law and Policy, 2009, էջ 108։

¹³ Sté Graham Dutfield, Uma Suthersanen. Global Intellectual property law, Great Britain, 2008, էջ 120։

¹⁴ Sté Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T7/86 (<http://www.epo.org/law-prac->

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

tic/case-law-appeals/recent/t860007ex1.html, 2012 թ. դեկտեմբերի 12-ի դրույթամբ), T 77/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t870077ex1.html>, 2012 դեկտեմբերի 12-ի դրույթամբ) և այլ ակտեր:

Օգտագործված գրականության ցանկ

Ա) Տեսական գրականություն.

1. Жаанов А. А., Матвеев Г. А. Тенденции к унификации патентного права в зарубежных странах. Издательство стандартов. Москва, 1974, 200 стр..
2. Мегре П. Б., Сергеев А. П. Интеллектуальная собственность. – Москва, 2000, 400 стр..
3. Сергеев А. П. Право интеллектуальной собственности в Российской Федерации. Учебник. Издание второе, переработанное и дополненное. Москва, 2000, 752 стр..
4. Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, 482 էջ:
5. Catherine Seville. EU Intellectual Property Law and Policy, Great Britain, 2009, 432 էջ:
6. Graham Duffield, Uma Suthersanen. Global Intellectual property law, Great Britain, 2008, 370 էջ:

Բ) Իրավական ակտեր.

- 1.ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 1998 թ. մայիսի 5-ին:
2. «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին»ՀՀ օրենք, ընդունվել է 2008 թ. հունիսի 10-ին:
- 3.ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2009 թ. մարտի 25-ի «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին»թիվ 206-Ն հրաման:
4. 1970 թ. հունիսի 19-ին Վաշինգտոնում ստորագրված «Արտոնագրային կոռպորացիայի մասին» պայմանագիր:
5. 1994 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական արտոնագրային կոնվենցիա»:

Գ) Օտարեկրյա իրավակիրառ պրակտիկա.

1. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T7/86 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t860007ex1.html>, 2012 թ. դեկտեմբերի 12-ի դրույթամբ):
2. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 77/87 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t870077ex1.html>, 2012 դեկտեմբերի 12-ի դրույթամբ):
3. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 381/87 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t090834eu1.html>, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ):
4. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 877/90 ակտ (http://www.epo.org/law-practice/legal-texts/html/caselaw/2010/e/clr_i_c_1_8_8_e.htm, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ):
5. Austria. Supreme Patent and Trademark Chamber of 28 April 2010 (OBр 2/09) (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
6. Belgium. Brussels Court of First Instance of 19 December 2008 – Lefebvre v Bogaert, France. Court of Cassation of 7 October 2008 (07-17518) – SMCA v SAT (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
7. France. Court of Cassation of 10 November 2009 (08-18218) – Syrdrec v Groupement Carte Bleue (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
8. France. Paris District Court of 13 October 2006 (04/07666) – Asahi v General Electric (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
9. Italy. Florence District Court of 29 December 2005 (17178/2005) – Barbieri v Bacci (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
10. Netherlands. The Hague Court of Appeal (Gerechtshof te 's Gravenhage) of 13 July 2010 – Clyde Bergemann v Magaldi (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):

РЕЗЮМЕ

Новизна как условие патентоспособности изобретения

Новизна изобретения является стимулом для совершения технологических открытий. Новизна обусловлена особенностями технических характеристик изобретения. При раскрытии новизны устанавливается какой стимул создается для технологических инноваций. Исходя из вышесказанного, монополии использования изобретением бывают отрицательными и положительными.

SUMMARY

Novelty as a condition of patentability

The novelty of the invention provides stimulus for the accomplishment of technological discoveries. The novelty depends on the features of the technical characteristics of the invention. In disclosing the novelty it is determined what stimulus is set for technological innovations. Based on the abovementioned, the monopoly of using the invention, can be negative or positive.

ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Յուրաքանչյուր երկրի արդարադատության մակարդակը, անկախության աստիճանը մեծապես կախված է իր առջև դրված խնդիրներն իրազործելու նպատակով առաջնորդվող համապարտադիր նորմերից, ելակետային դրույթներից, սկրունքներից:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարածաշատման և հավասարակշռման հիման վրա: Դատական իշխանությունը, համաձայն Սահմանադրության և օրենքների, իրականացնում է արդարադատություն, որի՝ որպես միասնական պետական իշխանության մեկ քայլ, հիմնական խնդիրը քաղաքացիների ու նրանց կողմանական իշխանությունների, ազատությունների և օրինական շահերի ապահովումն է, դրանք հետարարվող խախտումներից պաշտպանելը, ծագող վեճերի և այլ իրավական հարցերի լուծումը, իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ հսկողությունը, իրավախախտումների դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելը, այլ կերպ ասած՝ արդարադատության իրականացումը: Հետևաբար, արդարադատությունը պետք է հանրային իշխանության գործունեության տեսակ է, որի էությունը իրավունքի մասին վեճի լուծման մեջ է: Պետական գործունեության այդ հատուկ տեսակում դատարաններն իրացնում են դատական իշխանությունը քաղաքացիական, քրեական, վարչական գործերը, ինչպես նաև սահմանադրաբարավական վեճերը սահմանադրության և օրենքներով սահմանված կարգով քննելու և լուծելու միջոցով:

Քաղաքացիական դատավարությունն էլ, հետամուտ լինելով այս խնդիրների իրազործմանը, առաջնորդվելով Սահմանադրությանը ամրագրված համապարտադիր նորմերով և սկզբունքներով՝ փորձում է կենսագործել իր առջև դրված խնդիրները՝ նպատակ ունենալով հնարավորինս ամրապն-

դելու օրինականությունը, պաշտպանելու մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրը յուրաքանչյուր գործերով արդարության պարզումն ու ապահովումն է: Հենց այս խնդրի իրականացմանն էլ անմիջականորեն ուղղված է ապացուցողական գործնթացը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցի տեսակներ են համարվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առավելացնելու հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հստատվում են՝

1. գրավոր և իրեղեն ապացույցներով
2. փորձագետի եզրակացություններով
3. վկաների ցուցունքներով
4. գործին մասնակցող անձանց բացատրություններով

Այստեղից եզրակացություն, որ, հանդիսանալով ապացույցի տարատեսակ, փորձագետը և նրա եզրակացությունը անկյունաքարային նշանակություն են ձեռք բերում քաղաքացիական դատավարությունում՝ գործի համակողմանի վերլուծության, արդարության բացահայտման և պարզաբանման համար:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող և սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանի կողմից նշանակվող անձը: Անձը, ում հանձնարարված է փորձաքննություն կատարել, պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և օրյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջարկած հարցերի հիման վրա: Փորձագետն իրավունք ունի, եթե դա անհրաժեշտ է եզրակացություն տա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լու համար, ծանոթամալ գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, հարցեր տալ, խնդրել դատարանին իրեն տրամադրել լրացուցիչ նյութեր: Իրեն տրամադրված նյութերի անբավարարության դեպքում փորձագետը կարող է հրաժարվել եզրակացություն տալուց:

Եթե կողմերից մեկը խուսափում է փորձաքննության իրականացմանը մասնակցելու կամ որևէ կերպ խոչընդոտում է փորձագիտական գործունեության իրականացման համար (չի ներկայանում փորձաքննության, փորձագետներին չի տրամադրում անհրաժեշտ տեղեկություն կամ փաստաթղթեր) և գործի հանգամանքներից ելնելով՝ առանց նրա մասնակցության հնարավոր չէ փորձաքննություն իրականացնել, ապա դատարանը, կախված նրանից, թե որ կողմն է խուսափում փորձաքննությունից, ինչպես նաև ինչպիսի նշանակություն ունի այդ փորձաքննությունը նրա համար, իրավունք ունի ճանաչել փաստը, ինչի համար փորձաքննություն է նշանակվել:

Այսպիսով կարելի է ասել, որ քիչ թե շատ փորձ արվել է մեր օրենսդրի կողմից սահմանելու փորձագետի հասկացությունն ու նրա տեղը քաղաքացիական դատավարությունում, սակայն պետք է նշել, որ առկա են լուրջ բացքողումներ թե՛ ձևակերպումների և թե՛ փորձագետի դերի պարզաբանման ու բացահայտման գործում: Չի բացահայտվում «հասուլ գիտելիքներ» հասկացությունը, նրա սահմանները, քաղաքացիական դատավարությունում չի տարբերակվում փորձագետը մասնագետից և այլն:

Ինչպես քրեական դատավարությունում, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում դատական գործի քննության բարձր որակի ապահովման պայմաններից է հանդիսանում ապացույցների հավաքման ու գնահատման ընթացքում հաստուկ գիտելիքների լայն տարածումը: Քաղաքացիների միջև առաջացած բազմաթիվ վեճեր հաջողվում է բացահայտել քննության ընթացքում հաստուկ գիտելիքների արդյունավետ կիրառման միջոցներով: Քաղաքացիական գործերով դատական քննության գործում գիտատեխնիկական միջոցների և մեթոդների կիրառման երաշխիք են հանդիսանում փորձագետների հաստուկ գիտելիքները, որոնց ճիշտ և արդյունավետ կիրառումը հնարավորություն է տալիս ձեռք բերել ապացույցներ, բացահայտել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքներ: Իսկ «հասուլ գիտելիք» հասկացության ճիշտ ընկալումը կարևոր է ինչպես փորձագիտական խնդիրների բարեհաջող լուծման, այնպես էլ քաղաքացիական դատավարու-

թյունում հատուկ գիտելիքների տարրեր դրսերումներով կիրառման համար: Քաղաքացիական դատավարությունում փորձագետի հաստուկ գիտելիքների կիրառման նշանակության մեծացումը կնպաստի քաղաքացիական դատավարության օրենսդրում մի շարք դատավարական գործողությունների իրականացման ընթացքում փորձագետի դերի բարձացմանը: Այնայսի որ, որ փորձագետի կողմից կիրառվող հաստուկ գիտելիքների հնատիտուար մեծ նշանակություն ունի դատական քննության փուլում իմանավորված որոշումներ կայացնելու գործում:

Արտասահմանյան մի շարք երկրներում երկար տարիներ է, ինչ իր ուրույն տեղն ունի համալիր փորձաքննությունը: Համալիր փորձաքննություն անցկացնելու նպատակահարմարությունը որոշելու համար կարևոր է մի շարք էական հարցերի իրազեկվածությունը, որի համար պահանջվում է նաև մի շարք ոլորտների մասնագետների ջանքերի միավորում: Բացի դրանից՝ անհրաժեշտ է բոլորի գիտելիքների սինթեզը, այդ իսկ պատճառով համալիր փորձաքննությունների եզրակացությունը իրենից ներկայացնում է տարբեր մասնագիտությունների տեր անձանց միասնական կարծիք, եզրակացություն:

Վերը նշված փորձաքննությունը մեր օրենսդրության մեջ բացահայտվում է, սակայն մեր խորին համոզմամբ պետք է քայլեր ձեռնարկել այս տարատեսակը մեր օրենսդրության և փորձագիտական պրակտիկայում ներառելու ու համապատաս-խանեցնելու փորձաձագիտական պրակտիկայի առանձնահատկություններին. դրանով է բացատրվում մեր կողմից վերը թվարկվածներին անդրադառնալը:

Ելնելով այն հանգամանքից, որ փորձագետի եզրակացությունը միշտ հիմքած է արդեն հավաքված ապացուցողական նյութերի վրա, որոշ իրավաբան գիտնականներ կարծում են, որ փորձագետի եզրակացությունը հանդիսանում է ածանցյալ ապացույց: Մինչդեռ հազիվ թե կարելի է համաձայնել այս տեսակետի հետ, քանի որ ածանցյալ ապացույցները միշտ վերարտադրում են բնօրինակ ապացույցի բովանդակությունը, հետևաբար փորձագետի եզրակացությանը պետք է վերաբերվել որպես առաջնային ապացույց: Բացի դրանից՝ փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության կարևորությունը չի կայանում արդեն հայտնի տվյալների արտապումը կամ վերարտադրումը, այլ նրանց մասին եզրակացությունը, որը կատարվել է փորձագետի կողմից հաստուկ գիտելիքների շնորհիվ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Քանի որ փորձաքննությունը հիմնված է հատուկ գիտելիքների վրա, որին տիրապետում են փորձագետը կամ փորձագետները, հետաքրքրությունը կայանում է հետևյալ հարցի պարզաբանման մեջ՝ ինչ պետք է հասկանալ հատուկ գիտելիք ասելով: Քաղաքացիական դատավարությունը չի բացահայտում հատուկ գիտելիք հասկացությունը, այլ բավարարվում է նշելով այն ոլորտները, որտեղ այս գիտելիքները կարող են օգտագործվել՝ գիտություն, գրականություն, արվեստ, տեխնիկա և այլն:

Սի շարք փորձաքննությունների տարատեսակներ մեր օրենսդրության մեջ բացակայում են, սակայն, մեր խորին համոզմամբ, պետք է քայլը ձեռնարկել համապատասխան տարատեսակները մեր օրենսդրության և փորձագիտական պրակտիկայում ներառելու ու համապատասխանեցնելու փորձածագիտական սրակատիկայի առանձնահատկություններին: Դրանով է բացատրվում մեր կողմից վերը թվարկվածներին անդրադառնալը:

Քաղաքացիական դատավարությունում փորձաքննություն իրականացվում է լայն շրջանակի հարցեր պարզելու համար՝ անձի առողջության վիճակի մասին, նրա աշխատունակության վիճակի մասին, հոգեբանական վիճակի, ապրանքների և արտադրանքի որակի գնահատման նպատակով, կատարված աշխատանքի ծավակի մասին: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում վերանայել և կատարելագործել փորձագետի կողմից կիրառվող հատուկ գիտելիքների տեսական հիմքերը և փորձել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնել: Առաջարկված նպատակներից ենելով՝ մասնավորապես կարիք է զգացվում լուծելու հետևյալ խնդիրները՝

1. բացահայտել և վերլուծել «հատուկ գիտելիք» էության և նշանակության վերաբերյալ տարբեր մոտեցումներ,

2. բնորոշել «հատուկ գիտելիք» հասկացության սահմանումը,

3. ուսումնասիրել հատուկ գիտելիքների կիրառման ոչ ավանդական ձևերը և դրա արդյունքները քաղաքացիական դատավարություն ներմուծելու հնարավորությունները,

4. վերլուծել փորձագետի ու մասնագետի գիտելիքների, դրանց դատավարական վիճակի տարբերություններն ու առանձնահատկությունները,

5. որոշել փորձագետի գործունեության արդյունքների՝ առանձին դատավարական փաստարդերով ձևակերպելու արդյունավետությունն ու նշանակությունը,

6. ուսումնասիրել քաղաքացիական գործերի քննության ընթացքում փորձագետների հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քաղաքացիական կրիմինալիստիկական հիմնախնդիրները,

7. ներկայացնել փորձագետի գործունեության հետ կապված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ՀՀ օրենսդրության կատարելագործման ուղղությամբ,

8. վերլուծել դատական փորձաքննության օրենսդրության զարգացման միտումները՝ հաշվի առնելով դատավարության զարգացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում,

9. ուսումնասիրել փորձագետի եզրակացության իրավական բնույթը՝ որպես դատական ապացույց, ձևակերպել փորձագետի եզրակացության բույատրելիության և վերաբերելիության նոր չափանիշներ,

10. վերլուծել հատուկ գիտելիքների օգտագործման տարբեր ձևերը, վեր հանել նրանց բնորոշ գծերը, առաջարկել յուրաքանչյուրին բնորոշ օրենսդրական կարգավորում:

Քանի որ Հայաստանում քաղաքացիական գործերով փորձագետի կողմից կիրառվող հատուկ գիտելիքների հիմնախնդիրներին վերաբերող որևէ գիտական բնոգրկություն հետազոտություն մինչև օրս կատարված չէ, և ներկայումս այս ոլորտը մեր հանրապետությունում գտնվում է զարգացման ճանապարհին, ուստի, թեմային վերաբերող խնդիրները կարող են լուծվել միայն խորը և համակողմանի գիտական վերլուծությունների վրա հիմնված օրենսդրական բարեփոխումների արդյունքում, և, հետևաբար, քաղաքացիական դատավարության ոլորտում փորձագետի հատուկ գիտելիքների կիրառման հետ կապված հիմնախնդիրների վերլուծությունը խիստ արդիական է:

Չհակադրվելով ինքներս մեզ՝ արդարացիութեն պետք է նշել, որ վերջին տարիներին բավականին ընդլայնվել է փորձագիտական ոլորտի գիտատեխնիկական բազան, դատական փորձաքննությունների հնարավորությունները. հաջողությամբ կիրառվում են հետազոտման ժամանակակից մեթոդներ և տեխնիկա՝ անտեսանելի ժառագայթներ, ուլտրաձայն, ռադիոակտիվ հզոտողներ, սակայն դեռ անելու շատ բան կա: Կարծում ենք, որ վերը նշված ոլորտը պետք է համահունչ զարգանա և համագործակցի այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են դատահոգեբանական փորձաքննությունը, ձեռագրաբանական փորձաքննությունը, քրեական գործերով փորձաքննությունը և այլն:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Որոշ տեսաբանների կարծիքով տվյալ երկրում դատական փորձաքննության ընդհանուր վիճակից կարելի է հետևող անել ամբողջ քաղաքացիական դատավարության օբյեկտիվության մասին, քանի որ մեծ մասամբ փորձագետի եզրակացությունը քաղաքացիական գործերով վճռորոշ է լինում գործի ելքի համար:

Այլ խոսքով ասած՝ շեշտը դրվում է դատական փորձաքննության վրա, ինչպես նաև նրա հետկապված օրենսդրական բարեփոխումների վրա:

Մինչ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը երկար տարիներ քաղաքացիական դատավարությունում փորձագետի եզրակացության վերաբերյալ հիմնահարցերը կարգավորվում էին 1967թ-ին հրատարակված S.U. Լիլուաշվիլու «Փորձաքննությունը Սովետական քաղաքացիական դատավարությունում» գրքով։ Պետք է նշել, որ այս ուղղությամբ իր անգնահատելի ներդրումն ունի մեր հայրենակից Ա.Գ. Դավթյանը, ում կողմից հեղինակած «Փորձաքննությունը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ գիրքը (1995թ. Մոսկվա) իր ձեռագիրն է բողել արդի իրականությունում։

Ի տարբերություն այլ երկրների և մասնավորապես ՌԴ-ի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում գիտական և այլ մասնագիտական գիտելիքներից բացի այլ հասուն պահանջներ չի դրվում փորձագետի վրա. դրա վառ օրինակն է, որ դատավարությունում հաշվի չեն առնվում հասուն պահանջները, օրինակ այն, որ նա ուղղակի կամ անուղղակի կապ չունենա տվյալ գործի հետ։

Բացի դրանից՝ փորձագետը չի կարող մասնակցել գործի քննությանը և փորձագիտական գործունեության մասնակցությունը ունենալ այն դեպքերում, եթե նա՝

1. գտնվել, կամ գտնվում է ծառայողական կամ այլ կապվածության մեջ կողմերից մեկի հետ,
2. նրանցից մեկի նեկայացուցիչն է,
3. նրանցից մեկի կամ նրա ներկայացուցչի ազգական է։

Որպես օրինակ նշենք, որ Ֆրանսիայում որպես ապացույց իրավաբանական փաստերի մասին օգտագործվում է վկայի ցուցմունքը, գրավոր ապացույցները, խոստովանությունը, կողմերի բացատրությունները, զննությունը տեղում, փորձաքննությունը, իրեղեն ապացույցները և երդումը։

Դատական փորձաքննությունը Ֆրանսիայում համարվում է ապացույցի ձեռքբերման առանձին տեսակ։ Փորձագետի կարծիքը պարտադիր չէ դատարանի համար, բայց եթե կողմերը կնքել են

այնպիսի համաձայնագիր, ըստ որի պարտավորվում են անվերապահորեն ընդունել փորձագետի եզրակացությունը, ապա այդ դեպքում դատարանը չի քննում փորձագետի եզրակացությունը, ըստ էության, այլ սահմանափակվում է միայն նրա եզրակացության հաստատումով։ Եսկ եթե դատարանը գալիս է այն կարծիքին, որ փորձաքննությունը հարցերի վերաբերյալ պարզություն չի մտցրել, որը նրա առաջ էր կանգնեցվել, ապա նա կարող է նշանակել նոր փորձաքննություն՝ նշանակելով փորձագետներին իր հայեցողությամբ։

Պետք է նշել, որ մեր կարծիքով հայրենական քաղաքացիական դատավարությունում ապացուցղական գործունեությունը ավելի օբյեկտիվ է, քանի որ բացակայում են այնպիսի ապացուցման տարատեսակներ, ինչպիսիք են օրինակ մեղքի ճանաչումը։ Այդ իսկ պատճառով կարելի է ասել՝ ապացուցման տեսակները, որոնք կիրառվում են մեր երկրում, հանդիսանում են ավելի գիտականորեն պատճառաբանված, քան Անգլիայում և Ֆրանսիայում։ Որպես օրինակ նշենք, որ Ֆրանսիայում մեղքի ճանաչումը ունի ապացուցղական ուժ, և եթե կողմերից մեկը ընդունում է մեղքը, ապա դատարանը պարտավորվում է դեկանական գիտելիքով։

Մեր կարծիքով, «Հատուկ գիտելիք» չի կարող համարվել քաղաքացիական և քաղաքացիադատավարական համբահայտ կամ հանրամատչելի գիտելիքը, այն մարդու մասնագիտական պատրաստվածության և փորձի արդյունք է, կիրառվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ապացուցղական կամ կողմնորոշչի տեղեկություն ստանալու նպատակով։ Այլ խոսքով ասած՝ հասուն գիտելիքները քաղաքացիական իրավունքի կամ քաղաքացիադատավարական իրավունքի հետ չկապված գիտելիքներ են՝ հանրակրթական ծրագրերի շրջանակներից դուրս բռվանդակությամբ, որոնք օգտագործվում են քաղաքացիական դատավարության ընթացքում գործի համար ապացուցղական կամ կողմնորոշչի տեղեկություններ ստանալու նպատակով։

Հանրահայտ է, որ քաղաքացիական գործերով ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձնին։ Քաղաքացիական դատավարության համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան։ Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ալենը է ապացու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Սակայն այսօր իրազեկ լինել իրավունքի բոլոր ճյուղերի և ենթաճյուղերի կարգավորումներին, յուրացնել այդ գիտելիքները որակյալ ու պատասխանատու որոշումներ ընդունելու պահանջվող ծավալով գործնականում անհնար է դարձել՝ կապված գործող իրավակարգավորումների առատությամբ: Փորձագետը քաղաքացիական դատավարությանը մասնակցող այն կարևոր սուբյեկտներից է, ում դերն ու գործունեությունը հատկապես դատավարական գործողությունների ժամանակ առանցքային է և կողմնորոշիչ, հաճախ նրանից է կախված քաղաքացիական գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցների հայտնաբերման գործընթացը, ուստի պետք է հստակեցնել նրա գիտելիքներին ներկայացվող պահանջները:

ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել մշտակես գործող անկախ որակավորման հանձնաժողով, որն էլ կորակավորի ՀՀ-ում գործող բոլոր փորձագիտական հիմնարկների փորձագետներին: Այդ հանձնաժողովի կազմի մեջ պետք է ներգրավվեն ներկային փորձագիտական հաստատությունների հետինականոր աշխատակիցներ, կրիմինալիստիկական տեխնիկայի, դատական բժշկության և այլ ոլորտի գիտնականներ:

Այլ խոսքով ասած՝ հատուկ գիտելիք ասելով պետք է հասկանալ այնպիսի պրոֆեսիոնալ գիտելիքների ամբողջությունը, հմտությունները և կարողությունները, որ ձեռք են բերվել հատուկ կրքության միջոցով կամ աշխատանքի փորձի արդյունքում, համապատասխանում է գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի ներկա գարզացման աստիճանին և հանդիսանում է քավարար փորձագիտական գործունեության անցկացման և կոմպետենտ եզրակացություն տալու դատարանի համար գործով անհրաժեշտ որևէ հանգամանքի վերաբերյալ: Անհրաժեշտ ենք համարում հիշատակել մի քանի հեղինակների կողմից բերված բնորոշումները՝ նվիրված փորձագետի գործունեությանը՝ «Փորձաքննությունը իրենից ներկայացնում է գիտական մեքոդ, որի օգնությամբ դատավորները, որոնք չեն տիրապետում հատուկ գիտելիքների, վերլուծում են գործի հանգամանքները և նրանց միջև եղած կապը»: Փորձաքննությունը, կարելի է ասել, իրենից ներկայացնում է իր ձևի մեջ յուրօրինակ մի կոնսուլտացիա որպես այդպիսին՝ փորձագետի եզրակացությունը ինքնին ապացույց չի համարվում, այլ

նրա եզրակացությունն է ապացույց համարվում:

Քաղաքացիական դատավարությունում առավել տարածված են ձեռագրաբանությունը, ինժեներատեխնիկական փորձաքննությունը, դատական հոգեբուժական փորձաքննությունը: Ձեռագրաբանական փորձաքննության օգնությամբ կարելի է պարզել գրավոր ապացույցներում ստորագրության կեղծ լինելը և այլն: Այլրանքային փորձաքննությունը նպատակատուղղված է պատրաստի ապրանքների ուսումնասիրմանը նրանց հատկությունների և որակի համապատասխանությանը պետական ստանդարտներին, պայմանագրային գնին և այլ պահանջներին: Բնակարանի առանձնացման գործերով կարող է նշանակվել շինարարա-տեխնիկական փորձաքննություն: Քաղաքացիական գործերով մեծ է նաև դատահոգերուժական փորձաքննության դերը, որը, հատկապես, օգտագործվում է քաղաքացու անմեղսունակությունը սլարգելու համար, ինչպես նաև նպատակ ունի գործի քննության ընթացքում պարզելու գործարքի առ ոչինչ լինել կամ չլինելու հանգամանքը, որը կատարվել է այն անձանց կողմից, որոնց նկատմամբ կասկած կա, որ նրանք կարող են չփառակցել իրենց արարքների բնույթը գործարքի կնքման պահին: Պատվի և արժանապատվության պաշտպանության գործերով շատ ակտուալ է դարձել հոգեբանական փորձաքննության անցկացումը:

Իսկ պրակտիկ ոլորտում կարելի է ասել, որ թեպետ ՀՀ-ում առկա են մի շարք փորձագիտական հաստատություններ, սակայն նրանց կողմից իրականացվող փորձաքննության շրջանակները շատ ավելի ենք են, քան միջազգային չափանիշներն են պահանջում: ՀՀ դատական արականիկայում հաճախ խնդիրներ են առաջանում մեկ այլ երկրի փորձագիտական կազմակերպության կողմից տրված եզրակացության օգտագործման հնարավորության կապակցությամբ, որ ներկայացրել են դատավարության կողմերը՝ գործի նյութերին կցելու և հետազոտելու համար: Խնդիրը կապված է ոչ միայն մեկ այլ երկրում տրված եզրակացության բույլատրելիության և վերաբերելի ինության, այլ նաև դրա գիտական հեղինակորվածության և արժանահավատության գնահատման հնարավորության հետ: Այդ կապակցությամբ հատկապես անհրաժեշտ է փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության չափանիշների և օրենսդրական համապատասխան դրույթների վերանայում՝ միջազգային համագործակցության հնարավորությունների և միջազգայնորեն ընդունելի չափանիշների հաշվառմամբ:

РЕЗЮМЕ

Мнение эксперта в гражданском процессе

Статья, в первую очередь, целенаправлена на получение выводов эксперта путем гражданских дел, на предъявление новых основ оценивания, на научное рассмотрение выводов эксперта. Также, рассмотрев передовой опыт стран, в статье раскрываются недостатки отрасли и внедрение в нее для развития и совершенствования научный и практический опыт передовых специалистов.

SUMMARY

Expert opinion in civil procedure

The main goal of this issue first and foremost is aimed at nominate of the new substantiations of receipt, use and evaluation of the expert conclusion in civil matters, at equipping the expert conclusion with scientific base, as well as studying the headmost experience of the European and other countries in order to raise the gaps and deficiencies of the field and the investment of scientific and practical experience of the advanced specialists of this field for the improvement and development of the field.

ГУРГЕН АФРИКЯН

Заместитель директора Юридического института
Министерства юстиции РА, кандидат юридических наук

**ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВАЯ МОДЕЛЬ
КОНСТИТУЦИОННОГО СУДА РА
(Сравнительный анализ)**

Основы формирования Конституционного Суда в Армении определяются в Конституции. Данное призвано обеспечить независимость этого органа от Национального Собрания, ибо последний не может в обычном законодательном порядке пересмотреть порядок образования Конституционного Суда: изменение может быть осуществлено только путем пересмотра соответствующих статей Конституции.

Однако, конституции не могут своим регулированием охватить весь комплекс отношений, связанных с организацией и деятельностью конституционных судов, со статусом судей и т.п. Поэтому требуется дополнительное законодательное регулирование. Как правило, в конституциях содержатся отыскочные нормы, обязывающие принять специальные, не только по содержанию, но и по юридической силе законы о судебном конституционном контроле (конституционные, органические, обычные). Обычно, законы о конституционных судах принимаются, вводятся в действие и изменяются в особом порядке. При этом конституция зачастую определяет и объем предмета регулирования специального закона.

Регулирование статуса Конституционного Суда конституционным законом (Киргизия, Россия, Таджикистан) либо органическим законом (Грузия, Молдова), либо другим специальным законом, предусматривающим особый порядок его принятия и изменения, является дополнительной гарантией независимости и стабильности конституционного правосудия.

Как показывает практика, организация и деятельность Конституционного Суда может регулироваться единым законом (в большинстве государств) или двумя и более законами. В последнем случае, чаще всего один закон посвящается общим вопросам организации и деятельности Конституционного Суда, статуса судей, т.е. материальному судебно-конституционному праву, а другой – конституционному

судопроизводству. Так, в Республике Молдова приняты два закона – закон “О Конституционном Суде” и “Кодекс конституционной юрисдикции”, в Грузии – закон “О Конституционном Суде Грузии” и закон “О конституционном судопроизводстве”, в Республике Киргизия – закон “О Конституционном Суде” и закон “О конституционном судопроизводстве”. Процедура осуществления конституционного правосудия регламентируется отдельным законом: в Латвии – Законом о процессе Конституционного Суда, в Эстонии – Законом о судопроизводстве в порядке конституционного надзора.

Содержание специальных законов о конституционных судах имеет много общего, что обусловлено их природой и назначением. Вместе с тем, имеются и различия, подчас существенные. В специальных законах конкретизируются и развиваются конституционные установления относительно тех или иных элементов организации и деятельности конституционных судов, предусматриваются новые правила, которыми определяется структура судов, гарантии статуса суда и судей, основания приостановления или прекращения их полномочий, в том числе, процедура привлечения судей к различным видам юридической ответственности. Значительный объем составляют нормы, определяющие содержание конституционного судопроизводства, процедурные правила, устанавливающие общие принципы производства при разрешении дел, стадии судопроизводства, особенности рассмотрения тех или иных категорий дел и т.д. Специальные законы о конституционных судах, в свою очередь, могут содержать отыскочные нормы.

Особый интерес представляет соотношение специального закона (законов) о судебном конституционном контроле и законодательства о судоустройстве и судопроизводствах (гражданском, административном, уголовном). Исходя из идеи единства судебной власти, ряд положений законов о судоустройстве в одинаковой мере распространяется

ԱՐԴԻՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

и на конституционные суды, особенно, в части статуса судей, гарантий их независимости, права обращений судебных инстанций в конституционный суд и других вопросов¹.

В соответствии с положением ч. 3 ст. 128 Конституции РФ полномочия, порядок образования и деятельности Конституционного Суда РФ устанавливаются федеральным конституционным законом. Федеральный конституционный Закон от 21 июля 1994 г. (с изменениями на 25 декабря 2012 г.) “О Конституционном Суде Российской Федерации” конкретизирует и развивает конституционные установления, касающиеся федерального Конституционного Суда. Указанный Закон является единым и всесообщим, охватывающим нормы судебно-конституционного и процессуального права. В законе содержатся также организационно-управленческие нормы.

Согласно ст. 94 Конституции РА и ст. 2 Закона “О Конституционном Суде РА”, полномочия и порядок формирования Конституционного Суда устанавливаются Конституцией, а порядок его деятельности устанавливается Конституцией и Законом о Конституционном Суде. Идея принятия отдельного Закона о конституционном судопроизводстве не получила бы поддержки в ходе разработки законопроекта, так как это неизбежно привело бы к известному дублированию содержания двух законов, тем более что их применение осуществляется лишь одним Конституционным Судом.

Члены конституционного контроля, в основном, назначаются (или избираются) разными ветвями власти. Действующими конституциями используются два способа формирования состава конституционного суда – *парламентский* и *смешанный*².

К чисто парламентскому способу относится, например, порядок формирования Федерального Конституционного Суда ФРГ.

В соответствии со ст. 94 ч. 1 Основного закона Германии Федеральный Конституционный Суд состоит из федеральных судей и других членов. Члены Федерального Конституционного Суда избираются в равном числе Бундестагом и Бундесратом. Они не могут принадлежать к составу ни Бундестага, ни Бундесрата, ни федерального Правительства, ни соответствующих органов земель³.

При смешанной процедуре парламент принимает лишь частичное участие. Например, во Франции Президент Республики, председатели Национального Собрания и Сената назначают в Конституционный совет каждый по три члена

